

14471

792(47.92)

2-28

25 OCT 2010

732 (27.925)
Z-28

ՀԱՅՈՑ ՌԱՄԱՏԻԿԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1907—1908

11872



Ամփոփելով իր մէջ տեղեկութիւններ, որոնք քաղուած են Հայոց Դրամատիկական Ընկերութեան վաւերացումներից և նիւթեր, որոնք ժողովուած են նոյն ընկերութեան արձանագրութիւններից և ուրիշ ստույգ աղբիւրներից, ներկայ հրատարակութիւնը պէտք է պատկերացնի վերոյիշեալ ընկերութեան 1907/8 թատերաշրջանի գործունէութիւնը և յիշատակի Թիֆլիզի հայ թատրոնի կեանքի նոյն տարուայ մի շարք ուշադրաւ երևոյթները:


Իր տեսակի մէջ սոյն հրատարակութիւնը առաջին փորձն է:

Բացի մի յօդուածից, ուր համառօտակի շեշտուած են հայ թատրոնի ներկայ դրութիւնը և նրա հասունացած կարիքները, ընթերցողը ոչ մի ուրիշ քննադատական յօդուած չի գտնի, որովհետեւ քննադատութիւնը անհամապատասխան կլինէր ներկայ հրատարակութեան՝ իբրեւ մի տեղեկագրի:

Խմբագրութեանս կողմից շնորհակալութիւն յայտնելով այն բոլոր անձանց, որոնք աջակցեցին սոյն հրատարակութեան, թոյլ ենք տալիս մեզ յուսալու, որ Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը հնարաւորութիւն կունենայ ամեն տարի պարբերաբար լոյս ընծայելու տեղեկագիրներ, որոնք ապագայում կծառայեն իբրեւ նիւթ հայ թատրոնի և Ընկերութեան գործունէութեան պատմութեան համար:

Այս տեղեկագիրը հրատարակուած է Հայոց Դրամատիկական Ընկերութեան հաշուով, որի օգտին պէտք է ծառայէ նաև սրա վաճառումից գոյացած գումարը:

Մ. ԱՆՔԱՐ



39709-63

1538-63



ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՅ

(Չեկուցում կարդացուած յորժեխանական ներկայացմանը, յունվ. 28-ին):

Այսօր լրանում է ուսանայոց թատրոնի 50-ամեայ տարեդարձը:

Սրանից ճիշտ 15 տարի առաջ, 1893 թ. Յունուարի 28-ին, հինգշաբթի օրը, Թիֆլիզի հայ դերասանական մշտական խումբը Թիֆլիզի Արքունական թատրոնում կատարեց ուսանայոց բեմի 35-ամեայ տարեդարձը: Յորժեխանական երեկոյթի ծրագիրը շատ ճոխ էր. նրան մասնակցում էին ոչ միայն մեր բազմալեզու երկրի նշանաւոր ազգերի ներկայացուցիչները, այլ և եւրոպացիներ յանձինս իրանց՝ այդ ժամանակ Թիֆլիզում գործող դերասանների (տիկ. Մարի, Գրիզիէ, Մօնրազօն և Լասսալ. պ. պ. Ֆօրկատտի, Լասսալ և ուրիշները):

Գրականութեան, դպրոցի և հասարակական ուրիշ հիմնարկութիւնների նման, թատրոնն էլ կազմում է այն խոշոր հասարակական-կրթական գործօճներէ մէկը, որ հայ ժողովրդի կուլտուրական զարգացման շրջանում ահազին դեր է կատարել: Անվիճելի է այն փաստը, որ հայերի կուլտուրական - կրթական հիմնարկութիւններից գրեթէ առաջին տեղն է գրաւում թատրոնը, որի նպատակն է եղել միշտ ծառայել մեր ժողովրդի լայն խաւերի կուլտուրական կատարելութեան բարձր գաղափարին, բարձրացնել այդ խաւերի բարոյական մակերեսը, պատուաստելով նրանց մէջ հասարակական և անհատական մօրալի սկզբունքները: Հայկական թատերական բեմի վրայ են բարձրացել և լուծւել այդ ազգի ընտանեկան, բարոյական և սօցիալական կեանքին վերաբերող բազմապիսի հարցեր և դրանով նպաստել հասկանալու և գիտակցելու մեզ շրջապատող իրականութիւնը, առանց որի անհասկանալի կլինէր հասարակական գործունէութիւնը և մեր կեանքի բացասական երեւոյթների դէմ մղած ծանր կռիւը:

Վերջապէս հայկական թատրոնն է եղել ճշմարտութեան այն տաճարը, որտեղից հայ ժողովուրդը լսել է ճշմարտութեան բարձր գաղափարները և արտայայտիչ մեր ձգտումների, պահանջների, կարիքների և յոյսերի. կրթական այդ տաճարը, որի գոյութեան $1\frac{1}{2}$ դարն է լրանում այսօր, ներկայումս կարելի է ասել, դարձել է

հայ ժողովրդի կուլտուրական անհրաժեշտ պահանջներից մէկը: Նա ամբողջ $1\frac{1}{2}$ դար կռիւ է մը-



Գ. Մանուկեանց:

դել հայկական իրականութեան մի շարք աննպաստ պայմանների դէմ, մինչև որ կարողացել է իր կեանքը փրկել և քաղաքացիական իրաւունք ստանալ հայերի գիտակցութեան մէջ: Դրան իբրեւ ա-



Իւլիան Նապօլեօն Մանուկի:

պացոյց ծառայում է այն փաստը, որ այժմ ուսանայ թատրոնը իր բոլոր ճիւղերով հանդերձ



Թիֆլիս, սպարան ՄԳ. Մարտիտեանցի:

ունի դրամատիկական ընկերություն, թատրոնական ինքնուրույն և թատրգմանական գրականություն, թատրոն յաճախող հասարակություն, դերասանական խմբեր և նոյն իսկ թատրոնական գեղարվեստին նուիրուած զուտ-մասնագիտական թերթեր, Հայայելով որ թատրոնի գոյութեան համար անհրաժեշտ այդ պայմանները դեռ ևս չեն հասել իրանց նախանձեղի վիճակին:

Ռուսահայոց թատրոնը, թէև իր գոյութեան օրից ի վեր զգալի յառաջադիմութիւն է արել զրական զարգացման տեսակէտից, սակայն նա այսօր էլ դեռ ևս չէ հասել իր կոչման բարձրութեան և ձեռք չէ բերել նորմալ և հաստատուն վիճակ: Հայերս մինչև այժմ էլ չենք կարողացել թատրոնական գործին այնպիսի կազմակերպութիւն տալ, որպէսզի նրա գրութիւնը երերուն և անհաստատ չլինի և թատրոնական իւրաքանչիւր սէզօնի վերջում հարց չծագի այն բանի մասին, թէ արդեօք հետեւեալ տարին թատրոն կլինի՞, թէ ոչ:

Այդ տխուր իրականությունն է հաստատում Ռուսահայ թատրոնի $1\frac{1}{2}$ դարուայ գոյութեան պատմութիւնը, որի գլխաւոր մոմէնտների հետ ծանօթացնելն է կազմում մեր ներկայ զեկուցման գլխաւոր նպատակը:

Ռուսահայոց թափրոնի ծնունդն և սկզբնաւորութիւնը կազմում է ռուսահայերի ազգային այն ինքնագիտակցութեան և գրական վերածնուն-



Տէր-Գրիգորեան:

Թեան գլխաւոր արդիւնքներէից մէկը, որ տեղի ունեցաւ անցեալ դարու առաջին կիսի վերջերում:

Հրապարակի վրայ գրուեց ուսանայ թա-
րոնի հարցը: Կրթական մի ֆակտոր, որ մեր պատ-
մական կեանքի ընթացքում դեռ Տիգրան Մեծ
թագաւորի ժամանակից ունեցել է իր գոյութեան

անցեալը, զանազան ընդհատումներով, այն էլ մեր քաղաքական դրութեան աննախանձելի պայմանները շնորհիւ: Հայկական թատրոնի հարցը հայ իրականութեան կարևոր խնդիրներից մէկն է դառնում շնորհիւ համալսարանական կրթութեամբ օժտուած այն հայ երիտասարդութեան, որ Եւրոպայի և Ռուսաստանի զանազան գլխաւոր կենդրոններում իւրացրած լինելով լուսաւոր մտքեր և գաղափարներ, պարագլուխ և ղեկավար հանդիսացաւ հայկական մտքի վերածնութեան: Այդ



ԳՈՒՐԳԵՆՔԷԿԵԱՆ:

գաղափարական գործիչները, գլխավորապես Դոր-
պատի և Մոսկուայի ուսանողությունը չէր կարող
անուես անել հայկական թատրոնի գաղափարը,
որ կուլտուրական հազդին հեղինակություն և ժո-
ղովրդականություն էր վայելում այն ժամանա-
կույթի քաղաքակրթուած ազգերի մէջ:

Վերոյիշեալ հայ ինտելիգենցիան, որ ամբողջապէս նուիրուած էր իր ժողովրդի վերածնունթեան մեծ գործին և անդադրուն եռանդով աշխատում էր նրա մէջ պատուաստել Եւրոպական կուլտուրայի գլխաւոր ֆակտորները, շունչ և կենդանութիւն տուեց նաև հայ թատրոնի զարգացմանը, որին վիճակուած էր ապագայում ծաւալուելու և Եւրոպական մտքով զարգանալու մեր մէջ:

Այդ ինտելիգենցիան էր, որ հայկական թատրոնի հիմքը դրեց ռուսահայերի մէջ: 1858 թուի Յունուարի 28-ին Մօսկուայի մի խումբ ռուսաոգներ կազմակերպեցին ռուսահայկական առաջին ներկայացումը մի մասնաւոր տան մէջ և ներկայացրին Յովհաննէս Գուրգէնբէգեանի «Հաջի-Մուլէյման» վերնագրով 1 գործողութեամբ վոգելի: Այդ պիեսան կազմում է ռուսահայ թատրոնի մանկական տարիներին հայկական ամենաանմեղ լիշատակներէց մէկը:

Հայկական բեմի հիմքը դրուեց Մօսկուայում, դրա հետևանքը եղաւ նաև թատերական ինքնուրոյն գրականութեան սկզբնաւորութիւնը և զարգացումը: Եթէ հայ թատրոնի կոչումն էր արտայայտել հայկական իրականութեան աչքի ընկնող երևոյթները, հետևապէս այն ժամանակուայ գրական միջավայրը պէտք է ասպարէզ հանէր նաև այնպիսի գրողների, որոնք իրանք բնական գերուածնայնիւթերը վերցնէին ուսումնասյերի իրական կեանքից: Այդ իրական ուղղութեան առաջին ներկայացուցիչն էլի Մօսկուայի հայ ուսանողութիւնն է լինում, որի անդամներից մէկը՝ Ալադաթեանը գրում և ներկայացնում է Թիֆլիզի իրական կեանքից վերցրած «Վոյ իմ կորած յիսուն ոսկի» վերնագրով ծիծաղաշարժ փոքերիը²⁶):

Այդպիսով թատրոնը սկիզբն է առնում Մօսկուայում, առաջ են գալիս թատերական գրուածք-

խաձեռնում թեամբ, մինչև որ անցեալ դարու վաթ-
սուներկան թուականներէ վերջերում հայկական
կանոնաւոր բեմը հաստատում է Կովկասի մայ-
րաքաղաքում՝ Թիֆլիզում: Ուրեմն Թիֆլիզը հե-
տեզ Ծօսկուայի օրինակին:

Թիֆլիզի բեմի սկզբնաւորութիւնը թէև եղաւ յիսունական թուականների վերջերին, սակայն այնտեղ հայերէն կանոնաւոր ներկայացումներ սկսուել են 1859 թուին^{*)}: Ազգային բեմ ստեղծելու գաղափարը այդ թւից բաւական առաջ էր տարածուած Թիֆլիզի հայ հասարակութեան մէջ: Եւրօպացիները, ռուսները և վրացիները ղեռ շատ առաջ Կովկասի մայրաքաղաքում կազմակերպում էին ներկայացումներ, որոնք պէտք է զգալի դարձնէին նաև հայկական բեմի բացակայութիւնը:

1859 թվին Ներսիսեան Դպրոցի որդեգիրներն էլ Նոյն դպրոցի հոգաբարձութեան նիւթական




1. Ա. Սուֆյանց, 2. Յ. Աբովյանց, 3. Բժ. Մ. Տ.-Գրիգորյանց, 4. Գ. Աղիբեկյանց, 5. Պ. Պոստանց, 6. Բժ. Ռ. Նադիրյանց, 7. Պ. Վառամանց, 8. Մ. Աղաբեկյանց, Գ. Ս. Աղ. Մելիքյանց, 10. Գ. Բեժմանց, 11. Մ. Ալիբեկյանց, 12. Գ. Իզմիրյանց, 13. Յ. Կուրկիյանց, 14. Թ. Զարեկյանց, 15. Պ. Բեկկյանց, 16. Վ. Շանթարյունյանց, 17. Գ. Սուրբյանց, 18. Կ. Տ. Սեփանցյանց, 19. Մեմուրյանց, 20. Գ. Արվկյանց, 21. Բժ. Ն. Փուլիկյանց, 22. Ս. Տ. Յովնանյանց, 23. Յ. Յարուքիյանց, 24. Ս. Մասինյանց, 25. Յ. Բաթանյանց:

ներ, մեծ մասամբ մեր ուսանող ինտելիգենցիայի
անդամների հեղինակությունամբ, կազմակերպում
են զանազան ներկայացումներ ուսանողների նա-
խապատրաստմանը, եր. 106:

օժանդակութեամբ ներկայացրին «Միհրդատ» ողբերգութիւնը, որի ժամանակ աշակերտ, իսկ յե-

**) Изъ исторіи армянской сцены 84. 1892. Артистъ № 22.

տոյ դերասան Միհրդատ Ամերիկեանը ցոյց տուեց իր դերասանական փայլուն ձիրքը: Այդ ներկայացման ժամանակ գործի աջողութեանը շատ նպաստեց Միքայէլ Պատկանեանը: Կարճ ժամանակից յետոյ ներկայացրին Յ. Կարինեանի «Շուշանիկ» ողբերգութիւնը, որի կենտրոնական դերը՝ Շուշանիկ խաղում էր Ս. Տէր-Յովհաննիսեանը: Այն ժամանակուայ համար տղամարդու կնոջ դերեր խաղալը մի շատ սովորական երեոյթ էր: Թիֆլիզի առաջին հայկական ներկայացումների ժամանակ թատրոնական հասարակութեան իզական սեռը նոյն իսկ բոլորովին դատուած էր նստում արական սեռից: Թատրոնական տոմսակները տարբեր էին կանանց և տղամարդկանց բաժանմունքների համար, ձիշտ այնպէս, ինչպէս ներկայումս է Պարսկաստանի հայաբնակ մի քանի քաղաքների հայկական ներկայացումներին: Այդ նախապաշարմունքը առաջին անգամ արհամարհել է տիկին Քեթօ Արամեանը, որ իրրեւ առաջին կինը 1862 թւին հայկական բեմն է բարձրացել: Իսկ մինչև



Պեթիքաճեան:

այդ ժամանակ եղած հայկական ներկայացումներին կանացի դերերը առանց բացառութեան կա-

տարել են տղամարդիկ և այն մեծ մասամբ գեղեցիկ ու կանացի ձայն ունեցող երեխաներ:

Այդպիսի ներկայացումներ շարունակուեցին մինչև 1860 թիւը: Այդ ժամանակ Ներսիսեան դըպ-



Սուխասեան:

րոցի ուսումնաւարտ մի քանի երիտասարդներ հանգ. Պ. Պոռեանի առաջնորդութեամբ դիմում են իրանց ուսուցիչ Յ. Կարինեանին և խնդրում նրա օգնութեամբ Թիֆլիզում հայ թատրոնական բեմաստեղծելու: Կարինեանը իսկապէս գիտակցելով, որ հայկական բեմի պահանջը արդէն զգալի է դարձել, Ս. Արամելիքեանի հետ մտադրուում է մի առանձին թատրոնական դահլիճ յարմարեցնել և շարունակ հայերէն ներկայացումներ տալ: Սակայն վերոյիշեալ երիտասարդների յարաբերութիւնը շուտով լարուեց իրանց ուսուցչի հետ: Այդ ուսումնաւարտները իրանց պատգամաւորներ Պոռեանի և Զարգեղեանի միջոցով դիմեցին Թիֆլիզի հայերի մէջ այն ժամանակ մեծ ժողովրդականութիւն վայելող Գ. Իզմիրեանին, որը իր շուրջն է համախմբում հայկական թատրոնով հետաքրքրող աչքի ընկնող մարդկանց (Կարինեան, Պատկանեան, Արամելիքեան, բժ. Յովհաննիսեան, Բէհրութեան և այլն): Իշխան Թումանեանի եռանդուն աշխատութեամբ ձեռք է բերում քաղաքային թատրոնը և հայկական ներկայացման իրաւունքը: Ներկայացնում են Խորէն Գալֆայեանի «Արշակ Բ.» ողբերգութիւնը, որ սքանչելի տպաւորութիւն է թողնում հանդիսականներին բազմութեան վրայ:

Իսկ առաջին հրապարակական ներկայացումն էր Թիֆլիզում: Հայկական բեմի իրական սկզբնաւորութիւնը:

Այդ ներկայացումից յետոյ Գրիգոր Իզմիրեանի նախաձեռնութեամբ կազմուեց մի յատուկ մարմին, որի անդամների պարտականութիւնը

պէտք է լինէր թատրոնական գործի մշտական կազմակերպութեան մասին խորհելու: 12 հոգուց բաղկացած մի վարչութիւն ընտրուեց, որի մէջ մտան հետեւեալ անձինք. Գրիգոր Իզմիրեան (թատրոնի կառավարիչ կամ գերեկտօր), Մարկոս Աղաբէկեան («Կուռնկ» ամսագրի խմբագիր), բժ. Միք. Տէր-Գրիգորեան, Գարբիէլ Սուսլուկեանց, բժ. Նիկ. Փուղինեան, բժ. Ռոմանոս Նադիրեան, Աւետիք Սվեշնիկեան, Բաղդասար Խոսրովեան, բժ. Յարութիւն Յովհաննիսեան և Գէորգ Ֆրիդման: Վարչութեան պարտականութիւնն էր շարաթական մի ներկայացում կազմակերպել քաղաքային թատրոնում, խումբը կառավարել և թատրոնական բեմի պերտուարի մասին հոգալ:

Կազմակերպում է թատրոնական խումբ, որոշում են դերասանների վարձատրութիւնները, թատրոնական վարչութիւնը կառավարութեան կողմից պաշտօնական մարմին է ճանաչուում, Իշխ. Նազօն Թումանեանը Իզմիրեանի փոխարէն ընտրուում է հայ թատրոնի կառավարիչ, որը Թիֆլիսի հայ թատրոնի սկզբնաւորութեան զարգացման գործում Իզմիրեանի հետ միասին ահագին ծառայութիւն է մատուցանում:


Կարճ ժամանակից յետոյ տեղի ունեցաւ և երկրորդ ներկայացումը: Խաղում են կրկին «Ար-



Թումեան:

շակ Բ.» և բժ. Ն. Փուղինեանի «Դաւալ Դաղօ» վոդեվիլը, որ իրրեւ թատերական գրուածք բոլորովին նորութիւն էր ժամանակակից թատրոնական վերականութեան մէջ: Երկու գործողութիւնից բաղկացած այդ աշխատութիւնը մեր սովորական պատմական ողբերգութիւններից չէր, այլ իրական կեանքից հետաքրքիր տեսարաններ պատկերացնող մի աշխատութիւն:

Նոյն թուականին Թիֆլիսում կազմակերպւում է թատերասէրների մի երկրորդ խումբ Կարինեանի առաջնորդութեամբ, որի մէջ մտնում են Ամերիկեան, Սուքիասեան, Միրադեան, Ն. Մի-



Աղաճեան:

բիմանեան (հարուստ, որ օգնում էր խմբին), Յովհ. Շաղինեան, օր. Գայեանէ, Գ. Չմշկեան և այլն: Գէորգ Չմշկեանը՝ հայ թատրոնի վետերանը, իրեն նուիրելով բեմական գեղարուեստին մի նոր դարաշրջան է սկսում վերոյիշեալ թատրոնի համար: 1862 թւից մինչև վերջին տարին նա իր անձը բոլորովին նուիրել և ապագան զոհել է հայկական թատրոնի զարգացման և վերջինիս անխնայ մշակներից մէկն է հանդիսացել: Նրա ջանքերով Թիֆլիսում գործող թատերական երկու խմբերը միացան և մի խումբ կազմելով առաջ տարան հայ թատրոնի զարգացման գծուարին և պատասխանատու գործը: Կարճ ժամանակի ընթացքում Գէորգ Չմշկեանը Ամերիկեանի հետ միասին դառնում է Թիֆլիսի հայկական բեմի զարգերից մէկը, որի տաղանդաւոր խաղը թատրոն էր գրաւում հանդիսականների ահագին բազմութիւն: Նա աչքի էր ընկնում ոչ միայն իրրեւ տաղանդաւոր դերասան, այլ և միևնոյն ժամանակ կազմում էր իր ժամանակի թատրոնական կազմակերպութեան հոգին: Նրա անունը շատ սերտ կերպով կապուած է հայ թատրոնի հետ: Նա իր կին Սաթենիկի հետ միասին պատկանում է բեմական այն նշանաւոր գործիչների շարքին, է բեմական այն նշանաւոր գործիչները մինչև որոնք պահպանեցին հայ բեմի գոյութիւնը մինչև

այսօր: Չմշկեանն էր, որ շարունակ աշխատում էր թատրոնի գաղափարը ժողովրդականացնել, դերասանական խմբի մէջ նոր ոյժեր մտցնել երկու սեռից, գրում էր ինքնուրոյն պիեսներ, գիմում էր ժամանակակից հայ գրողներին իրենց գրութեանց ըստ ինչ հանել նաև հայկական

բազմաբանութիւնը իր «Նաթալա», «Օսկան Պետրովիչը էն կինքումը», «Էլի մէկ գոհ», «Քանդած օջախ», «Պէպօ», «Ամուսիններ» և ուրիշ գրութեանցով, որոնցից «Պէպօն» կազմում է ուսանայող գեղարուեստական գրականութեան ամենալավ գործը: Սուսուկեանցը հայկական բեմի



1879—80 թիֆլիսի ԽՈՒՄԵՐ.—I. կարգ. Ասլան, պ. Աղամեան, Սիրանոյե, Գ. Չմշկեան, Մ.-Աղամեան.
II. կարգ. Սաֆյատեան, Շամիրամ, Ասոյիկ, Ս. Չմշկեան, Վարդուհի.
III. կարգ. Ս. Մանգիլեան, Ամ. Մանգիլեան, Տէր-Գալսեան, Սարգսեան:

թատրոնի համար և այլն: Այդ տեսակէտից նա մեծ ազդեցութիւն է ունեցել մեր տաղանդաւոր դրամատուրգ Գ. Սուսուկեանցի վրայ, որը 1863 թիւից մտաւ Գ. Չմշկեանի կազմակերպած խմբի մէջ և որին վիճակուած էր ապագայում հայկական դրամատիկական գրականութեան կորիֆէյը դառնալ: Գ. Սուսուկեանցի առաջ գալը մեր գրականութեան մէջ թիֆլիսում նոր կազմակերպուած թատրոնական գործի զարգացմանը մեծ խթան է հանգիստանում: Այդպիսի նշանաւոր դեր կատարեց մեր թատրոնի և թատերական գրականութեան համար Սուսուկեանցը, որի «Գիշերուան սարը խեղդէ» փոքրիկ վոդեյլը առաջին անգամ ներկայացրին 1863 թուին: Այդ թուականից ի վեր Սուսուկեանցը անդադրուեց կերպով հարստացրել է մեր թատե-

համար մի արտակարգ տաղանդ էր, որ իր թատերական գրութեանցով անադին սնունդ տուեց այդ բեմին: Նրա գրական գործունէութիւնը հայ հասարակութեանը աւելի սերտ կապերով պէտք է միացնէր հայկական թատրոնի գաղափարի հետ, հայ թատրոնը աւելի պէտք է ժողովրդականացնէր այդ ժողովրդի աւելի լայն խաւերի համար և պէտք է առաջ բերէր բեմական տաղանդներ, որոնք կարողանային նրա նկարագրած բնական տիպերը աջողութեամբ ներկայացնել հայկական բեմի վրայ: Եւ իսկապէս այդ օրուանից յետոյ զգալի կերպով շատանում է այն մարդկանց թիւը, որոնք իրանց նուիրում են բեմական գեղարուեստին և կարճ ժամանակի ընթացքում դառնում են շնորհալի գերասաններ:

Վաթսուկեան թուականներից սկսուած թատրոնական շարժումը այդպիսով հետզհետէ զարգանալով և ծաւալուելով տևում է մինչև 1879 թ., որին յաջորդում է ուսանայող թատրոնի երկրորդ նշանաւոր շրջանը և տևում է մինչև 1883 թիւը: Այդ շրջանը մեր բեմի պատմութեան ծաղկած շրջանն է, որովհետև նրա վրայ դրծում են մեր բեմական ամենափայլուն աստղերը, որոնք մեծ մասամբ Կ. Պոլսից գաղթել են թիֆլիս: Դա իշխան Ամատունու փայլուն շրջանն է: Թիւրքահայ դերասանների և դերասանուհիների այդ գաղթը դէպի Կովկասի մայրաքաղաքը սկսուել էր մեր թատրոնի երկրորդ ծաղկած շրջանի հէնց առաջին տարին, այն է 1878 թ.: Թիւրքիայի մայրաքաղաքից Կովկաս են գաղթում բեմական այնպիսի հռչակաւոր տաղանդներ, ինչպիսին են Ա. դամեան, Տիկ. Հրաչեայ, Սիրանոյե, Ասոյիկ, Մանուկ-Նուարդ, Գարազանեան քոյրեր, Մանուկեան և ուրիշները, որոնք իրանց գեղարուեստական շնորհալի խաղով թովում և հմայում են թիֆլիսի հայ հասարակութեանը: Սակայն զժաղաղաբար այդ շրջանի բեմական և դրամատիքական գեղարուես-

Այդ շրջանում հայ բեմի վրայ ներկայացնում են ոչ թէ նոր հայ դրամատուրգների շնորհալի գրութեանը, այլ Եւրոպական դասական լեզուներից թարգմանութիւններ:



Սարգսեան-Արեւսեան:



Արամեան:

տի մէջ ներդաշնակութիւն չկար: Ինքնուրոյն թատերագրութիւնը ծաղկած և նախանձելի չէր, որպէսզի կարողանար վերոյիշեալ բեմական աստղերին ներկայացման համար նիւթ մատակարարել:

Հայկական թատրոնի վերածնութեան երրորդ շրջանը սկսում է ինստիտուտական թուականների երկրորդ կէսից: Այդ շրջանում մեր թատերական գործունէութեան զլխաւոր կենտրոնը դառնում է Բագու, երբ այնտեղ կազմակերպուած է հայ թատերասէրների մի ընկերութիւն, որը իրեն նպատակ է դնում հայ թատրոնական գործի հովանաւորութիւնը: Գործը աջողութեամբ առաջ տանելու համար Կ. Պոլսից հրաւիրում են մի քանի նոր ոյժեր Տիկ. Սիրանոյե, Թուրեան և ուրիշները: Թատրոնական խումբը Բագուում հաստատուեց նրա համար, որովհետև թիֆլիսի հասարակութիւնը բաւական սառել էր նրանից: Թիֆլիսը թէև հայ բեմի ստեղծողն էր եղել և թատրոնական գործին զգալի զարկ էր տուել, սակայն նա չկարողացաւ մինչև վերջը իր կանոնաւոր մշտական խումբը պահել, որովհետև հասարակութեան մէջ մի տեսակ սառնութիւն էր ընկել, որ ունէր նաև իր յարգելի պատճառները: Թիֆլիսի հայը սկսել էր լուրջ և հիմնաւոր պահանջներ անել մայրենի բեմից, բայց վերջինս չէր կարողանում այդ պահանջներին բաւարարութիւն տալ: Հովանաւորութիւն չունեցող

հայ գերասանները սկսեցին դիմել դէպի մեր գաւառական քաղաքները և այնտեղ ներկայացումներ կազմակերպել: Դերասանների այդ թափառումը գաւառների հայ աղգարնակութեան մէջ աւելի ևս



Վեոգ Բարխուրեան:

Ժողովրդականացրեց հայ թատրոնի գաղափարը: Թիֆլիսը 1886—1891 թ. բաւականաճառ էր պատահական ներկայացումներով: 1891 թ.ին Թիֆլիսում գերասան Գ. Պետրոսեանի ղեկավարութեամբ կազմուեց մի նոր խումբ ներկայացումներ տալու: Կազմուեց նաև մի առանձին վարչութիւն, որի նպատակը պէտք է լինէր խմբի պահպանութեան համար նիւթական անհրաժեշտ միջոցների հայթայթելը և մի թատրոնական կոմիտէ, որ պէտք է հոգար բեպերտուարի մասին: Այս անգամ թատրոնական ներկայացումները մեծ հասարակութիւն էին գրաւում: Դերասանների մէջ աչքի էին ընկնում իրանց շնորհալի խաղով Տիկ. Սիրանոյշ, Տէր-Դաւթեան, Պետրոսեան, Արէլեան և ուրիշները: Կազմուեց և բաւական մեծ խնամքով բեպերտուար, որի մէջ գերակշռող տեղը բռնում են եւրոպական և ռուս դրամատուրգների նշանաւոր գրուածքների թարգմանութիւնները:

Այդպէս էր մեր Կովկասեան թատրոնի վիճակը մինչև 1892 թիւը: Դրանից յետոյ հայ բեմը իր գոյութիւնը ահագին դժուարութիւններով շարունակում է: Նա վերջնական և ամուր կազմակերպութիւն չէր ստացել, Իւրաքանչիւր թատրոնական սեզոնի վերջում նրա գոյութեանը վտանգ էր սպառնում, որի առաջը ժամանակաւորապէս առնում էր հայկական բեմի սակաւաթիւ բարեկամների անկեղծ ջանքը և գործունէութիւնը: Նոր

խումբ է կազմակերպուեց 1893/1894 թատերաշրջանի համար, որ որոշ ղեկիցիտներով շարուն-



Մուրացան:

նակում է իր գոյութիւնը: Այդպէս տանել հայկական թատրոնը չէր կարելի: Հարկաւոր էր ստեղծել մի հաստատուն և մշտական ընկերութիւն, որ կարողանար թատրոնական գործին երկար ժամանակի համար կանոնաւոր ընթացք տալ, որովհետև թատրոնը վերջին ժամանակը դարձել էր հայ ժողովրդի կուլտուրական պահանջներից մէկը:



Իւլիա Մ. Թումանեան:

Ահա հէնց այդ պահանջի ծնունդն էր Թիֆլիսի գրամատիկական ընկերութիւնը, որ հիմնուեց 1902 թ. Թիֆլիզում այն ժամանակ, երբ այստեղ գրեթէ մեռել էր հայկական թատրոնը: Այդ ընկերու-

թիւնը, որի հիմնադրութեան և կազմակերպութեան մէջ ահագին դեր են կատարել մեր հասարակական եռանդուն գործիչ Գ. Սունդուկեանցը և Իշխանուհի Մարիամ Թումանեանը, իրեն համար նպատակ էր դրել թատրոնական գործը դնել ամուր հիմքերի վրայ, որպէս զի թատրոնը կարողանայ կատարել իր կրթական-կուլտուրական դերը լայն չափերով և ծառայել իր իսկական նպատակին:

Եւ այդպիսով հայ թատրոնը վաղուանից մտնում է երկրորդ յիսնամակի մէջ: Նա իր առաջին 50-ամեայ գոյութեան ընթացքում հայ ժողովրդի առաջադիմութեան գործին թէև ոչ մեծ, բայց համեստ ծառայութիւն է մատուցել: Համեստ է եղել նրա համար, որովհետև մեզ շրջապատող պատմական-քաղաքական պայմանները այնքան էլ նպաստաւոր չեն եղել թատրոնական գործի զարգացման համար:

Եթէ հայ թատրոնը մինչև այսօր չէ կարողացել լիակատար կերպով արտայայտել հայ ժո-

ղովրդի մեծամասնութեան ցանկութիւնը, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ հայկական ոչ այնքան նախանձելի իրականութիւնն է եղել, որի միջանի խոչընդոտների դէմ նա ստիպուած է եղել կռիւ մղել իր գոյութիւնը պահպանելու համար: Ամենաառաջին խոչընդոտը եղել է այն, որ Թիֆլիսի հայերը մինչև այսօր չունին իրանց սեպական թատրոնը, որի բացակայութիւնը զգալի կերպով խանգարել է հայ թատրոնական գործի կանոնաւոր զարգացումը:

Թատրոնը պէտք է դառնայ հայ ժողովրդի բոլոր խաւերի հոգատարութեան առարկան: Նա կլինի մեր ժողովրդի լաւագոյն ցանկութիւնների արտայայտիչը այն ժամանակ, երբ ժողովրդի բոլոր խաւերը եռանդուն մասնակցութեամբ կապահովեն նրա գոյութիւնը: Ահա մի գլխաւոր պայման, որից յետոյ միայն կարելի է յուսալ հայ թատրոնի լաւագոյն սպազան:

ԼԵՒՈՆ ԲԱՐՍԷՅԱՆ



Թիֆլիսի Արշիսիկական Ընկերութեան Թատրոն:

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԼՆ ՀԱՆԴԻՍԱԼՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

Յունուարի 27-ին, 1908 թ.

Ներկայ Ընդհանուր ժողովի մանրամասնութիւնները կապագրուեն հետեւեալ «Տեղեկագրի»



Պ. Աղամեան:

մէջ, երբ ժողովի արձանագրութիւնը հաստատուի Ընդհանուր ժողովի կողմից:

Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան նախագահ պ. Մ. Ջաբարը բանալով ժողովը 80-ից աւելի անդամների և 60-ից աւելի կողմնակի անձնավորութիւնների ներկայութեամբ, (մամուլի և գանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներ) առաջարկեց Ընդհանուր ժողովի պատուաւոր նախագահ ընտրել պ. Գ. Սունդուկեանցին:

Այս առաջարկութիւնը ընդունուեց միաձայն և ազմկալի ծափահարութեամբ: Բայց ընդհանուր ժողովին հրաւիրուած պ. Սունդուկեանը հիւանդութեան պատճառով անձամբ չկարողանալով ներկայ լինել, ուղարկել էր հետեւեալ նամակը, որը կարդացուեց ընդհանուր ժողովում:

Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութեանը,

Մեծապատիւ Տեառք

Ստացայ Ձեր հրաւիրանքը՝ յունվարի 27-ի Դրամատիքական Ընկերութեան արտակարգ ժողովին ներկայ լինելու:

Այդպիսի մի հրաւեր, սրանից մի քանի տարի առաջ, ինձ մեծ հաճոյք պատճառուեց զատ՝ կստիպեմ նաեւ, որ

զործնական մասնակցութիւն ունենամ Ձեր ցուցակագրած խնդիրների լուծման մէջ:

Ներկայումս, տարաբախտաբար, պիտի բաւականաւոր լոկ բարեմաղթութիւններ ուղարկելով, որովհետեւ արդէն ձեր եմ եւ մարմնով տկար:

Անկարող լինելով մերձաւոր գործակցութիւն ցոյց տալու ժողովիդ, հաւատալով պիտի լինիք, սակայն, որ ես հոգով Ձեզ հետ եմ եւ որ այն սակաւաթիւ օրերը, որոնք մնում են ինձ ապրելու, ամբողջապէս նուիրուած են եւ պիտի լինին միայն եւ միայն Հայոց թատրոնի օգտին:

Ընդունեցէք, խնդրում եմ, խորին յարգանքս հաւատարմութեամբ:

Գարրիէլ Սունդուկեանց

26 յունվարի 1908 թ.

Թիֆլիզ

Ձայների մեծամասնութեամբ ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց պ. Մ. Բալանթարը, քարտուղար պ. Գ. Լևոնեանը:

Նախագահի առաջարկութեամբ՝ Ընդհանուր ժողովը որի կանգնելով յարգեց Վեհափառ կաթողիկոս Խրիմեանի, Սմբ. Շահազիզի, Պերճ Պոչեանի, Սաթեմիկ Զմէկեանի, Քնարիկի, Աղելխանեանի և Եազոն Ամիրեանի յիշատակը:

Յետոյ Վարչութեան անդամ պ. Լ. Բաբայեանը Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչ-



Տ. Հռաչեայ:

չութեան կողմից կարճ խօսքերով ողջունեց Հայոց թատրոնի յիշմամեակը և ցոյց տալով նրա յիս-

նամեայ պատմութեան զլխաւոր կէտերը, յիշեցրեց ներկայ եղողներին այն հափազանց ծանր պայմանների պատկերը, որով յիսուն տարի գոյութիւն է ունեցել մեր մայրենի բեմը:

Ընդհանուր ժողովը ծափահարութիւններով շնորհակալութիւն յայտնեց զեկուցողին:

Վարչութեան անդամ-քարտուղար պ. Շիրինեանը յայտնեց Վարչութեան զեկուցումը՝ թատրոնի կառուցման հարցի մասին: (Այդ զեկուցումը իր յարակից մասերով ամփոփուած է մեր գրքում:) Իր զեկուցման վերջում, Վարչութիւնը առաջարկել էր ընդհանուր ժողովին ընտրել յանձնաժողով,

լեզուներից դրամատիքական գրութեան հայերէն լեզուով լաւագոյն թարգմանութեան համար:

2) Պետրոս Աղամեանի անունով կազմել ֆոնդ՝ օժանդակութիւն տալու երիտասարդ զերասաններին զնալու Ռուսաստան կամ արտասահման կատարելագործուելու համար: (Այդ ֆոնդը



Պ. Աղամեան:

կազմելու համար Վարչութիւնը իւրաքանչիւր տարի կազմակերպում է մի ներկայացում Աղամեանի անունով և զուտ մուտքը յատկացնում դրան):



Տ. Շիրինյան:

որը Վարչութեան հետ միասին մշակէր կազմակերպուած աշխատանք՝ նուիրատուութիւններ հաւաքելու, նախահաշիւ և ծրագիր կազմելու հայրն: Երկար վիճարանութիւններից յետոյ ժողովը ընդունեց Վարչութեան առաջարկը: Յանձնաժողովի անդամներ ընտրուեցին Տ.Տ. Ի. Սպենդիարեան, Վ. Ե. Մամուկեան և Պ. Պ. Գ. Կաֆեան, Ս. Սաֆրազեան և Մ. Գեորգեան:

Ընդունուեցին նաեւ Վարչութեան հետեւալ առաջարկութիւնները:

1) 100 բուր. տարեկան մրցանակ յատկացնել «յոբելեանական» անունով, ուսերէնից և օտար

Յետոյ համաձայն Վարչութեան առաջարկութեան, Հայոց թատրոնի յիշմամեակի օրը, ի նշան Հայ Դրամատիք. Ընկերութեան երախտագիտութեան,

Ընկերութեան պատուաւոր անդամներ ընդունուեցին միաձայն հայ, ռուս և վրացի գերասաններից հետեւեալները.

Հայոց բեմի գերասան Գ. Չմշկեան, Տ.Տ. Սիրանոյշ, Հրաչեայ և Գ. Տէր-Գաւթեան, Վրաց բեմի բազմաշխատ գերասան Վ. Արաշիձէ և տաղանդաւոր ռուս գերասան Ա. Ի. Իւժին-իշխան Սումբատով:

Բոլոր ընտրուած անձնաւորութիւններին նոյն օրը ուղարկուեցին հեռագիրներ՝ իրենց ընտրութեան մասին, որոնցից ստացուել են հետեւեալ պատասխանները.

Խորապէս զգացուած եմ ձեր սիրալիր ուշադրութեան համար եւ ցաւում եմ, որ չեմ կարող ձեզ հետ լինել տօնելու յիսնամեակը հայոց թատրոնի, որին զոհել եմ իմ կեանքի լաւագոյն մասը: Յոյս ունեմ, որ կունենամ դեռ եւս բաւականաչափ ոյժ, զալու եւ մասնակցելու մի ներ-

կայացման, որի նպատակը կլինի հայոց թատրոն կառուցանելու ֆօնդը:

ՀՐԱՉԵԱՅ

Հայոց Գրամատիկական Ընկերութեան սիրայօժար մտադրութիւնը անչափ զգացուած ընդունում եմ իրրեւմեծ պատիւ իմ համեստ գործունէութեան:

ՍԻՐԱՆՈՅՇ

Ձերմ շնորհակալութիւն գեղարուեստի թանկագին ընկերներին եւ Մեծայորոյ Հայոց Գրամատիկական Ընկերութեան իրենց ազդակցական ողջոյնի համար:

ԻՎԻՆ ԻՇԵ. ՍՈՒՄԲԱՏՈՎ:

Վերջում պ. Յ. Սպենդիարեանի առաջարկով Ընդհանուր Ժողովը շնորհակալութիւն յայտնեց Վարչութեան՝ նրա աշխատութեան համար. նախագահ պ. Ա. Քալանթարը շնորհ յաջորդ օրը կատարուելիք հայոց թատրոնի յիսնամեակի մասին, որից յետոյ Ժողովը փակուեց ցերեկուայ ժամը 3-ին:



Ա. Վանդեան:

ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Երկուշաբթի, Յունուարի 28-ին, 1908 թ. հայոց թատրոնի յիսնամեակի օրը կայացաւ հանդիսաւոր ներկայացում Արտիստիքական Ընկերութեան թատրոնում: Ներկայացումից դեռ երկու երեք օր առաջ տոմսակները գրեթէ բոլորը ծախուած էին, իսկ ներկայացման օրը ուղղակի միմեանց ձեռիցն էին խլում՝ օրկեստրում և օթեակներում աւելացրած աթոռները: Վերջուած տոմսակների հաշուով այդ օրը ներկայ էին հանդիսին 1300-ից աւելի անձինք: Շատերին հարկ եղաւ մերժել և 500-ից աւելի մարդիկ հեռացան թատրոնից տոմսակ չգտնելու պատճառով. թէ որքան բուռն ցանկութիւն ունէին շատերը այդ օրը թատրոնում լինել, երեւում է այն բանից, որ մի բուրլիանոց տոմսակը կրկին գնւում էին 3—5 բուրլով, իսկ մի պարոն վճարեց 10 բուրլի միմիայն իրաւունք ունենալու համար անցքերում որեւէ տեղ կանգնելու: Որպէսզի հնարաւորութիւն տրուէր ոչ հարուստ մարդկանց այդ օրը թատրոնում գտնուել, սովորական գները մի քանի տուկոսով միայն բարձրացրած էին, դրա համար էլ



Զմեկեան, Հախումեան
(«Պէպօ»)

Ներկայացումը սկսուեց ուղիղ երեկոյեան ժամը 8-ին: Ծրագիրը գիտմամբ կազմուած էր զանազան պիեսների կտորներից, որպէսզի պատկերացուէր հասարակութեան, մեր գրամատիկական ինքնուրոյն գրականութեան զարգացման ուղին: Առաջինը Յովհ. Գուրգէնրէկեանի մի գործողութեամբ վօղըվին էր, որը գրուած է նրա ուսանող եղած ժամանակ Մօսկուայում և ներկայացուել է առաջին անգամ այնտեղ էլ՝ 1858 թ. Յունուարի 28-ին: (Դա առաջին ներկայացումն է Ռուսաստանում): Տարաբախտաբար յարգելի հեղինակը, այժմ արդէն ալեգարդ, հիւանդութեան պատճառով չկարողացաւ ինքը ներկայ լինել այդ օրը թատրոնում: «Հաճի Սուլէյմանում» գերերը բաժանուած էին այսպէս. — զլխաւոր գերում հանդէս եկաւ գերասան Ա. Վրոյրը, Յակոբի գերում — բազմաշխատ գերասան Գ. Տէր-Գաւթեանը, Մարգարիտի գերում՝ մեր խմբի երիտասարդ գերասանուհի Տիկին Նանիկեանը, իսկ Սիկօ ծառայի գերում՝ սկսնակ-գերասան Մելիք-Ալլահվերդեանը:



Տ. Արտունյան
մուտքը միմիայն 1450 բուրլու հաւաւ: Ծայրէ ի ծայր լի թատրոնը լուսաւորուած a giorno բիւ-

139209-63 1528-63



«Հաճի-Սուլէյման»-ից յետոյ, վարագոյրը բացուելուց առաջ Վարչութեան անդամ Լեոն Բա-



Վարդուհի, Գ. Տէր-Գաւթեան
(«Պէպո»)

բայեանը կարգաց բեմից իր ղեկուցումը «Հայոց թատրոնի յիսնամեակի մասին», որը փոքր կրճատումներով տպագրուած է այս գրքում:

Յետոյ ներկայացուեց «Պէպո» անմահ կոմիկայի I գործողութիւնը, ուր իրենց գլխաւոր դերերում հանդէս եկան Տէր-Գաւթեան (անփոխաբնիկ Գիբո) և Տ. Վարդուհի (աննման Շուշան): Պէպոյի գերը զգացուած խաղաց դերասան Յարութիւնեանը, իսկ Կակուլու գերը յորեկանի առթիւ կատարեց փետրեան-դերասան Ամ. Մանգլիսեանը, որին հասարակութիւնը զիմաւորեց բուն ծափահարութեամբ: Կէկէլի գերը պէտք է կատարէր Տ. Մելիքեանը, բայց նրա յանկարծակի հիւանդութեան պատճառով, նրան փոխարինեց Տ. Նոնիկեանը: Միջնարարին հասարակութիւնը բեմ կանչելով «Պէպո»-ի արեղարդ հեղինակ Գ. Սունդուկեանին, աղմկալի ցոյց արեց նրան:

Պէպոյին յաջորդեց «Պատուի համար» պիեսի չորրորդ գործողութիւնը, հեղինակութիւն մեր տաղանդաւոր գրող Ալ. Շիրվանզադէի, որը պարգեւ է հայոց բեմին իր գրչի մի քանի յաջող արտադրութիւնները: Անդրէասի դերում այստեղ հանդէս եկաւ Նոյնպէս մեր բեմի փետրեաններից մէկը—գծարարաբար այժմ թողած բեմի տախտակամանները—դերասան Սաֆրազեանը, որը Նոյնպէս ցնծութեամբ ընդունուեց բազմաթիւ հասարակութեան կողմից: Մնացեալ դերերը բաժանուած էին այսպէս.—Մարգարիտ—Տ. Մայսու-

բեան, Սաղաթէլ—պ. Յարութիւնեան, Սուրէն—պ. Մամիկոնեան, Օթարեան—պ. Զարիֆեան, Բագրատ—պ. Թորոսեան և Կարինեան—պ. Ուշտունի:

Կարճ միջնաբարից յետոյ ցոյց տրուեց «Հայոց թատրոն» կենդանի շարժական պատկերը: Թատրոնի շրջող բեմը շարժման մէջ էր դրուել և հանդիսականների առաջ կանգնած էր միշտ դէմքը հասարակութեան դարձրած, ելեկտրական լուսաւորութեան ճառագայթների տակ, ձեռին քնար՝ Մելպոմենան, իսկ նրա շուրջը կենդանի դէմքերից ներկայացուցին չորս խմբակ. I Սունդուկեան և նրա պիեսի անձինքը. (Պէպո, Գիբո, Շուշան, Կակուլի, Կէկէլ և Զիւզիմով) II Աղամեան և նրա հերոսները (Լիր, Համլէտ, Քին, Ուրիէլ, Օթելլո). III գրամատուրգներ՝ Շէքսպիր, Շիլլէր, Իրսէն, Հաուպտման, Զուգերման, Մօլլիեռ. վրացի գրող Յազարէլի և IV Արծրունի, Շիրվանզադէ, Ահարոնեան և ուրիշները: Պատկերը շատ յաջող դուրս



Պ. Սամվելյան

եկաւ և հասարակութեան կողմից ուրախութեան ցոյցներ եղան: Պատկերը դրուել էր զլիսաւոր բէ-

Վրաց Դրամատ. Ընկ. կողմից շնորհաւորեց այդ Ընկերութեան Վարչութեան անդամ իշխան Ն. Դ. Էրիստովը:



Ս. Զմեկեան

Թիֆլիսի Կայսերական-երաժշտական Ընկերութեան նախագահ Կ. Մ. Ալիխանովը կարգաց հետեւալ ուղերձը:

«Тифлисское Отделение Императорскаго Русскаго Музыкальнаго Общества съ особеннымъ удовольствіемъ привѣтствуетъ родственное по культурнымъ задачамъ Армянское Драматическое Общество съ пятидесятилѣтіемъ армянскаго театра.

Тяжелые дни пришлось пережить армянской сценѣ за истекшія пятьдесятъ лѣтъ: низкій уровеньъ культурнаго развитія населенія, отсутствіе театральныхъ, либо драматическихъ школъ, далеко не повсемѣстное знаніе роднаго языка среди армянъ, — все это ставило серьезныя препятствія для развитія драматическаго театра.

Несмотря на всѣ эти неблагопріятныя условія, развитіе театра неутомимо шло впередъ. Худшее—пережито, осталось назади, въ безвозвратномъ, къ счастью, прошломъ, и въ настоящее время армянскій театръ сталъ потребностью для роднаго народа.

Театръ армянскій будетъ существовать теперь при всякихъ условіяхъ, но для полнаго его развитія и расцвѣта помимо достойныхъ служителей, которыми всегда

Ժիսսօր Մ. Զարարի ցուցմունքով և պլանով, իսկ ղեկարուստական մասը տաղանդաւոր նկարիչ Ա. Շամշինեանի:

Դրանից յետոյ սկսուեց հանդէսը: Վարագոյրը բարձրանալիս, բեմի վրայ Մելպոմենայի արձանի շուրջը—որի վրայ ծաղկահիւսերի մէջ ելեկտրական լոյսով վառուած էր «50» թանշանը—խմբուել էին պատգամաւորները և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչները: Հայոց Դրամատիքական Ընկերութեան և դերասանների կողմից ուղերձները և շնորհաւորութիւնները ընդունուած էր Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան նախագահ պ. Զարարը:

Հայոց թատրոնի յիսնամեակը ողջունեց առաջինը Թիֆլիսի քաղաքագլուխ իշխան Վ. Ն. Զէրքէզովը, որը իր ջերմ ճառով ի միջի այլոց յայտնեց, թէ ինքը հպարտանում է, որ ներկայացուցիչն է այն քաղաքի, ուր պէտք է հիմնուի հայոց թատրոն և ցանկացաւ որ հայկական թատրոնի կառուցումը շուտափոյթ զոյգութիւն ստանայ: Երկու երեք խօսքով, Վրաց դերասանների կողմից շնորհաւորեց Վրաց Դրամատիքական խմբի



Թուրեան

բաղմաշխատ դերասանուհի Տիկ. Ն. Գաբունեան-Յազարելին:

была богата армянская сцена, нужно еще постоянное мѣсто дѣйствія, нужно свое здание, свой театр.

Будемъ надѣяться, что пятидесяти, лѣтъ армянской сцены послужить импульсомъ для сооруженія своего театрального здания. И когда армянину-актеру, армянину драматургу можно будетъ съ большимъ спокойствіемъ за свою участь творить свою работу,—тогда результаты ихъ дѣятельности еще тѣснѣе сблизятъ сцену съ своимъ народомъ.

Пожелаемъ скорѣйшаго наступленія этого времени».

Այդ ուղերձը շքեղ արծաթապատ թղթապանակի մէջ էր:

Յետոյ երդուեալ հաւատարմատար Ի. Մ. ողջունեց հայոց թատրոնի յիսնամեակը Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան կողմից, իսկ Վ. Մ. Փիթոյիկը նոյն ընկերութեան սիրողների կողմից կարգաց հետեւեալ ուղերձը բաղմամբիւ ստորագրութիւններով:

«Тифлисскому Армянскому Драматическому Обществу.

Въ торжественный день юбилея полу-вѣковаго существованія армянскаго театра, неизмѣнно служившаго все это время высоко культурнымъ цѣлямъ искусства и просвѣщенія на пользу своему народу, любители Тифлисскаго Артистическаго Общества горячо привѣтствуютъ достойныхъ представителей армянскаго театра въ лицѣ Драматическаго Общества и артистовъ служителей сцены, и отъ всей души желаютъ имъ и впредь столь же плодотворно работать на пользу и процвѣтаніе объединяющаго всѣхъ насъ любимаго дѣла».

Սրտառուչ և հոգեբուխ ճառ արտասանեց ուսուցիչ ընկեր-դերասանների կողմից Կ. Օ. Շորշաչյանը, որի խօսքերը հասարակութիւնը ծածկեց երկար աղմկալի ծափահարութեամբ:

Յետոյ ողջունեցին Թիֆլիսի Ժողովարանի կողմից Մ. Ն. Աթաբեկեան, Ներսիսեան ուսումնարանի կողմից պ. Խաթալը (նա ներկայացուցիչ էր նաև «Մեղու» ընկերութեան), Ժողովրդական Համալսարանի կողմից Ի. Նակաշիճէ, «Մշակ»-ի խմբագրութեան կողմից Ալ. Բալանթարը (նա ներկայացուցիչ էր նաև Տնայնագործական Ընկերութեան), «Վառկ»-ի խմբագրութեան կողմից Լ. Նազարեան, «Тифл. Листокъ»-ի կող-

մից պ. Զըմարիտեան, «Հասկեր»-ի խմբ. կողմից Ս. Լիսիցեան, «Գեղարուեստ»-ի խմբ. կողմից Գ. Լևոնեան, «Աղբիւր-Տարազ»-ի խմբ. կողմից Տիգ. Նազարեան, Տաճկահայերի կողմից Պ. Դերձակեան, Ազգագրական Ընկ-թեան կողմից պ. Ա. Եղեկեան, Յովնանեան ուսումնարանի կողմից պ. Յակոբեան. կային նաև ներկայացուցիչներ պարսկահայերի, Շուշուայ թատրոնի և աշակերտութեան կողմից: Իրենց ճառերում այս բոլոր պատգամաւորները ջերմ կերպով ողջունեցին յիսնամեակը, որպէս կուլտուրայի և լուսաւորութեան հիմնարկութիւն և ցանկութիւն յայտնեցին Թիֆլիսում սեփական թատրոն ունենալու մտքի իրագործմանը:



Տիֆլիսի Վաթոյիկի

կարգացուցին և տրուեցին նաև հետեւեալ ուղերձները.

Ժողովրդական Զուարճութիւնների Ընկերութիւնից.

Къ общему хору привѣтствій Армянскому Драматическому Обществу съ исполнившимся сегодня пятидесятилѣтіемъ Армянскаго Театра въ Россіи, Тифлисское Общество Народныхъ Развлеченій присоединяетъ и свое скромное поздравленіе. Испытавъ на своемъ недолгомъ опытѣ, какъ трудно вести театральное дѣло безъ постоянной вполне благоустроенной сцены, Комитетъ Общества привѣтствуетъ



Տ. ՍԻՐՆՆՈՅԷ

է Թողել եւ թողնում է ծառերը տարբեր շրջանի մարդկանց վրայ, բայց մեզ՝ բանւորներին վրայ նրա ազդեցութիւնը շատ խորն է, եւ օգուտն անուրանալի։ Մենք՝ աշխատաւոր դասակարգի զաւակներս զրկուած արտօնեալ մարդկանց նիւթական առաւելութիւններից, հնարաւորութիւն չունենալով զանազան բարձրագոյն դպրոցներում լրացնել մեր մտաւոր պաշարը, գոյութեան կռուի ասպարէզ ենք մտնում թոյլ եւ անպատրաստ, բայց ահա այդտեղ, կեանքի այդ փոթորկալից կռուի կրիտիքական րոպէներին իր կրթիչ, իր ազնուացնող ազդեցութեամբ շատ ու շատ անդամ է օգնութեան հասել մեղ ծառերը, եւ մենք միշտ երախտապիտու-
թեամբ ու յարգանքով ենք վերաբերուել դէպի այդ սրբազան հաստատութիւնը... Թատրոնը մեզ աշխա-
տաւորներին համար եղել է եւ կլինի թէ՛ ստորին թէ՛ միջնակարգ եւ թէ՛ բարձրագոյն դպրոց... Բայց չնայե-
լով մեր այդ վերաբերմունքին անողոր իրականութեան այստեղ եւս իր արգիլիչ ծառն է դրել եւ մեզանից շատ քչերին է յաջողուում ներկայ տնտեսական պայ-
մաններում բաւականութեւն տալ մեր մտաւոր պահան-
ջին... օգտուել ծառերնի բարիքներից...

Զենք մեղադրում թատրոնի սպասաւորներին, նրանք էլ ընդհանրապէս մեզ նման չարքաշ աշխատաւորներ են եղել, այո՛, նրանք մեղաւոր չին, այլ այն հասարակական կարգերը, դասակարգային անհաւասարութիւնները, որոնք ժողովրդի մի մասի համար զրկանք ու տառապանք են տալիս, իսկ միւսի համար՝ վայելքներ, հաճոյքներ...

Թատրոնը իր մշակ դերասաններով եղել է այն հաստատությունը, որ բեմ, վրայ բաղմիջ անդամ պատկերացրել է կենսի այդ հակասությունները — լացի ու խինչի, ցույս ու հրճուանքի, ստորունիքի ու մարքունի, բուրժուայի ու աշխատավորի հակադիր տեսարանները...

Դա ցնցել է մոտերիբ, յուզել է սրտեր, ազնուաշքիլ է բարբեր... Եւ այսօր նա իր յիսուն տարին բոլորած կանգնած է մեր առաջ յաղթական զիրքով: Եւ նրան ողջոյն են տալիս տարբեր խաւերի տարբեր ներկայա-
ցուցիչներ:

Մեր խօսքը գրաշարների արհեստավյական մշու-
նեան անունից է...

Մենք—աշխատավորներս, այն, երաստադէտու-
թեամբ մասնակցում ենք Հայ թատրոնի այս տոնին,
ցանկանալով, որ նա՝ զոնէ ապագայում աւելի մօտե-
նայ, մատչելի դառնայ խեղճ ու կրակ ժողովրդին:
Կեցցէ՛ Հայ թատրոնը, ծաղիկ օրեր նրա ապա-
գային...

Հայոց Պրամատիկ Ընկերութեան սիրողներ
Ը Խմբից.

Ինչպէս Հայոց Թատրոնի յիսնամեայ գոյութեան

պատմութիւնից երեւում է, Հայոց թատրոնի սկզբնա-
քար դնողները եղել են մի խումբ սիրողներ:

Հայոց թատրոնի 50-ամսայ զոյւթեան ընթացքում չի տրուել մի ներկայացում, որտեղ մասնակցութիւն չունենար հայ թատերասէրը. մասնաւանդ ժողովրդական հանրամատչելի ներկայացումները, քաղաքներում եւ գաւառում, որի ամբողջ ծանրութիւնը տարել են իրենց ուսերի վրայ հայ թատերասէրները, չխնայելով իրենց թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական աջակցութիւնը:



S. Սիրանույշ

Թատրոնի սեփական ջէնր ունենալը այնքան զգալի է՛ր կարող լինել դրամատիկական եւ դիրսաանական ընկերութիւնների համար, որովհետեւ սրանց համար ամեն տեղ դուռը բաց էր, որքան սիրողներին համար, որովհետեւ սիրողները յանուն ժողովրդական հանրամատչելի ներկայացումների իրագործման, ամենահատարակ ընակարան նոյն իսկ յարմարացրել են թմբի։

Դրամատիրական ընկերութեան սիրողների խումբը շնորհաւորելով Հայ հասարակութեանը մայրենի բեմի՝ յիմնաւեակը եւ սեփական թատրոն ունենալը ամբողջ հայ հասարակութեան հետ միասին համարելով մայրենի բեմի զարգացման ամենալլխաւոր պայմաններից մինը, այսօր բերել է իր քրտնաթոր կոպէկ առ կոպէկ հաւաքած միջոցներից մի համեատ գումար—100 ռուբլի, իբրեւ հայոց թատրոնի սեփական շէնքի առաջին հիմնաքար: Ինչպէս յիշուեւ տարի սրանից առաջ սիրողների սկսած փոքրիկ հիմնաքար «Հաջի Սուլէյման»-ը ստեղծեց «Պէյօ»-ների ու «Հաւէլտ»-ներ յանձինս Ալամանի, համոզուած ենք սիրողներս, որ այս թէեւ փոքրիկ բայց անկեղծ երիտասարդական սրտերից բղխած հիմնաքար 100 ռ. օրինակ կգառնայ աւելի մեծերին, շարեւու սրա վրայ աւելի խոշոր քարեր, որոնցից կը գոյաման պատնէշներ եւ պատնէշներից հոյակապ բեմական տաճար:

Բոլոր շնորհաւորութիւններից յետոյ ոսերէն

Լեզուով շնորհակալութիւն յայտնեց Դրամ. Ընկ. Վարչութեան կողմից Վարչութեան անդամ Ալ. Իվ. Խատիսեանը, ասելով հետեւեալը.

Отъ имени Армянскаго Драматическаго О-ва приносимъ глубокую благодарность всѣмъ учреждениямъ и лицамъ, почтившимъ сегодняшний праздникъ словомъ сочувствія и теплыхъ пожеланій. Особенно горячую благодарность мы приносимъ тѣмъ, кто привѣтствовалъ юбилей театра на русскомъ и грузинскомъ языкахъ. Конечно не намъ, скромнымъ случайнымъ представителямъ Драматическаго О-ва, слѣдовало бы отвѣчать на Ваши блестящія и горячія рѣчи, — слова отвѣта должны были бы произнести тѣ самые сотни дѣятелей сценическаго искусства армянъ, которые разсѣяны по далекимъ городамъ и селамъ... Но ихъ сейчасъ нѣтъ въ этой залѣ. И если мы приняли на себя смѣлость отвѣтить Вамъ, то только потому, что мы глубоко увѣрены въ томъ, что наши слова являются отзвуками ихъ мыслей, чувствъ и идеаловъ... Мы вмѣстѣ съ ними ясно чувствуемъ, что Вы,—друзья и братья наши по любимому искусству,—также близки и дороги и имъ, какъ и намъ, вѣдь мы вмѣстѣ съ ними, какъ часовые, стоимъ у храма Музы,—и зорко слѣдимъ за тѣмъ, чтобы никто не дотронулся до нея нечистой рукой фарисея или низкаго сребрелюбца. Сегодня мы удостоились высокой чести стоять на часахъ у храма нашей Музы,—а завтра тѣ,—сидящія тамъ въ театрѣ,—внизу и на верхнихъ скамьяхъ у самой крыши. Она, наша Муза,—она впервые спустилась къ намъ съ небесъ пятьдесятъ лѣтъ назадъ, — еле согрѣтая холодными Музами сѣвера,—и сошла одѣтая не въ парчу и бархатъ,—а въ рубища и лох-

моя...—и долго стояла она сиротливо и убого, ожидая тепла, ласки и привѣта. Часто холодная и голодная—она не унижалась передъ сильными міра сего, не ласкала низменные чувства человѣка, не одѣвалась въ мишуру и показные блестящія,—нѣтъ!,—она неустанно твердила объ униженныхъ и обиженныхъ, она звала на смертный бой съ неправдой и угнетеніемъ, и мы всѣ, усталые и измученные жизненной борьбой,—шли слушать ее и она подымала насъ, указывала новые пути для жизненной борьбы. Не на пышной, богато-убранной колесницѣ шествовали ея жрецы, не въ дубовые, тесанные ворота направляли они свой путь,—а тернистой, трудной, пѣшей дорогой шли они неся свой давящій, но благородный крестъ... Но они были не одни: они шли съ вами рука объ руку, товарищи русскіе и грузины: Вы вмѣстѣ холодали, вмѣстѣ голодали,—вмѣстѣ плакали слезами пролетарія, вмѣстѣ призывали на смертный бой съ темными силами міра... Позвольте же сегодня горячо пожать Вамъ руки,—талантливая Габунія и Вамъ, талантливый Шорштейнъ. Если не мечта, не золотой сонъ—единеніе и братство людей,—то что же какъ не искусство, призывающее людей къ однимъ и тѣмъ же идеаламъ на разныхъ языкахъ—является одно изъ первыхъ ласточекъ этого далекаго, но чуднаго будущаго? Такъ спасибо же, горячее спасибо Вамъ,—братья и товарищи по общему дѣлу!..

Իսկ զերասանների կողմից հայերէն լեզուով
շնորհակալութիւն յայտնեց Ա. Յարութիւնեանը:

Այսպիսով վերջացաւ հանդիսաւոր հերկայա-
ցումը գիշերուայ ժամը 2-ին:

Այդ օրը Վարչութեան անունով ստացուել էն նաև բազմաթիւ հեռագիրներ և նամակներ:



ՅԱՐԳԱՆՔ ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 8-ին, 1908 թ. Արտիստիքական Ընկերութեան թատրոնում Հայ դերասանական ընկերակցութիւնը առաջին անգամ ներկայացրեց հայոց թատրոնի փառք ու պարծանք, ալեգարդ դրամատուրգ Գ. Սունդուկեանի «Բաղնիսի բոխչան»:

Այդ հանգամանքը առիթ տուեց հայ հասարակութեան, Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան և դերասաններին մի անգամ ևս արտայայտել հեղինակին խորին յարգանք և երախտագիտական զգացմունք: Առաջին գործողութեան միջնադրին, հասարակութիւնը բեմ

եկան բոլոր դերասանները և Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութիւնը՝ ամբողջ կազմով: Վարչութեան նախագահ պ. Զաքարը Հայոց Դրամատիքական Ընկերութեան կողմից հետևեալ ուղերձը ներկայացրեց Գ. Սունդուկեանին:

«Մեծարգոյ պարոն Գաբրիէլ Սունդուկեան! այսօր հայկական բեմի պատմութեան էջերը կրկին զարդարւում են Գ. Սունդուկեանի պատկանելի անունով: Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութիւնը, արձագանք տալով հասարակութեան բուռն զգացումներին և թարգման հանդիսանալով Հայ. Դրամ. Ընկ. կողմից, ջերմ ողջու-

(«Հայ բեմի պարծանք Գ. Սունդուկեանին Հայ դերասանական ընկերակցութիւնից» մակագրութեամբ), ասաց մօտաւորապէս հետևեալը:

«Ազգի ուրախ Գաբրիէլ ջան! Ահա երեք տասնեակ տարիներից աւելի է, ինչ Ձեր թունոտ և միևնոյն ժամանակ կենդանարար հումորով մըտրակեցիք մեր հասարակական ախտերը և գեղարւեստագէտի վարպետութեամբ երևան հանեցիք մեր բուրժուա դաստիարակի ոսկեգոծ դիմակը: Դուք առաջինն էիք, որ մայրենի բեմից պաշտպան հանդիսացաք բոլոր կեղեքուածներին, տանջուածներին ու շահագործուողներին և լպիրշ հարուստ ու տղրուկ աղա Արութին Զիմզիմովի երեսին շարտեցիք ազնիւ ու շիտակ Պէպոյի բերանով՝ արևի պէս պարզ ճշմարտութիւնը, — «էս օսկէ պատիւը վուր շինիլ իս, սւմ փուղով. միզ պէս հազարներին թախիլ իս գանա, քարն ու կիրը միր արնով իս շաղախի դանա...»:

Դուք, իբրև հմուտ ու կարող բժիշկ, մեր

ընտանեկան բարքն ու վարքը, նիստն ու կացը ենթարկեցիք ձեր կենսատու օպերացիային և ցոյց տուիք մեր հասարակութեան բոլոր փտած ու նեխւած նախապաշարումները և դրատեցիք այն ամենը, ինչ որ բարի է, գեղեցիկ և ճշմարիտ:

Հայ դերասանները առանձին հաճոյքով են ներկայացնում Ձեր պիէսները, որովհետև ամեն քայլափոխում տեսնում է կենդանի տիպեր, որ դուք այնպիսի տաղանդով կենդանացրել էք Ձեր գեղեցիկ գրաւորներում, բոլորի փոխարէն և ոչ մի կոպէկով չէք վարձատրուել...:

Հայ Դերասանական Ընկերակցութիւնը շատ լաւ զգալով Ձեր մատուցած ահագին ծառայութիւնը մայրենի բեմին, այսօր որպէս իր խորին յարգանքի առհաստիցեայ ծածկում է Ձեր ալեգարդ ու քրտնաթոր գլուխը այս արծաթեայ դափնեայ պսակով՝ «կեցցէ մեր բեմի անզուգական դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանցը երկար երկար տարիներ»:

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ա Բ Ե Լ Ե Ա Ն

XXV

1907 թ. դեկտեմբերի 17-ին տօնուեց մեր բեմի լաւագոյն ոյժերից մէկի՝ Յովհաննէս Արելեանի գործունէութեան քսանհինգամեակը:

Արելեանը ծնուել է Շամախում, 1865 թ. հոկտեմբեր 23-ին:

Հայրը՝ Յարութիւն ապէրը՝ ստիպուած յաճախ բացակայելու քաղաքից, իր առևտրական գործերով, նրա երեխաները մնում էին մօր՝ Մարիամ բաջիի խնամքի տակ:

Մարիամ բաջին պատկանում էր ընտանեկան այն շառաւիղին, որը տուել է մեր գրականութեան այնպիսի ոյժեր, ինչպէս Լէօն (Առաքել Բաբախանեան) և Շիրվանդադէն (Ալէքսանդր Մովսիսեան):

Մարիամ բաջին էր մտածում դաւանների կրթութեան մասին: Մեծ որդիքը դրել էր ծխական դպրոց, իսկ փոքրիկ Յովհաննէսին յանձնել յայտնի Հաքեալ վարժապետի դաստիարակութեան: Հաքեալի ուսումնարանում փոքրիկ Յովհան-

նէսը երկար չմնաց, սակայն, նա փոխադրուեց ծխական դպրոց: Բայց երբ տեղի ունեցաւ Շամախու 1872 թ. մեծ երկրաշարժը, և ծնողները տեղափոխուեցին Բագու, Յովհաննէսը սկսեց յաճախել քաղաքի ծխական դպրոցը, որի շրջանը 1876 թ. աւարտելով մտաւ Բագուի բէալական ուսումնարանը:

Յովհաննէսը չէ կարողանում աւարտել, սակայն, բէալական դպրոցի շրջանը, մի դէպքի հետևանքով, ե-րդ դասարանի աշակերտ եղած ժամանակ մի ընդհարում է ունենում գերմաներէնի ուսուցչի հետ:

Արելեանի համար՝ այդ բոլորից սկսած՝ փախոււմ է դպրոցական կեանքի շրջանը: Միջոցների սղութեան պատճառով նա անկարող է լինում շարունակել ուսումը:

Ահա այն ժամանակ, երբ այլևս անկարող էր շարունակել իր ուսումը բէալական դպրոցում, նա դիմում է յայտնի ուսու դերասան Ա. Գոնչա-



Ա. Յարութիւնեան, Վ. Արաբիձէ, Մ. Զաքար, Գ. Սունդուկեան, Յ. Զարիֆեան, Ալ. Արելեան:

կանչելով Սունդուկեանին աղմկալի՝ երկար ժամանակ չզաղարող ծափահարութեամբ, ողջունեցին նրան և հասարակութիւնից շատերը տեղերից բարձրանալով յարգանք ցոյց տւին թանկագին դրամատուրգին: Նրա հետ միասին բեմ դուրս

նում է իր պատուաւոր անդամին, գոչելով՝ «կեցցէ Գաբրիէլ Սունդուկեանը, մեր բեմի պարծանքը»:

Ապա դերասան Ա. Յարութիւնեանը, մատուցանելով դերասանական խմբի կողմից Գ. Սունդուկեանին նրա նկարը արծաթեայ պսակի մէջ

րովին, որը այդ միջոցին խումբ էր պահում Բագու, Թաղիկի թատրոնում, որպէսզի իրան մի որեէ պաշտօն տայ: Ա. Գոնչարովը, վերին աստիճանի բարի ու դիւրագգած մարդ, չկամենալով պատանու ոգևորութիւնը վերաւորել, ընդունում է նրան իր խմբի մէջ: Արեւելեանը շատ կարճ ժամանակամիջոցում դառնում է Գոնչարովի օգնականը՝ տնտեսական գործերում, ինչպէս և իբրև սցենարիստ, դեկորատոր և դերասան:

1886 թ. մայիսին՝ Արեւելեանը Թիֆլիսում մտնում է Սարկիս-Յօսէփայի խմբի մէջ և խաղում նրա հետ:



Արեւելեան

Այդտեղ էր և՛ օպերետային յայտնի դերասան Բիազի: Խաղում են և՛ դրամա, և՛ օպերետտա, որոնց հաւասարապէս մասնակցում է Արեւելեանը: Այդ ժամանակները երկար ու ծանր քնից զարթնում է Թիֆլիսի Ակումբը, խումբ է կազմում, հրաւիրում Ազամեանին:

Այդ խմբի մէջ ընդունում են Արեւելեանին: Հէնց առաջին ներկայացումից նա գրաւում է հասարակութեան ուշադրութիւնը, խաղալով «Արքայ լիք»-ում Էդգար Դյուստերի դերը:

Բայց 1887 թ. Ակումբը նորից փակում է և

հայ դերասանները նորից ցրւում են այս ու այն կողմը և Արեւելեանը գալիս է Բագու:

Արեւելեանը երկար չէ մնում, սակայն, հայ դերասանի կոչումի մէջ: Նա դարձեալ վերադառնում է, իհարկէ աւամայ, միայն անողորմ անհրաժեշտութեան առաջ խոնարհելով, դէպի ուսսաց բեմը:

1887—1888 թ. Արեւելեանը խաղում է Բագուում, Սօկոլովսկու խմբի հետ, իսկ 1888—1889 թ. սեզօնին պահում է ինքը... հայոց խումբ: Սակայն նիւթական մեծ ֆեյս կրելով՝ ստիպւում է թողնել անտրպրենսթիւնը և 1889 թ. մեկնում է Մօսկվայ, ուր 4 ամիս, համարեայ ամեն օր յաճախում է թատրոնները և նուիրւում թատերական գրականութեան ուսումնասիրութեանը:

1891 թ.ից սկսում է Արեւելեանի ամենահռանդուն գործունէութիւնը:

1892—1893 թ.ականին, Թիֆլիզի սեզօնից յետոյ, Արեւելեանը նորից դառնում է անտրպրենսթիւն և իր խմբով գնում է Բագու, Անդրկասպեան երկիրը, Աստրախան և Ղզլար:

1894—95 սեզօնին խաղում է թէ Թիֆլիսում և թէ այցելում, մի խմբի հետ, գաւառները:

1895—1896 թ. նա էլի կազմում է իր խումբը և ճանապարհորդում Բագու, Հիւսիսային Կովկաս, Նախիջևան, Մօսկուայ և Պետերբուրգ: Մօսկուայում նրան թոյլ չեն տալիս խաղալու, իսկ Պետերբուրգում տալիս է երկու ներկայացում:

1897 թ.ին էլի մի մեծ շրջան է կատարում դէպի Հիւսիսային Կովկաս և յետոյ Բագու: Արեւելեանը չորս հինգ սեզօն մասնակցում է Բագուի խմբին, իսկ սեզօնից յետոյ, ընկերական խումբ կազմած՝ շրջում է գաւառները:

Այնուհետև ծնունդ է առնում Հայոց Դրամատիքական Ընկերութիւնը:

Արեւելեանը 5 տարի շարունակ մասնակցում է և իբրև դերասան, և իբրև ընթիստեօր այդ ընկերութեան պահած խմբերին: Թատերական սեզօններից դուրս նա այցելում է գաւառական քաղաքներն ու մերթ ընդ մերթ գիւղերը:

Արեւելեանը աշխատել է իր տաղանդը, դերասանական հասկացողութիւնը հարստացնել և ընդլայնել յայտնի դերասանների խաղերի ուսումնասիրութեամբ: Այդ նպատակով՝ 1899 թ. նա այցելել է Բեռլին, Վիէննա, Պարիզ, Լօնդօն և ուրիշ նշանաւոր մայրաքաղաքներ:

Արեւելեանը, բացի Թիֆլիսից և Բագուից, ուր խաղացել է մշտական խմբերի հետ, թատերական պոյուսներ է կատարել հետեւեալ քաղաքներում. Դերբենդ, Պետրօվսկ, Գրօզնիյ, Պետաիգօրսկ, Կիւ-

լափօսկ, Եկատերինօգրա, Նոր-Նախիջևան, Ղզլար, Մօղղօկ, Աստրախան, Արմաւիր, Վլադիկաւկաս, Ճարիցին, Պետերբուրգ, Պարիզ (մի երեկոյ-թում), Լենքորան, Կրասնավօսկ, Ղզլարվատ, Ասխաբադ, Մերվ, Սամարղանդ, Տաշկենտ, Գանձակ, Դիլիշան, Բօրժօմ, Սինախ, Բաթում, Ախալցխա, Ղարաքիլիսա, Երևան, Ալէքսանդրապօլ, Շուշի, Նուխի, Զաքաթալա, Մանգլիս և այլն:

Նա երևացել է հետեւեալ ղեկավար դերերում. 1) Նեզնամով՝ «Անմեղ մեղաւորներ», 2) Էդգար՝ «Արքայ Լիք», 3) Բոքերտ՝ «Պատիւ», 4) Պէպօ՝ «Պէպօ», 5) Միքայէլ՝ «Էլի մէկ զոհ», 6) Վինկեման՝ «Թիթեոսների կոիւ», 7) Հենրիխ՝ «Սոքրատու զանգ», 8) Օթելլօ՝ «Օթելլօ», 9) Պետրուչիօ՝ «Անտանի սանձահարումը», 10) Փրանչեսկօ՝ «Բարեկամներ», 11) Փերդինանդ՝ «Սէր և խաղաւանք», 12) Կարլ Մօօր՝ «Աւազակներ», 13) Շտօկման՝ «Իօկտօր Շտօկման», 14) Օսկալը՝ «Ուրուականներ», 15) Սիհրան՝ «Եւգենէ», 16) Անդրէաս՝ «Պատիւ համար», 17) Վանիշին, Կոնստանդին և Ալէքսէյ՝ «Վանիշինի զաւակներ», 18) Կօրրուդօ՝ «Ոճրագործի ընտանիք», 19) Վաուակ՝ «Մեծն Վարդան», 20) Ասլան՝ «Ասլան քալասի», 21) Ասլան՝ «Արցունքի հովիտը», 22) Վահրամ՝ «Ճամբուն վրայ», 23) Բաուպիլիսով՝ «Կրիչինսկու հարսանիքը», 24) Դօն-Քիշոտ՝ «Դօն-Քիշոտ», 25) Կարլ՝ «Անագին չեն ծնւում», 26) Կոմս Բիգօօր՝ «Հայրենիք», 27) Յակոբ՝ «Մարտի ճրագներ», 28) Սիլիճ՝ «Միլիճի հարսանիքը», 29) Վախմիստր Փօլզարդ՝ «Երեկոյան շփոթ», 30) Շվարցէ՝ «Հայրենական տուն» և ուրիշ դերերում: Հայկական պիեսների մէջ նա կատարել է միշտ հերոսների դերերը:

Դեկտեմբերի 17-ին Արտիստիքական Ընկերութեան թատրոնում Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուեց հանդիսաւոր յօրեկեանական ներկայացում: Նախքան ներկայացումը, Վարչութիւնը երկու անգամ ժողով կազմեց, ուր հրաւիրւած էին հայ հասարակութեան զանազան զասակարգերի և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչները: Այս ժողովներում ծրագիր մշակուեց յօրեկեանի մասին և ընտրուեց առանձին յօրեկեանական յանձնաժողով, որը և իր վերայ վերցրեց յօրեկեանի կազմակերպութեան ծանր և բազմազան հոգսերը, որով և յանձնաժողովի եռանդուն գործունէութիւնը և նախաձեռնողի վերաբերմունքը դէպի իրեն յանձնուած գործը արժանի

են խորին շնորհակալութեան: Յանձնաժողովի կազմը հետեւեալն էր. Գ. Գ. Կաֆեան (նախագահ), Լ. Ղորղանեան (քարտուղար), Ա. Մելիք-Ազարեան, Տ. Զաւէն, Տիկին Վ. Ե. Մամուլեան, Ի. Մ. Սունդուկեան, Գ. Ս. Սօլամիրեան և Ն. Պ. Մակարեան: Յանձնաժողովին մասնակցում էին նաև Լ. Բաբայան (որպէս Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան ներկայացուցիչ), Ա. Յարութեանեան (Հայ Դերասանական Ընկերակցու-



Արեւելեան

թեան լիազօր) և Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան մի քանի անդամները:

Ներկայացման ծրագիրը հետեւեալն էր.

1. Ուրուականներ, դրամա Իրսէնի III գործ.
 2. Արցունքի հովիտ, դրամա Ա. Ահարոնեանի I գործողութիւն.
 3. Կրիչինսկու հարսանիքը, կօմեդիա Սուխօ-Կաբլիշի II գործողութիւն:
- Յօրեկեարը բեմ դուրս եկաւ հետեւեալ դերերում.

«Ուրուականներ»—Օսկալը, «Արցունքի հովիտ»—Ասլան, «Կրիչինսկու հարսանիք»—Բաուպիլիսով:

III և IV գործողութիւնների միջնաբարին կայացաւ յօրեկարի հանդէսը: Բեմի վրայ հաւաքուել էին զանազան հաստատութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչները: Առաջինը

Հնորհաւորեց յօրելեարին Հայոց Դրամատիքական Ընկերութեան պատուաւոր անդամ Դարբիէլ Ն. Սունդուկեանը, որը նուիրեց Արեւելեան իր հեղինակութիւնները: Յետոյ Հայոց Դրամատիքական Ընկերութեան անունից, Վարչութեան նախագահ Մ. Զաքարը կարգաց և ներկայացրեց Արեւելեանին հետեւեալ ուղերձը:

Յարգելի Արեւելեան,

Մտալ ու դժուրակ եղաւ հայ ժողովրդի ճակատագիրը վերջին միջանի տասնեակ տարիներում: Նրա ընտիր դաւալները որքան ճիգ, որքան եռանդ թափեցին մի կողմից դիմագրաւելու համար հայրենի շէնքի հիմունքը կրծող չարիքը և միւս կողմից յազուրդ տալու համար ժողովրդական մասսաների հոգում զարթնած յառաջադիմութեան և լուսաւորութեան վառ իղձերին:

Դպրոցը՝ լուսաւորութեան այս լաւագոյն ու բոցավառ ջանք, անիրաւ եռանդով գոցուած և մայրենի խօսքը ամեն տեղ բռնի կերպով համր էր կտրած: Ո՞վ կարող է սակայն գարնանային հողմերի գեղեցիկ թափը սանձել, որ զօրութիւնը կարող է պատուար հանել ժողովրդների զարթնող գիտակցութեան յեղեղուող ծովի դէմ: Ազգերի հոգու մէջ եռացող հզօր ու վսեմ իղձերի, լուսաւոր տենչանքների ծարաւը՝ որքան կիզիչ է, նոյնքան բեղմնաւոր, որքան ուժգին՝ նոյնքան ստեղծագործող: Եւ կեանքը այդ հոյակապ ժամերում, ինքնին դուրս է մղում իր հարուստ ծոցից հասարակական նոր կառուցուածքը դարձնող սքանչելի վարպետներ, լուսաւորութեան հզօր մարտիկներ:

Թանկագին Արեւելեան, 25 տարի շարունակ հայ ժողովրդի բարոյական և մտաւոր շէնքի վարպետներից մէկն եղաք դուք, լոյսի և գեղեցիկ աննկուն մարտիկ, փառք ձեզ: Դուք պայքարեցիք մեր հայրենի գեղեցիկ, կենդանի և վճիռ լեզուի համար, դուք ձեր ուժեղ տաղանդով դուրս բաշէցիք խաւարից հալածական ու դժբախտ, բայց հզօր ու ազնիւ հոգիները, դուք աշխարհին ցոյց տուիք գաղափարի հերոսներին և պարտքի նախադասներին հրաւիրելով չընկճուել բախտի հաւրուածների տակ և ունայն ու սնափառ աշխարհի զայթակղութիւնները վանել: Օթէլլօ՝ ազնիւ մաւրը, Շտոկման՝ պարտքի մարդը, դժբախտ Վանիւշինը, Լիբը՝ հպարտ արքան և նրանց հետ մի ամբողջ կաճառ, հզօր և ուժեղ հոգիներ իրենց գեղարուեստական կատարելութեամբ մեր աչքի առաջից անցան կենդանի ցաւ ու տանջանքով, իրենց յոյզերով ու յոյսերով, իրենց լաց ու արցունքով և իրենց տրագիկական ցնցող վախճան

նով: Դուք տարաք այդ արուեստը դէպի խաւար ու տառապող ժողովուրդը: Եւ այժմ չկայ խուլ գաւառներում աշխատանքի մի մարդ, մի արհեստաւոր, մի բանուոր, որ չճանաչէր գեղեցիկ արուեստի վարպետ Արեւելեանին: Եւ ոչ այստեղ՝ այս շրջեղ զահլիճում պիտի տեղի ունենայ ձեր սխրագործութեան փառաբանումը, նրա իսկական արժէքը պէտք է փնտռել աշակերտի հոգում և արհեստաւորի գործանոցում, գաւառացու խրճիթում, բոլոր այն տեղերում, ուր քաղաքակրթութեան լոյսը և նոր խօսքն է թափանցել:

Դուք անխոնջ ու աննկուն հնչեցրիք այդ նոր



Շիրվանզադէ

խօսքերը ամենախեղճ, ամենակորած անկիւններում:

Եւ եթէ վիճակուած է հայ ժողովրդին աշխարհի փոթորիկների միջից տանել իր ազգային կուլտուրան, լեզուն և այն բոլորը, ինչ ազգային հոգու անկապտելի հարստութիւնն է կազմում և մինք չենք կասկածում, որ նա կտանի, ապա վըստահ կարող ենք ասել, որ այդ ազգային կուլտուրական հարստութեան համարձակ ու հպարտ պաշտպանների մէջ դուք կընէք ընդմիշտ պատուաւոր տեղերից մէկը:

Եւ թող հայ ժողովրդի բոլոր լուսաւոր և զգայուն սրտերի ջերմ սէրը դարձեալ երկար տա-

րիներ ձեզ եռանդ ներշնչի և թող գեղեցիկ ու կատարուած պարտքի գիտակցութիւնը ազատութեան օրերի այս մեծ և հոգեպարար արշալոյսին արժանի հատուցումն լինի ձեր տաղանդին, որ գեղարուեստի տաճարում միշտ հանդէս եկաւ իր հզօր փայլով, իր կենդանութեամբ և անարուեստ զգացմունքի հմայքով:

Ի դիմաց Հայ. Դրամ. Ընկ. Վարչութեան
Նախագահ Մ. ԶԱԿԱՐ

Անդամներ՝ Ռ. Յովնանիսեան, Ա. Խաչիսեան, Գ. Յուրիսեան, Մ. Համբարձումեան, Լ. Բաբայեան, Կ. Շիրինեան, Լ. Արաբեկեան:

լեանական յանձնաժողովը ամբողջ կազմով, Վրաց դրամատիքական խումբը. Գարունի-Յագարելի, Թասօ Արաշիձէ, Վ. Արաշիձէ, Կ. Կիպիանի (նուիրեցին արծաթեայ պսակ), Ռուսաց Դրամատիքական խումբը յանձին Շօրշտայնի, Արտիստիքական Ընկերութեան սիրողները, Հայոց Դրամատիքական Ընկերութեան սիրողները, Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը, Մեղու Ընկերութիւնը, Արտիստիքական Ընկերութիւնը, Թիֆլիսի ժողովարանը, ժողովրդական Զուարճութիւնների Ընկերութիւնը, Երաժշտական Ընկերութիւնը, մուլի ներկայացուցիչներ. Յուշարար, Տարազ,



ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԸ 1907/8 Թ.

- I. Մ.-Ալավերդեան, Զարաբեան, Զարար (Հ. Գ. Ը. Վարչ. նախագահ), Յամբիկ, Միրզայեան, Ծուրիսեան, Տիրացեան.
- II. Մամիկոնեան, Յարութիսեան, Վարդուհի, Մայսուրեան, Տէր-Դարբեան, Մելիքեան, Վոյր.
- III. Ռոսաւի. Զամուկեան, Զարիֆեան, Արաֆ, Դիմախեան, Նունիկեան, Թորոսեան.


Հայոց Դրամատիքական Ընկերութիւնը նուիրեց նաեւ արծաթեայ սերվիդ և Վարչութեան անդամներն էլ առանձին. (գրելու արծաթեայ պարագաներ): Յետոյ Հնորհաւորեցին և պսակներ, նուէրներ և ուղերձներ տուին յօրելեարին հետեւեալ պատգամաւորները և ներկայացուցիչները. Յօրե-

Սաթաբալա, Գեղարուեստ, Ներսիսեան ուսումնարանը, Վաճառականական ուսումնարանը, Գեղարուեստական կուրսերի աշակերտները, գիմնազիայի աշակերտները, Ալեքսանդրապոլի հասարակութիւնը, Թիֆլիսի դրամատիքական կուրսերը և այլն...

Ստացուած էր 125-ից աւելի հեռագրներ, ի միջի այլոց հետեւեալները. Ճեմարանից, Ալէքսանդրապոլի ժողովրդական տան վարչութիւնից, Բագուի թատրոնական սէկցիայից, Արարատի խմբագրութիւնից, Բագուի Ռուսաց խմբից, Չիատուրի Վրաց Դրամատիքական Ընկերութիւնից,

Մոսկուայի ռուսաւորութիւնից, Միւնխէնի ռուսաւորութիւնից և գաղութից, Վիեննայի Հանդէս խմբագրութիւնից, բազմաթիւ քաղաքների սիրողները խմբերից և այլն և այլն...

Եւ բազմաթիւ նամակներ, շնորհաւորութիւններ և այլն...



ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՆՑԵԱԼԸ

Հայ թատրոնի յիսնամեայ յօրելեանը առիթ է ներկայացնում նայելու դէպի մեր հեռաւոր անցեալը. նորութիւն էր արդեօք արուեստի այս թագ ու պսակը մեր մէջ, թէ մեր յեղեղով և երկարատե պատմական կեանքում ունեցել ենք և՛ այլ անգամ ու այլ ժամանակներում թատրոններ:

Ինչպէս ամեն դէպքում, այս անգամ էլ մեր աչքերն ուղղուած են Մեծն Տիգրանի ժամանակները, որ մրցման մէջ էր ուզում մտնել Հռոմի հետ ոչ միայն իրրեւ աշխարհակալ, այլ նաեւ իրրեւ քաղաքակրթիչ և վերաստեղծող յունական արուեստի հայոց մէջ... Յայտնի է մոգական հարուածով նրա ստեղծած մայրաքաղաքի, Տիգրանակերտի, փառահեղ, թէպէտ կարճատե ու տխուր պատմութիւնը: Պլուտարքի վկայութեամբ Լուկուլլոսը Տիգրանակերտն առնելիս, այնտեղ գտաւ յոյն դերասանական խումբ:

Տիգրանի պալատն իսկ, շնորհիւ Կլէոպատրա թագուհու, յունական էր կիսով չափ. յոյն անուանի հետնորդներ ու հեղինակներ այնտեղ հիւրընկալութիւն և մեկենաս էին գտնում յանձին թագաւորի և թագուհու...

Մետրոդորս սկեպտացի հետորդը, որ արհամարհանքով մերժել էր Սելևկեան արքունիքի հրաւերը, Տիգրանի հրաւերն ընդունելով, հայ արքունիքի հիւրասիրութիւնը վայելեց:

Յոյն դաստիարակների էր յանձնուած և արքայազն իշխանների կրթութիւնը, որոնցից Արտաւազդը, Տիգրանի յաջորդն ու ժառանգը, եղաւ անուանի հեղինակ, ըստ Պլուտարքի վկայութեան:

Այս թագակիր անուան հետ էահա, որ կապուած է հայ թատրոնի պատմութիւնը հնագոյն անցեալում:

54 թուին էր Քրիստոսից առաջ, որ, կրէստը, Հռոմայեցի զօրավարը, պարտուած էր հայ

և պարթեւ զօրքերի ձեռքով. զօրավարի գլուխը կտրուած բերին Արտաշատ. այդ ժամանակ հայոց մայրաքաղաքը ցնծում էր անսպասելի յաղթութեան հետ նաեւ պալատում կատարուած հարսանիքի շքեղ հանդէսներով. Պարթեւ և հայ արքաները խնամխանում էին: Կրէստոսի թշուառ զբաղումը առիթ եղաւ Արտաւազդի համար, յօրինելու ողբերգութիւններ յոյն լեզուով...

Սա առաջին հայ տաղանդն էր, որ յղանում և յօրինում էր թատրոնութիւններ, թէև օտար լեզուով...

Այնուհետև հայ թատրոնի պատմութիւնը լուծւում է ամբողջ հինգ հարիւր տարի, որի ընթացքում հայերն աւելի և աւելի մերձեցան յոյն կուլտուրային և ամենամօտ յարաբերութեան մէջ էին Հռոմի հետ որպէս մրցակից, պատերազմող և կամ աւելի յաճախ որպէս վասսալ Հռոմի. այդ իսկ պատճառով դժուար է ենթադրել, որ թատրոնի գաղափարն իսպառ մտնէր Հայաստանում... արդարեւ, հինգերորդ դարում, Յովհան Մանգաղուհու ճառերից մինը նուիրուած է թատրոնին, ուր ճարտարաբան և տաղանդաւոր հետորդը գործ է դնում իր շնորհալի տաղանդը ցոյց տալու և ապացուցանելու թատրոնի և թատերական ներկայացումների վնասները: Ուղղակի և անմիջական տեղեկութիւն թատրոնի գոյութեան մասին մենք չունինք, սակայն այս ճառով ապացոյց է տրուում այն յայտնի առածին, թէ «Դու հերքում ես, նշանակում է դու ապացուցանում ես»... ակնհայտ է, որ Ե. դարումն էլ Հայաստանում թատրոններ են եղել...

Մինչդեռ հինգերորդ դարում հայ ասպետ հոգևորականը հալածանք էր յարուցանում թատրոնի դէմ, ժէ դարում, բաղդի մի տարօրինակ զուգադիպութեամբ, եգիպտ կաթոլիկները հայերէն

ներկայացումներ են սարքում գրաւելու համար հայ լուսաւորչականների սիրտը և հեռացնելու համար նրանց հայրենի կրօնից:

Այդ ներկայացումները կատարուած էին Լեհաստանում, Լեմբերգում, ուր Անիից գաղթած հարուստ ու փարթամ հայ կոլօնիա կաք... Հասկանալի է, որ այդ ներկայացումները կրօնական բնոյթ ունէին:

Հայ թատրոնի հիմնադրութեան ու զարգացման նորագոյն հիմունքը, սակայն, դրուած է Խաւրիայի գեղածիծաղ երկնի տակ, Վենետիկում:

Միւթարեան Միաբանութիւնն և նրա զբաղումը է մեր նորագոյն թատրոնի իսկական հիմնադիրն և ստեղծողը:

Հաստատ տեղեկութիւն ունինք, որ 1760 թուականից այնտեղ տրուում էին հայերէն ներկայացումներ. գրաբար և աշխարհաբար: 1816-ից արդէն պահուած կան մինչև անգամ ներկայացրած պիեսների աֆիշաները:

Հայր Բարսեղ Մարգարեան*) մի ամբողջ զբաղում ունի նուիրած Միւթարեան թատրոնի պատմութեանը մի փառաւոր, հարուստ պատմութիւն: Այդտեղից մենք իմանում ենք, որ ներկայացումները նախ ունէին կրօնական բնոյթ և նիւթն ատնում էին Ս. Գրքից. այնուհետև, ազգային շարժման հետ սկսում են ներկայացումներ տալ հայ ազգի պատմութիւնից. իսկ խաղական ու եւրոպական ազդեցութեան տակ թարգմանում են լաւագոյն գործերը Եւրոպայի հեղինակների, մասնաւորապէս Մոլիէրի:

Ողբերգութեանը հետևում էր որեւէ կատակերգութիւն կամ գաւեշտ Պօլսի կեանքից և Պօլսի բարբառով: 1760-ից սկսած, երբ Միւթարեան հայրերն սկսեցին իրանց առաջին ներկայացումը, մինչև օրս, նրանք յօրինել կամ թարգմանել են մօտ 250 պիես, որից տարաբաղաւոր մի փոքր մասն է միայն տպագրուած:

Այդ ներկայացումները միայն վենետիկում չէին, որ տեղի էին ունենում, այլ նաեւ Պարսիք

Տրանսիլվանիա, Բագու, Ղրիմ և այլն, ուր Միւթարեանները դպրոցներ ունէին:

Միւթարեան դպրոցի աշակերտներն էին Պէշիկթաշեանը և Հաքիմեանը, որոնք Հայր Արսէն Բագրատունու մեկենասութեամբ սկսեցին առաջին ներկայացումները Պօլսում:

Մեր մէջ էլ առաջին պիէսաները գրուած գրաբար և կրօնական բովանդակութեամբ, հետեւողութիւն է Միւթարեան դպրոցի. Կարինեանի «Ի մահն Արեւի» պիեսան, եթէ չեմ սխալուած, հնագոյնն է, որ տպագրուել է մեզանում:

Առաջին աշխարհիկ պիեսն արեւելահայ լեզուով, լաւագոյն իր տեսակի մէջ, մի արժանաւոր և ընտիր գործ, խոշոր և առաջնակարգ տաղանդի, Արուսեանի «Ֆէօդորա կամ Որդիական սէր»-ն է, գրուած է 1841—յուլիսին. ուրեմն 18 տարի մեր թատրոնի հիմնադրութիւնից առաջ: Թատրոնի ապագայ շէնքի մէջ առաջին ներկայացումը և առաջին արձանը պատկանում է այդ մուսուսուած տաղանդին: Այս գոնէ չմոռանանք:

Գալով առաջին հայերէն ներկայացման ուսման հայոց մէջ, ես մի քանի անգամ վիճել եմ իմ բարեկամ Ջարարի հետ պնդելով, որ առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1859 թ. յունուարին, հետեւաւոր նրա յիսնամեակը լրանալու է եկող տարի: Մենք մի քիչ շտապել ենք, սակայն դա մի չարիք չէ, այլ արդիւնք գովելի եռանդի և արդարացումն հակադարձ մտքով մի հին առածի՝ «Լաւ է վաղ, քան ուշ, քան երբէք»: Իմ պնդածին հիմք է ծառայում այն, որ 1858-ի մեր թերթերում ես տեղեկութիւն չեմ գտել հայերէն ներկայացման մասին, այն ինչ, 1859-ի յունուարի ներկայացման համար ունինք Մ. Նալբանդեանի հեղինակաւոր խօսքը «Հիւսիսափայլ»-ի մէջ, ուր քննադատելով հայ թատրոնը, նա շեշտում է, որ դա հայերէն առաջին ներկայացումն էր (անշուշտ Ռուսաստանում **):

Գ. ՎԱՆՑԵԱՆ

*) Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ Միւթարեան միաբանութեան:

**) Ճիշտ է իր յօդուածում Մ. Նալբանդեանը խօսելով 1859 թ.ի հայկական ներկայացման մասին, նրան առաջինն է անուանում, բայց սխալ է: 1858 թ.ի յունուարի 28-ին Մոսկուայում հայերէն լեզուով ներկայացուեց Ի. Օ. Գուրգենի «Հաճի Սուլէյմանը»: Հեղինակը, փառք

Աստուծոյ կենդանի է և լաւագոյն վկան է: Կարող եմ յիշուել նաեւ մեր հանգուցեալ պատմաբան Ալ. Երիցեանի վրայ, որը ճիշտ 15 տարի առաջ կազմակերպեց (հին արքունական թատրոնում) յօրելեանական ներկայացում հայոց թատրոնի 35-ամեայ գոյութեան առթիւ Ռուսաստանում:

Ի դէպ, պէտք է յիշեցնեմ բնթերցողներին, որ հայոց թատրոնի հնագոյն շրջանի ուսումնասիրութեանը Իւրիշ Վեսելովսկու մի շատ հետաքրքրական յօդուածն է նուիրուած իր «Литерат. очерки» գրքում: Մ. Ջ.


Տ Խ Ո Ւ Ր Է Ջ Ե Ր



Պ Ե Ր Ճ Պ Ռ Օ Շ Ե Ա Ն

1907 թ. դեկտեմբերին տեղի ունեցաւ Պերճ Պոռնանի թաղումը Թիֆլիսում, որին ներկայ էր նաեւ Թիֆլիզի Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան ամբողջ կազմը: Նոյն Վարչութիւնը հանգուցեալի վրայ զրեւ էր մի պսակ հետեւեալ մակագրութեամբ. «Մայրենի բեմի բարեկամ Պերճ Պոռնանին Թիֆլ. Հայ. Դրամատիքական Ընկերութիւնից»: Հանգուցեալի թաղման հանդիսին Դրամատիքական Ընկերութեան Վարչութեան անդամ պ. Լեոն Բաբայեանը խօսեց հետեւեալը.

«Թիֆլիսի Հայոց Դրամատիքական Ընկերութիւնը ինձ վրայ պարտականութիւն է դրել իր խորին վիշտն ու



ցաւակցութիւնը յայտնելու հասարակական այն խոշոր կորուստի համար, որ Հայկական իրականութիւնը ունեցաւ Պ. Պոռնանի մահով: Այդ կորուստը խոշոր է նրա համար, որովհետեւ Պոռնանի մահով Հայոց նորագոյն գրականութիւնը զրկուեւ է իր նշանաւոր հիմնադրներից մէկից, որի գրական պատկանելի անցեալը

կազմում է այդ միեւնոյն գրականութեան կլասիք սեպ-հականութիւնը:

Պ. Պոռնանը գրական ասպարէզ դուրս եկաւ այն ժամանակ, երբ դեռ նոր էր ոտքի կանգնել ռուսահայոց նորագոյն գրականութիւնը, որի հիմնադիրը նահապետ եւաջատուր Աբովեանն էր, որ ճանապարհ հարձեց ասպարէզ հայ վիպագրողների համար: Աբովեանը հայ ժողովրդական վիպագրութեան ստեղծողն էր, իսկ Պոռնանը նա աւելի անմիջական եւ արժանաւոր յաջորդը միեւնոյն ասպարէզում: Նրա գրական աշխատութիւնների մեծ մասը պատկանում է հայոց նորագոյն գրականութեան վիպագրական փլուզին, որ բազմակողմանի կերպով արտայայտում է գիւղական կեանքը իր բոլոր մանրամասնութիւններով: Պոռնանի վէպերը ներկայացնում են մի հայելի, որի մէջ պարզ երեւում են հայ գիւղացու բոլոր գրական եւ բացասական կողմերը— նրա դրութիւնը, հոգսերը, կարիքները, սովորութիւնները, սնտրիապաշտութիւնները եւայլն: Ուրիշ խօսքով նա հայ գիւղի ազգադրագէտ-վիպասանն է, որովհետեւ նա է համարում ռուսահայոց նորագոյն գրականութեան ազգադրական վէպի հիմնադիրը, բառիս ամենաընդարձակ նշանակութեամբ: Գիւղական աշխարհն է կազմում այն առանցքը, որի շուրջը պտտւում է Պոռնանի գրական գրեթէ ամբողջ գործունէութիւնը: Գրական այդ գործունէութիւնն է Պոռնանին դարձրել մեր նորագոյն գրականութեան կորիֆէյներից մէկը, որ զեռ երկար ժամանակ իր պատուաւոր տեղը կըռնի մեր վիպագրութեան մէջ:

Սակայն Պոռնանը զգալի դեր է կատարել ռուսահայոց հասարակական կեանքի նաեւ միւս ասպարէզներում: Մեծ է նրա կատարած դերը դպրոցական-կրթական ասպարիզում: Նա եղել է շատ քաղաքներում իբրեւ ուսուցիչ, դպրոցական տեսուչ, թեմական տեսուչ եւ այլն: Հայ մատաղ սերնդի կրթական եւ դաստիարակչական գործին Պոռնանը նուիրել է իր անխոնջ գործունէութեան մի զգալի մասը եւ այդ ասպարիզում վայելել է բարոյական հեղինակութիւն, շնորհիւ այն անկեղծ տրամադրութեան, որով նա մօտեցել է հայկական կրթական գործին:

Թիֆլիզի Հայոց Դրամատիքական Ընկերութեան համար առանձնապէս ծանր է հանգուցեալի գործունէութիւնը թատրոնական ասպարիզում: Պ. Պոռնանի մահով Թիֆլիզի հայկական թատրոնը կորցնում է իր

հիմնադիրներից մէկին, որ հայ բեմի դադափարը ժողովրդականացրել է Թիֆլիզի հայ հասարակութեան զանազան խաւերում:

Ռուսահայոց թատրոնը նոր էր ծնուել Թիֆլիսում: Այդ այն ժամանակն էր, երբ հայ թատրոնի դադափարը դեռ եւս շատ խորձ էր Թիֆլիզի հայ հասարակութեան համար, որը զարմանում էր, որ հայն էլ կարող է հայերէն խօսել, այն էլ հրապարակական թատրոնում: 1860 թւին էր, երբ հայ թատրոնի դադափարի համար պրօպագանդա էին անում մի խումբ մարդիկ եւ դիմադրելով հայ հասարակութեան վերաբերմունքին եւ դէպի հայ թատրոնը, աշխատում էին տեղական սիրողներից դիւստանական խմբի կազմակերպել հայկական ներկայացումներ տալու: Այդ գործը աջողութեամբ զլուխ եկաւ եւ սկզբում սիրողները միացեալ ոյժերով Թիֆլիսում մի քանի ներկայացումներ կազմակերպեցին, որոնց նախաձեռնողներից մէկն էլ հանգուցեալ Պոռնանն էր: Նա մեծ եռանդով կայել էր թատրոնական գործին եւ ղեկավարում էր Ներսիսեան դպրոցի դահլիճում մի քանի ներկայացումներ: Ներկայացնում էին զլիսաւորապէս պատմական պիեսներ, որոնք ահագին հասարակութիւն էին գրաւում:

Կարճ ժամանակից յետոյ հայկական թատրոնի նախաձեռնողների մէջ պառակտում է ընկնում: Առաջ են գալիս երկու միմեանց հետ մրցող խմբեր, որոնցից մէկի պարագլուխն էր Պատկանեանը, իսկ մյուսին Պ. Պոռնանը: Վերջինիս կողմն են անցնում Ամերիկեան, Շահխանդեան, Սուքիասեան, Մատինեան եւ ուրիշները: «Պերճական» խումբը տալիս է մի քանի ներկայացումներ եւ ժողովրդականութիւնն ստանում:

Այդ գործունէութեամբ Պոռնանը ահագին դեր է կատարում մեր մայրենի բեմի զարգացման համար եւ իր տեղն է գրաւում ռուսահայ թատրոնի պատմութեան մէջ:

Հանդիստ նշանաւոր վիպասանի, աշխարհիկ լեզուի մշակողի, ժողովրդական բանաստեղծի, մատաղ սերունդի յարգուած ուսուցչի եւ թատրոնական պատկանելի գործիչի ոսկորներին»:

Գ Է Ո Ր Գ Պ Ե Տ Ր Ո Ս Ե Ա Ն

(Թուուցիկ յիշողութիւններ)

1890 թւին, լաւ չեմ յիշում, նոյեմբեր թէ դեկտեմբեր ամիսն էր, որ ես ծանօթացայ հանդէպեալ Գ. Պետրոսեանի հետ: Ինձ հրաւիրել էին մասնակցելու մի բարեգործական նպատակով Մուսրուկիք ներկայացման: Պիտի խաղայինք Մուսրացանի «Ռուզան» պատմական գրաման: Մասնակցողները բոլորը թատերասէրներ էին, բացի

Պետրոսեանից: Իսկ ես տակաւին նոր սկսեալ էի...

Ծանօթացնում են ինձ Պետրոսեան-Օրգու-բաթեանի (դա նրա պսակաւորն էր) հետ: Դա մի միջահասակ, գրաւիչ դէմքով, լայն ճակատով, ձուածեւ միտուքով եւ առողջ կազմութեամբ երիտասարդ էր: Ես անհամբեր՝ սրտի տրոփիւնով սպասում էի, թէ Ռուսաստանից նոր վերադարձած հայ գերասանն երբ պիտի փորձէ: Վերջապէս, սկսում են փորձել երկրորդ գործողութիւնը, ուր հանդէս է գալիս Պետրոսեանը Հասան-Ջալալ Տօլա իշխանի դերում: Լսում եմ նրա արծաթահնչիւն ձայնը, գեղեցիկ զիւցիւն, տեսնում եմ նրա ողիւն, որի խաղը եւ հիանում եմ. բայց մի բան, որ իսկոյն աչքի է ընկնում, այդ մայրենի լեզուին լաւ չտիրապետելն է, թէեւ հէնց առաջին փորձից գիտէր նա իր դերը:



Վերջանում է երկրորդ գործողութիւնը, եւ բոլորս ողորուած ծափահարում ենք Պետրոսեանին: Սկսում է III գործողութիւնը, որ ես հանդէս եմ գալիս Բուդա թուրք գորպայեալի դերում: Գործողութիւնը վերջանալուց յետոյ, մօտենում է Պետրոսեանը, սեղմում է ձեռքս եւ ասում.

—Պ. Յարութիւնեան, ինչպէս երեւում է առաջին անգամը չէ, որ մասնակցում էք, գուք ինձ ուրախացրիք... ձեր մէջ գերասանական ձիւրը կայ...

Կռիւր մղում էր անհաւասար ոյժերով: Մի խումբ երիտասարդներ դուրս էին եկել երկար տարիների «գործունէութեամբ» իրանց համար հասարակական դերք ստեղծած մարդկանց դէմ: Նա մղում էր ամեն ճակատի վրայ, եկեղեցական, զպրօցական-կրթական, լրագրական և թատերական: Վերջին հիմնարկութիւնը նոր էր ծնունդ առել մեր մէջ: Չնայելով որ նոր էր, բայց մեր ամեն կողմով հնացած կեանքում զարմանալի կըլինէր, որ այդ նոր ծնունդը չի կրէր հին կեանքի բոլոր առանձնայատկութիւնները:

Նոր կեանքը հրամայողաբար պահանջում էր, որ մարդիկ թողնէին իրանց խուրդային գործունէութիւնը և ասպարէզ նետուէին ընթանալու գծումը նոր ուղիով:

«Տաք գլուխ»-ները մի փոքրիկ խմբակ, դուրս էր եկել այդ շաւիղով գործելու, և նա հասարակական կեանքի ամեն մի քայլափոխին պատահում էր կատարել ընդդիմութեան:

60 ական թուականներին սկսուել էր և թատրոնը: Նա այդ մարդու բացարձակ սեպհականութիւնն էր: Նա համարում էր մի «բարոյական» հիմնարկութիւն. խաղացում էր հայերի առասպելական-գիւցազնական անցեալ կեանքի պատկերները: «Միհրապետ», «Արայ Գեղեցիկ», «Շուշանիկ», «Վարդանանց պատերազմ», «Արշակ Բ.» և այլն: Ինչ ասել կուզէ, որ բոլոր գերակատարները տղամարդիկ են. կանայք գոյութիւն չեն ունեցել այն ժամանակ, իսկ պատահած կանացի դերերն էլ— յանուն «բարոյականութեան» կատարել են պատանիները:

«Սաւաթի իշխանութեան» այս փոքրիկ նկարագրիցը տուինք մենք, որպէսզի որոշակի պատկերանայ միջավայրը, ուր հարեմական ճնշումներից կաշկանդուած և գիտակցութիւնը կորցրած հայ կիներ, մի հսկայ ոստիւն պիտի գործէր այն խրամատի վրայից, որ բացել էր իր համար ասիական բռնութիւնը: Դա մի չարագուշակ և երկիւղալի որոշումն էր, որ սպառնում էր այդ թուրք գործողին իսպառ թաղել այդ խրամատում: Մի-երկու քայլեր արուած էր այդ ուղղութեամբ, և բամբասանքների տարափը տեղում էր այդ «զլխարաց»-ները գլխին: Ահա այդ ռահվիրաների շարքին է պատկանում և ա. Սաթիւնիկ Չմշկեանը: Կարելի է երեւակայել, թէ հոգու ինչ կորով, բնաւորութեան որպիսի ոյժ է հարկաւոր դիմադրելու այդ սլաքի նման ծակող լեզուներին: Բամբասում էին կանայք, բամբասում էին և տղամարդիկ և դատաւիտում կանանց բեմի վրայ երեւալու «անբարոյական» քայլը: Բեմը տղամարդուն էր, թէ-

կուղ տղա-Գայիանէներ, կեղծիքը նոյն իսկ այն աստիճան առաջ տանէին, որ միքանի տղամարդիկ — սխալմամբ — սիրահարուէին տղա-Գայիանէին, ոչինչ, այդ բոլորը տանելի էր դեռ, միայն թէ կիներ չերեար բեմի վրայ:

Բայց առաջադիմութեան ու եւրօպականութեան հոսանքը ուժեղ էր, և այդ հոսանքը ասպարէզ նետեց հայ կնոջ, որ արհամարհանքի մատնեց ամեն քսութիւն ու բամբասանք:

Ըստ սովորութեան սկսնակների, պէտք եղաւ որ Նիկոլայէթը փոխէր իր անունը և Սաթիւնիկ վերանունուած դուրս գար հասարակութեան առաջ՝ մտքովն անգամ չանցնելով ցմահ կապուած մնալ հայ բեմի հետ: 1862 թւին էր այդ, և այն խումբը, որին մասնակցում էր Սաթիւնիկ, յորջորջում էր «Պերճական»: Մինչև 1865 թ. նա կատարում էր շատ փոքր դերեր, այդ թւին էր, որ նա առաջին անգամ կատարեց «Դօն Սէզար դը Բազան» կօմեդիայի Լազարելիս Մանկուալիկի դերը: Այնուհետև նա անհրաժեշտ գերակատարն էր բժ. Տէր-Գրիգորեանցի և Գ. Սունդուկեանցի պիէսներին: 1879—83 թ. թատրոնի ծաղկեալ և դերասանութիւնների բազմութեամբ աչքի ընկնող վիճակը առիթ չէր, որ Սաթիւնիկը հեռանար բեմից: Ընդհակառակը, նա այդ խմբերի մի անհրաժեշտ անդամն էր: Եւ նա ընկաւ այդ ճանապարհին, ինչպէս մի քաջ ռազմիկ, իր սիրած զրօշակին փարած:

Յարգանք նրա յիշատակին:

Ա. ՎՐՈՅՐ

Օ Ր. Ք Ն Ա Ր Ի Կ

1901 թւի սեպտեմբերին էր: Ընկերական պայմաններով խաղում էինք Բազու. գերասանութիւնների պակասութիւնը մեզ նեղում էր, մտածում էինք հրաւիրել Թիֆլիսից, երբ մի օր Արեւեանը բերեց իր հետ մի օրիորդ: Դա Քնարիկն էր: Դերերի համար դրուեց «Սիւրիլիոյ սափրիչ»-ը, որի մէջ Ռօզինայի դերը, ի մեծ ուրախութիւն ամենքիս, նա կատարեց մեծ աջողութեամբ: Այդ օրուանից նա դարձաւ մեր փոքրիկ ընտանիքի անբաժան ընկերը. եղել է Բազու, Անդրկասպեան երկրում, Շուշի, Դերբենտ, Աստրախան, Նոր-Նախիջևան, Գանձակ, Արմաւիր: Թիֆլիսում նրան չյաջողուեց և ոչ մի անգամ խաղալ: Վերջին 1907—1908 սեպտեմբերին խաղում էր Բազու, ուր բացի կուլտուրական Միութեան խմբի ներկայացումներին մասնակցելուց, բեմիստեղծութիւն էր անում և Մե-

բաղաքի բանւորական սիրողների «Քնարիկ» խմբում:

Անցեալ տարուայ դեկտեմբերի վերջին Քնարիկը վերջ տուեց իւր կեանքին, կարբօլեան թըթւատ խմելով:



Ռուսայի դերում «Գաւառացի»-ի մէջ.

Յանձին նրա հայ աղքատիկ բեմը կորցրեց ապագայի մի լաւ գերասանուհի դուրեկան ձայնով, շքեղ արտաքինով ու նուրբ խաղով: Մեռաւ նա 27 տարեկան հասակում:

Գր. Աւետ.

ԱԴԵԼԻՍԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՋՈՆ ԱՄԻՐԵԱՆ

Այս տարուայ կորուստների մէջ ունեցանք և նոր ուժեր, որոնք խոստանում էին ապագայում մեր բեմի պիտանացու ծառայողներից լինել:

Ադելիսանը այդ խոստացողներից մէկն էր: Երկու տարի է, ինչ որ նա ոտք էր դրել բեմ.

շատերը նրան չեն ճանաչում իսկ, բայց նշանակալից է այն երեւոյթը, որ հայ բեմ ոտք էր դրում մի սկսնակ գերասան՝ զինուած միջնակարգ կրթութեամբ: Քանի որ մեր մէջ կան գրեթէ անգրագէտ գերասաններ, Ադելիսանեանի նման սկզբնակների յիշատակը արժանի է խորին ուշադրութեան:

Ադելիսանեանը աւարտել էր Ներսիսեան դպրոցը, մասնակցել էր և գաւառական ներկայացումներին և դեռ 20 տարեկան չկար, որ մեռաւ: Երկրորդ կորուստը Եագօն Ամիրեանն էր:

Սա մեռաւ յանկարծահաւ մահով:

Կան բեմական գործիչներ, որոնց աշխատանքը մեծ հասարակութեան առաջ կորչում է աննկատելի: Այդպիսի գործիչ աշխատող էր Եագօն Ամիրեան, որ բեմի վրայ երկար տարիներ սեփսեփօրի օգնականի պաշտօն էր վարում:

Ոչ ոք, իհարկէ, չէր տեսնում, թէ ինչ էր անում Ամիրեանը բեմի վրայ. սրա համար պէտք էր վարագոյրի ետև անցնել և դիտել, թէ ինչպէս թողի մէջ խաղամիջոցներին դասաւորում էր բեմը, կարգադրում էր սարքը: Մեքենայական աշխատանք է, ճիշտ է, բայց և այնպէս պահանջում է սէր աշխատողից: Եւ այդպիսի սիրով վառուած էր հանգուցեալը:

Եագօն Ամիրեանը չէր սահմանափակում միայն այդ աշխատանքով. մէկ-մէկ նա թարգմանութիւններ էր անում:

Վերջերս նա թարգմանել էր «Վարքի թուանշան» հետաքրքրական պիեսը:

Թէ Դրամատիքական Ընկերութիւնը և թէ գերասանական խումբը իրանց յարգանքի հաւատարմորդ արտայայտեցին այդ երկու համեստ ուժերի յիշատակին, դազաղի վրայ դնելով սովորական պսակներ:

Երկու մշակներն էլ, ինչպէս և նկատեցինք, իրանց գործունէութեան ժամանակ մնացին աննկատելի մեծ հասարակութեան աչքում, բայց և այնպէս ոյժերի կարգին համախմբումն էլ մեծ գրաւական է ընդհանուր գործի համար ուստի և մեր ուշադրութիւնից չենք զլանում այդ միքանի տողը նուիրել իբրեւ յարգանքի նշան մեր կողմից կուլտուրական չարքաշ մշակներին:

Յ. ՍՈՒՆՆԱՆ

ՄԵՐ ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՁԸ

Ո՞ր է գնում թէ զարգացած և թէ միամիտ ամբողջը, ի՞նչով է նա աւելի յուզուում, ստեղծագործութեան ո՞ր ճիւղն է իր սրտին աւելի մօտ համարում:

Նա գնում է թատրոն, ապրում է, յուզուում է թատրոնով. թատրոնը իր կեանքի պահանջն է համարում:

Այս ձգտումը անուրանալի է, և թատրոնը՝ իրրե գեղարուեստական կարիքների և յոյզերի մի ամբողջացած միութիւն, օր աւուր աճում է ու զարգանում: Նա, նկատելի կերպով, տարեց-տարի զէպի իրան է գրաւում և քաշում լայն խաւերի ուշադրութիւնը:

Իմ խօսքը, ի հարկէ, վերաբերում է թատրոնին ընդհանուր առմամբ:

Մեր ժամանակներում թատրոնն է, որ գաղափարների տարածման միակ զօրեղ խթանն է կազմում: Նա նոյն իսկ հասարակական հիպնոսացման միակ ուղղիչ միջոցն է. իսկ եթէ մենք ուշի ուշով հետեւենք թատրոնի գաղափարի լսատիճանական զարգացման՝ սկսած հնագոյն ժամանակներից մինչև մեր օրերը, պարզ և անհերքելի կը լինի մեզ համար և թատրոնի անհրաժեշտութիւնը: Թատրոնը ոչ միայն կարևոր է, այլ նոյն իսկ առանց թատրոնի հասարակական մտքի գործունէութիւնն անգամ չի կարող լինել օգտակար և նպատակայարմար:

Թատրոնին է վերապահուած ապագայում նոյն իսկ մեր հասարակական քաղաքակրթութեան զարգացման գործում խաղալու մեծ դերը: Ահա թէ որ աստիճան գերակշռելի է թատրոնի կուլտուրական-կրթական նշանակութիւնը: Թատրոնը մի գեղարուեստական հիմնարկութիւն է, եթէ կարելի է այդպէս ասել՝ մի հիմնարկութիւն, որին իրաւամբ համարում են ժողովրդական դպրոցի մերձաւոր գործակիցը, նրա օժանդակ միջնորդը, որ կարողանում է անունդ տալ հասարակական մտաւոր կեանքին և ւսման կերպ սրա նեցուկը լինել:

Արդէն հին Յունաստանում թատրոնի կրթիչ նշանակութիւնն ըմբռնել էին այն աստիճան, որ պետութիւնը իր պարտականութիւնն էր համարում թատրոնը այցելելու համար հնարաւորութիւն տալ չքաւոր խաւերին և այդ նպատակով նոյն իսկ փող էին բաժանում: Հաստատ կարելի է ասել, որ հին Յունաստանում հասարակական զանազանակերպ շահերի մէջ թատրոնը ոչ միայն առաջին տեղն էր բռնում, այլ նոյն իսկ իշխում էր միւսների վրայ:

Թատրոնի նշանակութիւնը աճում էր զուգահեռաբար քաղաքակրթութեան և կուլտուրայի զարգացման հետ: Աստիճանաբար սկսեցին երևան զալ թատրոնի առանձնապատկութիւնները, առանձնապատկութիւններ, որոնք ակներև կերպով ցոյց էին տալիս թատրոնի, կեանքի և նոյն իսկ հասարակական կարիքների մէջ եղած սերտ կապն ու առնչութիւնը:

Եթէ սկզբում թատրոնին նայում էին իբրև մի զուարճատեղիի վրայ, բայց յետոյ տեսակէտը փոխուեց, և թատրոնը արդէն ստացաւ դպրոցի նշանակութիւն: Այդ երկու դրութիւնները պատմականօրէն փոխարինեցին մէկ-մէկու, մէկը տեղի տուաւ միւսին, կամ երկրորդը աստիճանաբար երևան եկաւ առաջինից:

Երկար ժամանակ թատրոնը համարւում էր զուարճատեղի: Այդ ժամանակամիջոցը կարելի է համարել մինչև Մօլլիերը: Բայց հէնց լոկ զուարճութիւնը դադարեց բաւարարութիւն տալուց ժողովրդական ինքնագիտակցութեան, երբ արուեստը և ստեղծագործող ոգին դարձան ազատութեան նշանաբանը, հէնց այդ ժամանակ էլ թատրոնն ընդունեց քարոզի և կոչի բնոյթ և զէպի դատարկ, աննպատակ զուարճութիւնները եղած նախկին ձգտումը բնականաբար տեղի տուաւ աւելի գերազոյն տեղերի՝ քաղաքացիների բարոյական վերանորոգութեան և վերածնութեան: Շիլլերը արդէն թատրոնը ընդունում է «բարոյական հիմ-

նարկութիւն», Լեսսինգը կտրուկ կերպով որոշում է «թատրոնը իբրև քարոզչի ամբիոն», իսկ Վ. Հիլզօն թատրոնը ընդունում է իբրև զօրեղ գործիք քաղաքակրթութիւնը տարածելու գործում:

Թատրոնը հէնց իր էութեան մէջ պարունակում է կենսունակութեան և կուլտուրական անհրաժեշտ հիմունք:

Թատրոնի նշանակութիւնը մեր օրերում այնքան ակներև է, որ մեր հասարակական կեանքում



Ա. Անտոնեան

նրա տեղը բնորոշելու համար անպայման նրան պիտի գտնենք բարձրագոյն պատուանդանի վրայ: Թատրոնը հանդիսանում է հասարակութեան բարձր նպատակների միակ արտայայտիչը:

Բայց ինչ ասել կուզէ, որ թատրոնի նշանակութիւնը մեծ է, երբ նա համապատասխանում է

իր բարձր կոչման և բաւարարութիւն է տալիս մարդկային ամենաէական պահանջներին: Այդ դէպքում թատրոնը պիտի ձգտէ զէպի ինքնաճանաչութիւն, նպաստէ ըմբռնել կեանքը, նրա բարոյական հիմունքները, զարթեցնէ սէր զէպի գեղեցիկը և գերագոյնը:

Իսկ եթէ այդ կարիքը իրան բաւարարութիւնը չի գտնում, այն ժամանակ նա կամ մեռնում է, կամ թէ չէ ընդունում է տձև և անճոռնի կերպարանք: Այդպիսով եթէ թատրոնը չի համապատասխանում իր կոչման, նա ոչ միայն անգոր է հանդիսանում մասսայի վրայ իր շանթող ազդեցութիւնը գործելուց, այլ նոյն իսկ բարոյական փլուս է բերում հասարակութեան՝ շնորհիւ իր ոչ գեղարուեստականութեան և համբաւութեան:

Դառնանք այժմ մեր թատրոնին: Տեսնենք ի՞նչ դրութիւն է նա պատկերացնում և ո՞րքան նա բաւարարութիւն է տալիս վերև յիշած պահանջներին:

Ես կխօսեմ անկեղծօրէն և առանց ծածկելու իրողութիւնը: Երբ կեանքի սովորական ժխորից և նրա պատահական կարիքներից դարձած, իմ տանջուած մտքերը դարձնում եմ զէպի մեր թատրոնը, նրա ընդհանուր կեանքը և կացութիւնը, ես զգում եմ իմ մէջ անբաւարար հոգու խորին վշտակցութիւն և իմ միտքը չի հաշուում մեր բնի թշուառ վիճակի հետ: Եւ երբ ես մօտենում եմ բուն ինդիւիդին և ինձ ու ինձ տալիս եմ այս կարևոր հարցը՝ թէ ի՞նչ է հայ թատրոնը—հասունացած, կտրուկ պատասխանի փոխարէն զգում եմ իմ մէջ ամօթխածութեան և դժգոհութեան խորագին յուզմունք:

Ամենից առաջ ինձ տանջում է, յուզում է ակնյայտ անփոյթութիւնը ու անտարբերութիւնը զէպի մեր թատրոնը, զէպի ազգային հարազատ բնի: Այդ անտարբերութիւնը նկատուում է ոչ միայն, այսպէս ասած՝ մեր հասարակական, «բուրժուական» խաւերի մէջ, այլ նոյն իսկ մեր բազմագոյն ինտելիգենցիայի, որի ներկայացուցիչները միշտ պատրաստ են շոյլել ճոճօսն և մեծագործ ֆուգներ, կուրծ ծեծել շրջապատողներին հաւատացնելու համար, թէ իրանք են, որ վեհ զգացմունք են տածում զէպի ժողովուրդը և ազգը, թէ իրանք են, որ պատրաստ են անձամբ-անձինս իրանց ուժերը նուիրել հասարակական շահերին և նրա կուլտուրական-կրթական ձգտումներին:

Դէպի մեր բնի մեծ անեցած ակներև և անուրանալի այս անտարբերութիւնը քոյարկւում է միևնոյն ժամանակ բազմազան պահանջներով և մի բուն դժգոհութիւնների արտայայտմամբ:

Այս, չափազանց ցաւալի և աննորմալ է մեր թատրոնի ներկայ դրութիւնը: Սակայն, եթէ ուզում էք իմանաք, ամենից առաջ ծայրագոյն դժբախտութիւնը կայանում է նրանում, որ մեր թատրոնը չունի գեղարուեստը սիրող և նրան նուիրում հաւատարիմ ընթերցողներ, որոնք պատրաստ լինէին աշխատելու գործի համար և ոչ թէ իրանց ինքնագոյութեան և փառասիրութեան յագուրդ տալու: Մեր մէջ, ճիշտ է, կան մարդիկ, որ չինայելով իրանց ոյժերը, ժամանակը ու եռանդը նուիրում են հարազատ բեմին, ճիշտ է՝ սրանց թիւն էլ շատ չէ, բայց գտնում են արդեօք այսպիսիները համակրանք և աջակցութիւն հասարակական լայն խաւերում: Փոխանակ մի պարզ երախտագիտութեան՝ որպէս միակ վարձատրութեան իրանց տշխատանքի համար, այս



Տիկ. Ի. Սպենդիարեան

սակաւաթիւ մշակները յաճախ ենթակայ են լինում անտեղի յարձակումների, և այդ տեսակ պարսաւանքները ցաւ ի սիրտ պիտի ասեմ, որ նոյն իսկ հիւրասիրութիւն են գտնում մեր ժամանակակից մամուլի էջերում:

Ընդհանրապէս արգարութիւնը պահանջում է մասնաճիւղ անելու և այն ցաւալի հանգամանքի վրայ, որ թատրոնի վերաբերմամբ մեր մա-

մուլը մեծ մասամբ չի կանգնում իր արժանաւայել բարձրութեան վրայ: Թատրոնական քննադատութիւնը մեզնում ընկած է, իսկ այն, ինչ որ կրիտիկայի և ռեցենզիայի անունով է տրուում ընթերցողին, միայն վկայում է ռեցենզենտի անհեթեթ դատողութիւնը կամ նրա անվայել ու կեղտոտ վերաբերմունքը: Ինչ ասել կուզէ, որ այդպիսիները դատում են ոլիմպիական բարձրութիւնից իրանց բոլորովին անծանօթ հարցերի մասին, և որոնց ակներև խակութիւնը կարմիր թելի նման անցնում է ամբողջ յօդուածի միջով:

Սուք անգամ չի կարող լինել, որ այդ տեսակ «կրիտիկոսներից» ոչ դերասանները և ոչ սակ «կրիտիկոսներից» ոչ դերասանները և ոչ օգտակար խորհուրդներ և ոչ էլ գործնական, ուղղորդական արժանի ցուցմունքներ: Թէ ծայրահեղութեան որ աստիճանին է հասնում մեր մամուլը, երևում է նրանից, որ միքանիսը թատրոնական գործին անգամ մօտենում են կուսակցական տեսակէտից: Այդպիսով ստեղծուել է իրերի այնպիսի դրութիւն, որ դերասանները այլ ևս չեն հաւատում լրագրական «կրիտիկաներին» և ռեցենզիաներին: Սրանք ոչինչ չուսուցանելով հանդերձ առաջ են բերում լքում և վհատում:

Ցաւ է ինձ խօսել այդ մասին, որովհետեւ 10 տարուց աւել է, որ ես ինքս անձամբ աշխատակցել եմ տեղական մամուլին: Ես աւելի իրաւունք ունիմ կարծիք յայտնելու իմ «զինակիցների» մասին և այժմ բաց ճակատով վկայում եմ, որ թատրոնական կրիտիկան մեծ մասամբ գտնում է անարժան գրչակների ձեռքում և, ինչ ասել կուզէ, սրանց մտքի արտայայտութիւնները չեն դիմանում նոյն իսկ ամենազիջող կրիտիկայի: Այդ քննադատականները լինում են կամ չափազանց միամիտ ու անբովանդակ, կամ մեծամիտ ու բժախնդիր: Շատ անգամ էլ նոյն իսկ մի կոպիտ ու զգուշ լինում եմ:

Եթէ ես խօսեցի թատրոնական քննադատութեան մասին, այդ լոկ նրա համար, որ քննադատութեանը կարևոր նշանակութիւն եմ տալիս:

Այժմ նոյն իսկ դժուար է հաշուի առնել թէ ինչ օգուտներ և բարեբեր հետեանքներ է տալիս թատրոնական առողջ, անաչառ և հեղինակաւոր կրիտիկան:

Մասնաւոր, այդպիսի կրիտիկայի նշանակութիւնը մեծ օգուտներ կրերէր մեզնում, որովհետեւ թատրոնական գործը մեր մէջ մինչև այժմ խախտու հիմքերի վրայ է բարձրացրած: Չընայելով այն հանգամանքին, որ մեր թատրոնը արդէն լրացրել է իր պատկանելի 50 ամեակը,

բայց և այնպէս նա ամեն կողմից գտնում է անյաջող և աննորմալ դրութեան մէջ: Այժմ իսկ նրան հարկաւոր են հմուտ ղեկավարներ, որպէս-



Տիգ. Ամբիկեան (Հ. Գ. Բ.—բեմն պատ. ակտ.)

զի կարողանային գործին տալ պատշաճաւոր ուղղութիւն, ցոյց տային ճանապարհը և ստեղծէին այնպիսի պայմաններ, որ խթան լինէին թատրոնի գործի յաջող զարգացման գէթ այսուհետեւ: Այդ այդպէս լինելով հարց է զալիս, որտեղ, եթէ ոչ մամուլի էջերում պիտի որոնել ղեկավար և հեղինակաւոր ցուցմունքներ: Եւ միթէ մեր թատրոնը մեր հասարակական կեանքի խնդիրների շարքում բռնում է այնպիսի ընկած տեղ, որ չպիտի կարողանայ մամուլից պահանջել դէպի իրան աւելի լուրջ և ուշադիր վերաբերմունք:

Ստիպուած եմ ենթադրելու, որ մեր մէջ դեռ լայն խաւերում չի ճանաչուած թատրոնի վեհ կուլտուրական և գեղարուեստական-կրթական նշանակութիւնը: Մինչդեռ քաղաքակրթութեան երկրներում թատրոնական խնդիրները օրաւոր աւելի ու աւելի գրաւում են հասարակութեան ուղղորդութիւնը: Թատրոնով հետաքրքրւում են մանաւանդ այն խաւերը, որոնք աւելի սրտին մօտ են առնում ժողովրդի հոգեւոր-մտաւոր շահերը:

Մասնաւոր անելով կրիտիկային, դառնանք այժմ մեր թատրոնի ուրիշ կարիքներին:

Առաջին նուագ պիտի շօշափէի գործի նիւթական դրութիւնը: Սակայն հազիւ թէ կարիք լինի այդ խնդրի առթիւ երկար խօսելու: Մեզնից

սիկ չգիտէ, որ մեր թատրոնը Ռուսաստանում գոյութիւն ունի 50 տարի և ամբողջ այս կէսդարեան կեանքի ընթացքում նա ծանր կոխ է մղել իր գոյութեան համար: Յիսուս տարուայ մէջ քանիցս անգամ հայ թատրոնի դռները, գոցուել են. շատ անգամ ոչ միայն մի տարով, այլ նոյն իսկ երկու, երեք և աւել ժամանակամիջոցով:

Ահա թէ հարկ է տալ միջոցների սղութիւնը:

Մեր դերասաններն էլ ստիպուած են եղել թողնել բեմը և որոնել ապրուստի միջոցներ զանազան գրասենեակներում: Սրանք եղել են և հաշուապահներ, որ ստացել են 50 բուրլի և հասարակ ցրիչ-ծառայողներ:

Անուրանալի է, որ այնտեղ ուր յարգուել է առաջին նուագ թատրոնի գեղարուեստականը և գաղափարականը և մի խօսքով որտեղ լաւ է դրուած եղել թատրոնի գործը, նա կարիք է ունեցել հասարակական և պետական նիւթական օգնութեան: Այդ բացատրում է նրանով, որ թատրոնը նիւթական օգուտ չի տալիս և իր ծախսերը չի ծածկում: Ժամանակակից քաղաքակրթութեան երկրներում նացիօնալ և պետական թատրոնների օժանդակութեան համար ժողովրդական գումարներից ծախսւում են մեծաքանակ միլիոններ...



Օր. Ասղիկ

Սակայն լոկ փողը քիչ է այդ գործի համար: Ինչ ասել կուզէ, որ այդ փողերը ամենից առաջ պիտի գործադրուեն աւելի նպատակայար-

մար կերպով և որ գլխաւորն է թատրոնին յատկացրած նպաստները որքան կարելի է պիտի հեռու լինեն բարեգործութեան բնոյթից: Նպաստը պիտի լինի միտեցակ հասարակական հարկ՝ յատկացրած իբրեւ մի լուսաւորութեան գործի:

Թատրոնին անհրաժեշտ են նոյնպէս՝ դերասաններ և ռեպերտուար: Ռեպերտուարը թատրոնի բարոյական դէմքն է, թատրոնական գործում ռեպերտուարն ունի նոյն դերը, ինչոր լրագրութեան մէջ, եթէ չասենք ուղղութիւնը, գէթ անպայման նրա ազնւութիւնը:

Ինչպիսի՞ արժանիք ունի հայկական ռեպերտուարը: Որքան գոհ կ'լինէի, եթէ կարողանայի ասել, որ մեր ռեպերտուարը գէթ օժտուած լինէր պատշաճի արժանիքով: Բայց հայկական ռեպերտուարը չի բաւարարում նոյն իսկ գրական համեստ պահանջներին:

Շիլլերին և Շեքսպիրին կից մեզնում բեմ են հանում մեր ինքնաբոյս, եթէ կարելի է այսպէս ասել՝ դրամատիկների գրչի խակ արդիւնքները, որոնք չեն դիմանում նոյն իսկ ամենադիջող կրիտիկայի: Մեր ռեպերտուարները զուրկ են ոչ միայն ծրագրից, այլ նոյն իսկ հետեւողական որոշ նպատակից, զուրկ են լինում շատ անգամ հասարակ կայուն իմաստից: Մեր մէջ իշխում է լոկ ոտութիւնան, և նրա վրայ յենուած ռեպերտուար է անուանում ափշի մէջ լոյս ընկած պատահական պիեսների ցուցակը: Եթէ Շիլլերի «Աւագալները» սբօր չտուին, բռնում են «Շուշանիկ»-ի տուտից: Մի ինչ որ անընդհատ ջրածգական երերում է նկատուում շարունակ մեր ռեպերտուարի մէջ: Ինչպէս կալէյօսկոպի մէջ թռչում են մի շարք պիեսներ, պիեսներ, որոնք առաջ են բերում սանութիւն գէպի թատրոնը, իսկ դրամատիքական արուեստի մէջ՝ այլասեռումն ու անկումն: Ոսելով ինքնուրոյն պիեսների մասին, ես իհարկէ չեմ ժըխտում բացառութիւնները յանձին Գ. Սունդուկեանի, Շիրվանզադէի, Ահարոնեանի և ուրիշների, բայց այն էլ չպիտի ուրանալ, որ այդ բացառութիւնները չափազանց սակաւաթիւ են:

Ինչո՞վ է բացատրուում իրերի այդպիսի դրութիւնը: Կան ասողներ, որ այդ խառնակ երեւոյթը առաջ է գալիս թատրոնի գործը ղեկավարողների անհմտութիւնից, ոմանք լուսաբանում են հասարակութեան պահանջով: Քանի որ հասարակութիւնը կանգնած է զարգացման ստոր աստիճանի վրա, միշտ գերազասութիւն կտայ թատրոնական աղբակոյտերին: Արեւմտահայ մեյքոյրամները և պատմական պիեսները ազգասիրական ճոճուան մենախօսութիւններով մեր հա-

սարակութեան աւելի է դուր գալիս, քան օտար գրականութեան գեղեցիկ արտագրութիւնները:

Գուցէ այդ բացատրութիւնները մասամբ ճիշտ են, բայց կան աւելի լուրջ պատճառներ, որոնք պայմանաւորում են թատրոնի անկումը թէ՛ գեղարուեստական և թէ՛ այլ և այլ երեւոյթների տեսակէտից:



Ի. Ի. Մուսիանով—Իմին

(Հ. Գ. Ը.—բեմն պատ. անդ.)

Այդ պատճառներից մէկը կարելի է համարել գերասանների անփոյթ վերաբերմունքը գէպի իրանց գործը: Ահա թէ ինչի մէջ է թաղուած մեր թատրոնի ծայրագոյն անբախտութիւնը: Ես միտք չունիմ այդ պարսաւանքը ուղղել անխտիր կերպով մեր գերասանական խմբերի բոլոր անդամներին, սակայն ունիմ հիմք և իրաւունք պնդելու, որ մեր թատրոնի անմիթար վիճակը ամենից առաջ և գլխաւորաբար առաջ է եկել նրանից, որ մեր գերասանների ճնշող մեծամասնութիւնը բաղկացած է այնպիսի անհատներից, որոնք ոչ մի առնչութիւն չունին գեղարուեստի հետ: Այդպիսի համբալններն են, որ կասեցնում են տաղանդաւոր և զարգացած փոքրամասնութեան ամեն մի բարի գործը:

Ինչ կարող են անել մի բուն տաղանդաւոր և բարեխիղճ գերասանները, եթէ ստուար մեծա-

մասնութիւնը չի գնահատում ոչ աշխատանք և ոչ դիսցիպլին, մինչդեռ յայտնի է, որ թատրոնական գործի յառաջադիմութիւնը անպայման կախուած է գերասանների համբաւելիութիւնից և դրամատիքական գեղարուեստական երկերի խիստ ընարողականութիւնից:

Եւ մեր գործը կազում է ոչ թէ տաղանդներ չլինելուց, այլ կանոնաւոր գիտակից գործող անհատների բացակայութիւնից: Մեր բեմական գործիչների փոքրիկ խմբակցութիւնը 50—60 հոգուց աւել չէ: Չեմ ժխտում, սրանց մէջ կան ընդունակ մարդիկ, որոնք սիրում են արուեստը և նոյն իսկ ըմբռնում նրա նշանակութիւնը, ընդունում եմ, որ այս անձնուէր ծառայողները բեմ են ոտ դրել իրանց կոչման շնորհիւ: Բայց քանի հոգի են այդպիսի ճշմարիտ հրաւիրուածները:

Կայ գերասանների և գերասանուհիների մի այլ կատեգորիա ևս, որ թատրոնական գործին նուիրուել է լոկ բեմը սիրելուց: Սակայն սրանք մի ատիճան իրաւունք ունէին այդպէս վարուելու: Նայելով սրանց ներքին աշխարհին և շըրջապատող աննպաստ հանգամանքներին, այդ կատեգորիայի գերասանները այդպիսի քայլ չէին պիտի անէին: Բեմը սրանց տեղը չէ: Այդպիսիները իրանց թոյլ կամքի շնորհիւ տեղի տալով կեանքի կուում չեն կարողացել տանել ժամանակակից հայ թատրոնի մոայլ պայմանները: Մինչդեռ այդպէս աննպատակ կերպով դոճելով իրանց գեղարուեստական տարիները այժմ ուզեն-չուզեն մնում են, հեռանալ իրանց ուժից վեր է, քանի որ կորցրել են ուրիշ ասպարէզում գործելու ընդունակութիւնը, իսկ թանձրաշերտ տիղմը բամբակ է սրանց կամքի վերջին նշոյլներն անգամ:

Աւելի բարեյաջող հանգամանքներում այս տիպի յիշածս գերասանները գուցէ և դառնային պիտանացու ոյժեր:

Այդ երկրորդ կատեգորիան է, որ նոյնպէս մեծ չէ:

Սակայն որպիսի տարրից է բաղկացած հայ բեմի գերասաններ, գերասանուհիներ համարուածների մեծամասնութիւնը: Դրանք մեծ մասամբ կազմում են այն անհատները, որոնք բեմ են ոտ դրել ոչ միայն առանց ունենալու լուրջ կոչում, այլ նոյն իսկ զուրկ ներքին ձայնից: Սրանք չեն ոգևորում անգամ բեմի խաբուսիկ արտաքինով: Չուրկ լինելով ընդունակութիւնից, չգտնելով յաջողութիւն կեանքի մէջ և ոչ մի աշխատանքի ընդունակութիւն ցոյց չտալով, սրանք գնում են գունակութիւն ցոյց չտալով, ծաղրում են իրանց բեմ: Այդպիսիները ցինիկաբար ծաղրում են իրանց արհեստակիցների ինքնազարգացումը և ճշմարիտ

բուն տենչը գէպի թատրոնական աշխատանքը: Այդ անտարբերութեամբ նոյն իսկ շատ խեղաթիւրիչ ազդեցութիւն են անում այն թարմ, երիտասարդ ուժերի վրայ, որոնք անբախտութիւն են ունենում մտնելու ինքնակոչների մութ շըջանք:

Վերջապէս, վերաւորական չէ՞ արդեօք խոստովանելու, որ մեր բեմական գործիչների ութ տասներորդականը բաղկացած է ոչ միայն թերուներից, այլ նոյն իսկ համբաւներից, իսկ ինքնակենսութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել: Այդ անձինք չեն ընդունում կրթութեան բարեբեր ազդեցութիւնը թէ՛ իրանց և թէ՛ իրանց ընտրած արհեստի համար: Արդեօք սրանից աւելի ծանր ստորացուցիչ միջոց կայ, ինչպիսին ընտրել է իր գործի համար հայ գերասանը: Արդեօք



Վ. Փափաղան

այդ վերաբերմունքը չի՞ վկայում այն փաստը, թէ բաւական է միայն գերասան անունը վերցնել, դուրս գալ բեմ, որպէսզի իրաւունք ստանալ բեմական ծառայող համարուելու համար: Ինչ ասել մահկան ծառայող համարուելու համար: Ինչ ասել կուզէ, այդպիսի վերաբերմունքի գլխաւոր հետեւանքը մեր առաջ է: Մեզնում խրաքանչիւր թեւաւոր, դիլետանտ, բաց ճակատով և յանդգնաբար դուրս է գալիս ասպարէզ մրցելու պրօֆեսիօնալ գերասանի հետ, ինչո՞ւ—որովհետեւ բեմական արհեստի վերաբերմամբ կազմուած ունինք մի տեսակէտ, որ բոլորովին հեռու է բեմի իսկական կոչումից: Բեմը մի արհեստ է մեր տեսակէտով և արհեստ ստորին տեսակի:

Այգլիսով մեր ներկայ անցողակի ծանր ժամանակում մեր բեմը կարիք ունի կրթուած, իրանց գործը յարգող բեմական գործիչներին և, ինչ ասել կուզէ, այդ տեսակ էլ ղեկավարողներին:

Եւ երբ ինձ ու ինձ հարց եմ տալիս, թէ ինչ պիտի անել, որպէսզի բարձրացնենք մեր բեմական գործը իր ներկայ անկեալ դրութիւնից, հոգի ու շունչ տանք նրան,— մի պատասխան ունիմ միայն՝ տուէք դերասաններին կրթութիւն եւ զարգացում: Իմ անձնական դիտողութիւնները և գործի բազմակողմանի ուսումնասիրութիւնը բերել են ինձ այդ համոզման: Եւ իսկապէս ոչ կանոնները լուրջ ուսկերտուարի վերաբերմամբ, ոչ թատրոնի ժողովրդականացումը, և ոչ մի ուրիշ միջոց չեն կարող բերել շօշափելի իրական օգուտ թատրոնին, մինչև որ մեր դերասանների ստուար մեծամասնութիւնը չզաղարէ գեղարուեստի համբալիններին իր շրջանը ընդունելուց:

Մեր դերասանների այն փոքրիկ խմբակցութիւնը, որ տոգորուած է լուրջ աշխատանքով, պիտի միանայ և մի անգամ ընդ միշտ դուրս վանէ իր շրջանից գեղարուեստի համար անօգուտ և փաստակար տարրերին: Այգլիսով համբալիններին միջոց տալով հեռանալու և ընտրելու իրանց համար գործունէութեան մի այլ ասպարէզ, կրիւրեղացնեն իրանց շարքերը: Այդ համբալիններին կարելի է խղճալ, կարելի է օգնութեան ձեռք կարկառել, բայց թատրոնը հէնց իր շահերի տեսակէտից պիտի ամեն կերպ իրան հետու պահէ թերու-համբալիններից: Դրա մէջ է հայ թատրոնի փրկութիւնը:

Թատրոնը ծառայում է հասարակութեան: Յանկալի արդիւնք կրերէ նա այն ժամանակ, երբ կանգնած կլինի իր բարձրութեան վրայ՝ բառիս ամենալուրջ իմաստով, այլ ոչ թէ կղանայ հազիւ-հազ գոյութիւնը քաշ տուող և հասարակութեան վզին ընկած մի բարեգործական հիմնարկութիւն:

Երբ մեր դերասանական խումբը բաղկացած կլինի գործին նուիրուած լուրջ անձինքներից, այն ժամանակ միայն կարելի կլինի իրագործել եթէ ոչ բոլոր, գէթ ծրագրերների ու բարի ցանկութիւնների մեծագոյն մասը: Այդ ժամանակ միայն հայ թատրոնի վերաբերուած բոլոր բարի

ցանկութիւններն ու բարգաւաճումներն կարելի և հնարաւոր կլինի իրագործել կեանքի մէջ: Այն ժամանակ կարելի է յուսալ, որ մեր երկրի հասարակական կազմի մէջ հայ թատրոնը կընէ արժանաւոր տեղը: Այդ ժամանակ հնարաւորութեան



Օր. Սաթիկ Աղամեան

թիւն կստանայ գլուխ բերելու իր ստանձնած պատուաւոր դերը, այն է՝ ծառայել ժողովրդի զարգացման գործին: Միայն այդ ժամանակ մեր թատրոնը կհանդիսանայ լուրջ ֆակտոր, գործօն, հասարակական բարոյական յառաջադիմութեան գործում...

Մ. ԶԱՐԱՐ

1907—8

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հ. Դ. Ը. Վարչութեան ներկայ 1907/8 թիւ թատերաշրջանի ղեկուցումը կազմում է ընկերութեան գործունէութեան 6-րդ տարեշրջանի տեղեկագիրը:

Վարչութիւնս ղեկուցանելով ներկայ տեղեկագիրը՝ գոհունակութեամբ պէտք է նկատէ, որ առանձնապէս դժուարութիւններով ծանրաբեռնուած 1907/8 թատերաշրջանը տուեց շատ բաւարար արդիւնքներ:

Թէ որպիսի դժուար պայմանների մէջ ընկերութիւնը պէտք է սկսէր իւր գործունէութիւնը անցեալ սեզոնի սկզբից, դա կարելի է տեսնել անցեալ տարուայ ընդհանուր ժողովի արձանագրութիւնից՝ ուր քննուած էր նախորդ տարուայ հաշուետուութիւնը:

Ընկերութեան գործերի դրութիւնը այն ժամանակ այնպէս էր, որ նոյն իսկ ընդհանուր ժողովում հարց յարուցուեց ընկերութեան գործունէութեան դադարեցման մասին: Ուրախութեամբ պէտք է նկատել, որ այդ բանը չկատարուեց, և այժմ Դ. Ը. Ը. գործերը այնքան ուղղուեցին, որ ոչ թէ այժմ կարող է կասկած լինել նրա գործունէութեան դադարեցման կամ փակման մասին, ընդհակառակը՝ հիմք ունինք յուսալու, որ այժմ ընկերութիւնը, դրուած լինելով գործունէութեան ճիշտ շաւղի վրայ, գուցէ և ոչ այնքան շուտով պէտք է հաստատ և համոզուած քայլերով գնայ առաջ, հետզհետէ լայնացնելով իւր գործունէութեան շրջանակը:

Ընկերութեան դրամական հաշուետուութիւնից կերևայ, թէ որքան այս տարի բարեկարգուել է մեր ֆինանսական դրութիւնը, իսկ դրանից, ինչպէս ամենքիդ յայտնի է, կախուած է ընկերութեան գոյութիւնը: Ընկերութեան ֆինանսական դրութեան բարելաւելը բացառուում է գործավարութեան սխտեմը փոխուելով, այս տարի ընկերութիւնը հրաժարուելով անտրէպրիզայից—

թատրոնական ամբողջ գործը յանձնեց դերասանական ընկերակցութեան, որը ստանում էր Դ. Ը. Ը. ընկերութիւնից նպաստ, և միևնոյն ժամանակ դերասանական ընկերակցութիւնը աշխատելով Վարչութեան հետ միասին վայելել է ամեն տեսակ աջակցութիւն Վարչութեան կողմից հնարաւորութեան սահմաններում:

Դերասանական ընկերակցութիւն կազմակերպելու և թատրոնական գործը նրանց յանձնելու մասին իրան ժամանակին մանրամասն գեղարուած է ընդհանուր ժողովներում՝ որոնք ար-



† ՌԵՏՈՆԻ

ձանագրուած են, ուստի երկար չենք խօսելու այս առթիւ, այսքանը կասենք միայն, որ մեր յոյսերը իրականացան, և ստացուած արդիւնքները մեզ գալիս են ապացուցանելու, որ գործավարութեան նոր եղանակը միակ միջոցն է, որով կարելի է շարունակել ընկերութեան գործունէութիւնը՝ որի նպատակն է նպաստել հայերէն ներկայացումներ կազմակերպել ներկայացումներ, որպիսի գործունէութիւնը կապուած է ահապէս դրամական ծախսերի, դժուարութիւնների հետ, և պէտք է լինին մարդիկ՝ որոնք յատկապէս և բացառապէս պա-

րապէն այդ գործով: Միւս կողմից ընկերակցու-
թիւնը ունի այն առաւելութիւնը, որ դերասան-
ները շահագրգռուած լինելով թատրոնական գոր-
ծում, զարգացնում է նրանց մէջ ինքնագործու-
նէութեան գիտակցութիւնը՝ լաւ հասկանալով որ
իրանց վերաբերմունքից դէպի գործը և իրանց
էնէրգիայից է կախուած գործի յաջողութիւնը:
Ինչ վերաբերում է դերասանների վարձատրու-
թեան, այդ կողմից ևս ընկերական սկզբունքով
գործաւարութիւնը չի վնասում դերասանների շա-
հերին, այսպէս օրինակ ներկայ սեզոնում դերա-
սանական ընկերակցութեան անդամները, յաջո-



Պ. Յ. ԷՆ Տ. Ս. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՆԵՐ

(35 sura ց աւել անձնուէր քաւերաւորներ)

ըութեամբ վերջացնելով սեզոնը, ստացան իւրա-
քանչիւր մարկային 87⁰/₀, սակայն առաւել պար-
զելու համար այս կարեւոր խնդիրը, պէտք է աւե-
լացնել, որ դերասանները սեզոնի սկզբում պատ-
րաստ էին պակասեցնել իրանց ռոճիկը՝ մենակ
թէ Վարչութիւնը երաշխաւորէր այգալիսին և ահա-
ւասիկ գիցուք այն դերասանը, որ նախորդ տա-
րին ստանում էր 200 ր. և այս սեզոնին համա-
ձայն էր ռոճիկով ծառայելու ուրախութեամբ 150
ր.—ստացաւ մարկանքով 164 ր.: Այսպէս էր այս
տարուայ անդրանիկ դերասանական ընկերակցու-
թեան գործի արդիւնքը, անշուշտ ապագայում
այգալիսին կըլինի աւելի փայլուն, երբ Ընկերու-
թեանն միջոցները կբարելաւին և հնարաւորու-
թիւն կունենանք տալ աւելի մեծ սուբսիդիա քան
այս տարի, երբ ընկերութեանն ֆինանսական գրու-
թիւնը կատարելապէս յուսահատեցուցիչ էր:

Դրամական հոգսերը մեծապէս ազդեցին վար-

Հուլիսին ամբողջ գործունէութեան վրայ, այնպէս
որ չէր կարելի մտածել գործունէութեան ուրիշ
ձևիդերի մասին, մենք պէտք է մտածէինք անյե-
տաձգելի պարտքերի վճարման մասին և ստեղ-
ծելու նօրմալ պայմաններ ընկերութեան գործերը
կանոնաւոր տանելու և մեր ջանքերը, ինչպէս
հաշիւները ցոյց են տալիս, ի զուր չանցան: Վար-
չութիւնս կարծում է, որ կատարել է 1907/8 թւին
այնքան, որքան հնարաւոր էր:

Անցնենք այժմ մեր հաշվետուլեան արան-
ձին բաժիններին:

ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

1907 թ. մարտ ամսին կայացաւ Դր. Լնկ.
ընդհանուր ժողովը՝ ուր կայացան Վարչութեան
նոր անդամներ ընտրութիւնները՝ հերթով դուրս
գնացողներ ժողովէն: Հին կազմից նորից վեր
ընտրուեցին Վարչութեան անդամներ՝ պ. պ. Ռ. Յով-
հաննիսեան և Կ. Շիրինեան (առաջ փոխ անդամ
էր), ուր անդամներ ընտրուեցին՝ պ. պ. Մ. Զա-
րար և Մ. Համբարձումեան, փոխանդամ ընտրուեց՝
պ. Գ. Սարեան, մնացած փոխանդամների ընտ-
րութիւնը յետաձգուեց հետեւեալ ընդհանուր ժո-
ղովին: Այսպիսով Վարչութեան կազմը որոշուեց
այսպէս. Իշխ. Մ. Թումանեան, պ. պ. Ա. Խատի-
սեան, Ռ. Յովհաննիսեան, Գ. Ծուրինեան, Կ. Շի-
րինեան (ըլլորը նախորդ կազմից), Մ. Զարար և
Մ. Համբարձումեան: Իշխ. Մ. Թումանեանի բա-
ցակայութեան պատճառով հրաւիրուեց նրան փո-
խարինելու փոխանդամ պ. Սարեան:

Առաջին վարչական նիստում ընտրուեցին Վարչութեան նախագահն պ. Ռ. Յովհաննիսեան, փոխ-նախագահ Մ. Զաբար, քարտուղար պ. Կ. Շիրինեան, գանձապահն պ. Գ. Ծուրինեան: Այս ձևով Վարչութիւնս գործեց մինչև հետեւեալ ընդհանուր ժողովը, որը կայացաւ նոյն տարուայ յունիս ամսին: Այդ ընդհանուր ժողովից յետոյ պ. Ռ. Յովհաննիսեանի նախագահութիւնից հրաժարուելու պատճառաւ ընտրուեց պ. Մ. Զաբար, փոխ-նախագահ Մ. Զաբարի փոխարէն՝ պ. Գ. Ծուրինեան, իսկ գանձապահի պաշտօնի համար ընտրուեց՝ պ. Մ. Համբարձումեան:

Անցեալ տարուայ սեպտեմբերին Իշխ. Մ. Թումանեանի Թիֆլիս վերադառնալուց՝ Վարչութիւնս հրաւիրեց նրան հերթական նիստերին, սակայն Իշխ. Մ. Թումանեան հիւանդութեան պատճառաւ խնդրեց իրան ազատ կացուցանել Վարչութեան անդամի պարտականութիւններէն և համարել իրան հրաժարուած այդ պաշտօնից։

Վարչութիւնը յայտնելով իրան ցաւակցու-
թիւնը Իշխ. Մ. Թումանեանի Վարչութեան կազ-
մից հեռանալու պատճառաւ, յայտնեց իր խորին
շնորհակալութիւնը նրա նախորդ տարիների ըն-
կերութեանս մատուցած եռանդուն գործունէու-
թեան համար և այդպիսի ընկերութեան հիմնա-
դիրներից մէկը եղիլ է նա:

դիրենբրից մէկը եղել է նա:
Իշխ. Մ. Թումանյանին հրաժարուելու պատ-
ճառաւ վարչութեան անդամութիւնից, ընկերու-
թեան ընդհանուր ժողովում սեպտեմբերին ըն-
թեան ընդհանուր ժողովում սեպտեմբերին ըն-
թեան ընդհանուր ժողովում սեպտեմբերին ըն-
թեան ընդհանուր ժողովում սեպտեմբերին ըն-
թեան ընդհանուր ժողովում սեպտեմբերին ըն-

Կարչուլի թեման ղրղման հիման վրայ, պ. Մ. Աթաբեկեան հրաւիրուեց մասնակցելու Վարչուլի թեման գործերում վճռողական ձայնի իրաւունքով:



Տիկ. Վարդուհի

Վարչութիւնս մինչև այժմ գործում է հե-
տևեալ կազմով. նախագահ Մ. Զարար, փոխ-
նախագահ Գ. Ծուրինեան, քարտուղար Կ. Շիրի-
նեան, գանձապահ Մ. Համբարձումեան, անդամ-
ներ՝ Ա. Խատրսեան, Ռ. Յովհաննիսեան, Լ. Բա-
բայեան և Մ. Աթարէգեան:

Բայեան և Մ. Աթաբեգեանն:
Վարչութիւնս 1907 թ. մարտի 25-ից մինչև
31 մայիսի 1908 թ. ունեցել է ընդամենը 51 նիստ:
Սկզբում նիստերը նշանակուած էին ըստ պա-
հանջին՝ սակայն ոչ պակաս քան մի անգամ ամ-
սէնը, այնուհետեւ իւրաքանչիւր շաբաթ, երբեմն
և երկու անգամ շաբաթական: Նշանակուած 51
նիստերից անդամներէ բաւարար թուով ներկայ
չլինելու պատճառով չեն կայացել 4 նիստ:
51 նիստերից ներկայ են

Բոլոր նշանակած 51 նիստերից մերժվել է 11 (մի եղև՝ Մ. Զարար 51 անգամ, Շիրինեան 35 (մի քանի ժամանակով նա բացակայ է եղել քաղաքից),

Մ. Համբարձումեան 34, Ռ. Յովհաննիսեան 33,
Գ. Ծուրինեան 26, Ա. Խատիսեան 29, Լ. Բա-
բայեան 18 (մտել է կազմի մէջ սեպտեմբերին),
Գ. Սարեան 16 (հեռացաւ սեպտեմբերին), Մ. Ա-
թաբէգեան 15 (մտել է կազմի մէջ սեպտեմբերին):

Վարչութեանս մի քանի նիստերին հարկաւոր դէպքերում հրաւիրուած են եղել նաև ընկերութեանս անդամները, դերասանները և կողմնակի անձինք: Վարչութեան նիստերին մասնակցել են՝ տ. տ. Սպենդիարեան, Մամուլեան, Մակարեան, պ.պ. Տ. Յովհաննիսեան, Տ. Զաւէն, Հ. Առաքելեան, Կ. Ալիխանեան, Գ. Կաֆեան, Մ. Գեորգեան, Խոջամիրեան, Յ. Մելիք-Բախտամեան, Յ. Սունդուկեան, Յ. Սպենդիարեան, Ա. Մելիք-Բեգլարեան, Ինժ. Զոհրաբեան, Ս. Քափանակեան, Ա. Կուսիկեան, Սաֆրազեան, Կ. Մամուլեան, դերասաններ՝ Արշ. Յարութիւնեան, Վրոյր, Մամիկոնեան, Միրզոյեան, Տիրաջեան, Տէր-Դաւթեան և այլն:

և այլն։
Վարչութիւնս բացի անմիջական գործու-
նէութիւնից թատրոնական ներկայացումները փա-
կելու, սեզօնի ընթացքում նաև աշխատել է հե-
տեկալ հարցերի վրայ. թատրօնի 50-ամեայ յօ-
բեկեանը կազմակերպելու, սեփական թատրոն
կառուցանելու համար նիւթեր, տեղեկութիւններ
և զեկուցում՝ մշակելով, ընկերութեան կանոնա-
դրութեան վերաքննութեան խնդրի, դերասանն ու
կրեկանի 25-ամեայ յօբեկեանական մասնաժողով
կազմակերպելու և նրանց նպաստելու և այլն խըն-
դիրներով։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Հաշվետու թեան տարուայ սկզբին խնդակս և նախորդ տարիները Վարչութեան նիստերը կայանում էին այս կամ այն Վարչութեան անդամի ընակարանում: Վարչութեան զանազան անդամներին մօտ նաև պահւում էին ընկերութեան ղոկումնները: Վերաստուգող յանձնաժողովը անցեալ տարի մատնացոյց էր արել առանձին գրասենեակ ունենալու անհրաժեշտութիւնը: Թէև այս խնդրի լուծումը կախուած էր նաև զգալի ծախսերի հետ, սակայն ի նկատի առնելով գործի օգուտը և կեանքի մէջ զգացուած անհրաժեշտութիւնը ունենալ սեփական ընակարան, Վարչութիւնը յունիս ամսին վարձեց մի փոքրիկ գրասենեակ Ազնուականների քարվանսարայում: Այստեղ տեղափոխուեցին ընկերութեան գրադարանը և բոլոր ղոկումները: Այս ընակարանը վարձելուց շատ չանցած երեւաց որ սաստիկ անյարմար է Վարչու-

թեանս համար՝ մանաւանդ այն ժամանակ, երբ պարզուեց, որ Արտիստիքական Ընկերութեան թատրոնում մենակ մի օր են տալիս շաբաթական փորձերի համար, ուրեմն հարկաւոր էր ունենալ այնպիսի մի բնակարան՝ ուր կարելի լինէր նաև փորձերը կատարել: Բայց որովհետև արդէն աշունք էր և հնար չկար քաղաքի կենտրոնում արձակ և յարմար բնակարան գտնել, Վարչութիւնս բաւականացաւ վարձելով երկու սենեակ «Մեղու» ընկերութեան կից Գանովսկի փողոցի վրայ:

Ներկայ տարուայ մարտ ամսից արդէն ընկերութեան գրասենեակը փոխադրուած է շատ արձակ և յարմար բնակարան Քաղաքային Վարչակային Ընկերութեան շինութեան մէջ Պուշկինեան փողոցի վրայ: Այս բնակարանում բացի ընկերութեան գրասենեակից նաև տեղաւորուած է ընկերութեան գրադարանը, կայ առանձին սենեակ, ուր պետք է տեղաւորել նախագծած թատրոնական մուլէտմը, իսկ մեծ և արձակ դահլիճում այժմ կառուցուած է մի փոքրիկ բեմ փորձերի համար, այս դահլիճը Վարչութիւնս մտադիր է գործածել և իրեն աուդիտորիա թատրոնական կուրսերի համար: Սեփական բնակարանը զարգարուած է անհրաժեշտ կահ-կարասիքով, որոնք ձեռք են բերուած փողով էփան և կամ նուիրուած են զանազան անձանց և հաստատութիւնների կողմից: Գրասենեակի և ծառայի վարձը սկզբից երեք ամիսներում կէսը վճարում էր ընկերութիւնը, իսկ միւս կէսը Վարչութեան նախագահ պ. Մ. Ջարար, իսկ այնուհետև սեզոնի ընթացքում Վարչութիւնս ստանում էր գերաստանական ընկերութիւնից փորձերի համար ամսական 15 ռուբլի:

Ներկայումս ընկերութիւնը վճարում է ամսական 35 ռ. բնակարանի, ծառայի և լուսաւորութեան փող, որի մի մասը ծածկուած է այն վճարներով, որոնք ստացվում են դահլիճը փորձերի համար քրեհով տալուց և զանազան նիստեր կազմակերպելուց և այլն:

ԳՐԱԴԱՐԱՆ

Ինչպէս վերևում յիշուեց, ընկերութեան գրասենեակին կից կազմուած է նաև գրադարան: Ուրիշ հարցերի շարքում Վարչութիւնս աշխատել է կարգի բերել և գրադարանի խնդիրը: Դժբախտաբար ընկերութեանս սուղ միջոցները հնարաւորութիւն չէին տալիս շատ բան անել, և մենք ստիպուած էինք առայժմ բաւականապէս նրանով, որ բոլոր գրքերը և պիեսները կարգի են բերուած, ցուցակագրուած, ձեռներ նշանակած,

ընկերութեան գրասենեակում ունինք բացի պիեսներից նաև թատրոնի և բեմիս վերաբերեալ զանազան գրքեր թէ հայերէն և թէ ռուսերէն և ուրիշ օտար լեզուներով:

Այս տարի այրի տիկ. Պետրոսեանը նուիրեց ընկերութեանս իւր հանգուցեալ ամուսնու Գէորգ Պետրոսեանի գրադարանը բաղկացած 300 գրքերից մօտ 500 ռ. արժողութեամբ, որի համար Վարչութիւնս ընկերութեանս անունից յայտնեց տիկ. Պետրոսեանին խորին շնորհակալութիւն և որոշեց՝ Պետրոսեանի գրքերը պահել առանձին պահարանում, նուիրած յանուն հանգուցեալ Պետրոսեանի: Ընկերութեան գրադարանին նուիրել են



Տիկ. Մայսուրեան

նաև գրքեր տ. Մայսուրեան, պ. պ. Մ. Ջարար, Ռ. Յովհաննիսեան և այլն: Ներկայումս ընկերութեան գրադարանում կայ մօտ 500 հատոր գրքեր և պիեսներ մօտ 1000 ռ. արժողութեամբ:

Ընկերութեան գրադարանին կից կայ նաև մի փոքրիկ ընթերցարան գերաստանների և ընկերութեան անդամների համար, ուր ստացուում են պարբերական հրատարակութիւններ և ժուռնալներ՝ «Յուշարար», «Սաթարալ», «Տարադ», «Театръ и Искусство», «Русский Артистъ», «Le Theatre», «Bühne und Welt» և այլն:

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Դերասանական ընկերակցութեան մէջ այս տարի մտել են. տ. տ. Արաքս, Ջամուկեան, Մայսուրեան, Մէլիքեան, Յասմիկ, Նոնիկեան, Վարդուհի, օր. Ծուրինեան, պ. պ. Դիմաքսեան, Ջարիֆեան, Թորոսեան, Մամիկոնեան, Միրզոյեան (հեռացաւ նոյեմբերին) Մէլիք-Ալլահվերդեան, Յարութիւնեան, Ռշտունի, Վրոյր և Տէր-Դաւթեան, սցենարիստ Տիրացեան, յուշարարներ՝ Ջարչարեան և Շահնազարեան:

Բացի սրանցից այս տարի Վարչութեան հրաւերներով նաև մասնակցել են՝ տ. տ. Դուրեան-Արմենեան, Ջարէլ, տ. Ի. Ալեքսիարեան, օր. օր. Ս. Աղամեան և Բերեթանեան, պ. պ. Սաֆրազեան, Ա. մ. Մանգինեան, Միրզոյեան, Արեւեան, Արմենեան, Աղայեան, Ամօ-Պարազեան, Աւետեան, Թաշահեան, Վանշիր, Բերոյեան և այլն:

Աշխատակցել են պ. պ. Նզեկեան, Բեթանեան, Դաւիթիանեան, Իփէկեան, Սարեան, Մակարեան, Փանոսեան և այլն:

Վերև յիշուած անձնաւորութիւններից խաղացել են, Տէր-Դաւթեան 52 անգամ, Յարութիւնեան 41, Մամիկոնեան 40, Ջարիֆեան 36, Վրոյր 35, Մայսուրեան 34, Նոնիկեան 34, Ռշտունի 32, Թորոսեան 29, Յասմիկ 28, Մէլիքեան 26, Մէլիք-Ալլահվերդեան 21, Արաքս 20, Ջամուկեան 20, Դիմաքսեան 17, Վարդուհի 13, Միրզոյեան 12, Ծուրինեան 6, Արեւեան 4, Աղայեան 4, Վանշիր 4, Աղամեան 4, Բերոյեան 4, Արմենեան 3, Միրզոյեան 2, Ջարէլ 2, Սաֆրազեան 2, Աւետեան 2, Սալեքիարեան 1, Թաշահեան 1, Ամօ-Պարազեան 1, Ա. մ. Մանգինեան 1, Արմենեան-Դուրեան 1:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Ներկայ հաշուետւութեան տարին տրուել են ներկայացումներ, Արտիստիքական թատրոնում 23, Արքունական թատրոնում 1, և Ժողովարանում 27, ընդամենը 51 ներկայացում: Նշանակած ներկայացումներից չը կայացան 3-ը, որոնցից 2-ը Վեհափառ Կաթողիկոսի մահուան պատուով, իսկ 3-րդը Պետրոսեանի ընտանիքի օգտին մուտք չը լինելու պատճառաւ: Ներկայացումներից մէկը ցերեկուայ էր, 4-ը բենեֆիսային, 2-ը յօբելեանական:

ՌԵՊԵՏՈՒՄ

Ռեպերտուարի հարցը համարեա թէ ամենածանր խնդիրներից մէկն է մեր թատրոնական գործում: Իւրաքանչիւր անգամ պիեսներ ընտրելիս պետք է ի նկատի առնել ոչ թէ միայն գրական, գեղարուեստական և բեմական արժանիքները, այլ և այն, թէ նա որքան մեր գերասանները, ոյժերին համապատասխան է, կարող է այդ պիեսան մուտք տալ, որովհետև մեր գրամական պիեսան մուտք տալ միջոցներով անկարելի է այս հանգանակը անտես անել: Բացի այս մեր ինքնուրոյն մանքը անտես անել: Բացի այս մեր ինքնուրոյն պիեսաների սակաւութեան պատճառաւ, ստիպուած ենք դնելու թարգմանական պիեսաներ, որոնց ամենագլխաւոր յաջողութիւնը կարող է

համարուել լաւ և շուտափոփոխ թարգմանութիւնը, մինչդեռ մեզանում թարգմանելու և իրաւունք ձեռք բերելու համար գործ է դրուում երկար ժամանակ, մանաւանդ որ այս տարի հանգամանքները այնպէս էին դասաւորուած, որ նոյն իսկ սեպտեմբերի սկզբներին անգամ հաստատ չը գիտէինք խումբ ունենալու հնք և ներկայացումներ կայանալու են, ուրեմն և նախապէս պիեսաներ թարգմանել տալ չէր կարելի:

Չընայած բազմաթիւ դժուարութիւններին, Վարչութիւնս գործ դրեց բոլոր միջոցները հնարին եղածին չափ կարգաւորելու և բարելաւելու ռեպերտուարը, և եթէ մեզ չէ յաջողուել կատարելապէս լաւ ռեպերտուար ունենալ մասամբ պետք է բացատրել նորանով որ նախ բենեֆիսային և ընդհանրապէս չը կամեցան հրաժարուել բենեֆիսի համար պիեսաներ ընտրելու հնաւանդ իրաւունքից, և երկրորդ Վարչութիւնը կամենալով խրախուսել մեր մէջ ինքնուրոյն պիեսաներ գրողներին, գտնում էր օգտաւէտ այս բանիս համար խտապահանջ չը լինել դեպի այդպիսիք և բեմ հանելով նրանց գրուածքները ոգեւորել հայ գրողներին: Եթէ Վարչութիւնս լինէր սաստիկ խտապահանջ դէպի մեր ինքնուրոյն գրողները, գուցէ ստիպուած լինէինք և ոչ մի հատ ինքնուրոյն պիեսա դնելու: Սեզոնի ընթացքում ընդամենը խաղացուած են 52 պիեսա, նրանցից 29-ը Արտիստիքական և Արքունական թատրոններում, իսկ 23-ը Ժողովարանում:

Սաղացուած պիեսաները եղել են. 18 դրամա, 2 տրագեդիա, 3 պամական պիեսաներ, 11 վօդովիլ, մնացած 18 կոմեդիաներ: Կոմեդիաները խաղացուել են գլխաւորապէս Ժողովարանում: Մի անգամից աւել խաղացուել են 9 պիեսա. «Բաղնիսի բոխչա», «Ժան-Ռուլ», «Տօնածառ», «Նըշանուածներ», «Աւազակներ», «Ժորժ-Դանդէն», «Սպանուած աղաւնի» և այլն, «Արցունքի հովիտը» երկու անգամ:

Յիշուած ռեպերտուարում 23 պիեսաները եղել են ինքնուրոյն, իսկ 29-ը թարգմանական, բոլոր խաղացած պիեսաներից 14-ը առաջին անգամ են խաղացուել, մնացած 32-ը խաղացուած են եղել թիֆլիսում:

Սաղացուել են հետեւեալ հեղինակների պիեսաները: Սունդուկեանցի 4 պիեսան, Ահարոնեանի 2, Շիրվանզադէի 2, Պարոնեանի 2, Չեխովի 2, Ա. Արեւեան 1, Փափազեան 1, Շանթ 1, Լ. Մանուէլեան 1, Սահառունի 1, Իրոն 1, Շիլլեր 1, Օկ. Միրզո 1, Հաւապման 1, Սարգու 1, Պշիբիշևսկի 1, Գուցկով 1, Սարգարեանի 1:

1907 թ.

- Սեպտեմբեր 24, երկուշ. 1) Արցունքի հովիտը, դրամա 4 գործ., Ա. Ահարոնեանի. 2) Էս էլ քի մոցիքլուծիւն, վոդ. 1 գործ. Տէր-Գրիգորեանի. (Սեզոնի բացումը):
- Հոկտ. 1, երկուշ. 1) Վարքի թանշան, պիես 1 գործ. Ա. Շվալերի, թարգմ. Ե. Ամիրեանի: 2) Կարմիր բրդիկ, վոդ. 1 գործ. թարգմ. Մանկեանի:
- Հոկտեմ. 8, երկուշ. Մենակ մարդիկ, դրամա 5 գործ. Հաուպտմանի, թարգ. Վ. Տիրացեանի: (Յոգուտ «Մեղու» աշխատանքի տան):
- Հոկտեմ. 15, երկուշ. Դոկտոր Շտոկման, (Ժողովրդի թշնամին) դրամա 5 գործ. Իբսենի, թարգ. Հախումեանի: (Մասնակցութեամբ դերաս. Յ. Արեւիկեանի):
- Հոկտեմ. 22, երկուշ. 1) Ճամբուն վրայ, պիես 5 գործ. Լ. Շանթի: 2) Մկնիկ, վոդ. 1 գործող. փոխադ. Վրոյրի:
- Հոկտեմ. 29) Հերթական ներկայացումները յետաձգուեցան Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահուան նոյեմբ. 5 առթիւ:
- Նոյեմբ. 8, հինգշ. 1) Եօլանտա, դրամա 1 գործ. Անդերսենի: 2) Բաղնիքի բոխչա, կատակ 2 գ. Գ. Սունդուկեանցի:
- Նոյեմբ. 12, երկուշ. 1) Նշանուածներ, դրամա 3 գործ. Ա. Աբելեանի: 2) Տոնածառ, պիես 1 գ. Նեմիրովիչ-Նանչենկոի:
- Նոյեմ. 19, երկուշ. Բոհեմ, կոմ. 5 գործ., Միրոսլավ, թարգ. Վ. Տիրացեանի:
- Նոյեմբ. 26, երկուշ. Ժան-Ռուլ, դրամա 5 գործ. Օ. Միրբորի:
- Դեկտ. 3, երկուշ. Հայրենիք, դրամա 5 գործ. Վ. Սարգսի, թարգմ. Նեյեանի: (Մասնակցութեամբ Յ. Արեւիկեանի):
- Դեկտ. 10, երկուշ. 1) Եւգենէ, դրամա 3 գործ. Շիրվանզադէի: 2) Ոգի Հայաստանի, կենդանի պատկեր: (Մասնակցութեամբ դերասանուհի Դուրեան-Արմենեանի և դերասան Արմենեանի):
- Դեկտեմ. 17, երկուշ. 1) Ուրուականներ, դրամա Իբսենի, III. գործ. 2) Արցունքի հովիտ, դրամա Ահարոնեանի, 1 գործ. Յ. Արեւիկեանի 25-ամեայ բնական գործունէութեան: 3) Յօրեկանական հանդէս: 4) Կրեյնսկու հարսանիքը, կոմիկա Սուխով-Կորբուլինի—II գործ.
- Դեկտ. 31, երկուշ. Ժան-Ռուլ, դրամա 4 գործ. Օ. Միրբորի:

1908 թ.

- Յունվարի 7, երկուշ. Սպանուած աղանի, դրամա 4 գործ. Նար-Դոսի:
- Յունվարի 14, երկուշ. Կարմիր մարդը, 5 գ. Վ. Սահառունու: (պ. Յարութիւնեանի բնակարան):
- Յունվար 21, երկուշ. Ուրիշ-Ակոստա, դրամա 5 գործ. Գուցկովի: (Զարիֆեանի բնակարան):
- Յունվար 28, երկուշ. 1) Հաջի-Սուլէյման, ֆարս-կոմիդ., Գուրգենբէկեանի: 2) Հայոց թատրոնի յիսնամյակը, գեկուցում Լ. Բաբայեանի: 3) Պէպո, կոմ. Սունդուկեանի, I գործ. 4) Պատի համար, դրամա Շիրվանզադէի, IV գործող. 5) Մահը, պոէմա Ահարոնեանի: 6) Հայոց թատրոն, կենդանի պատկեր: 7) Յօրեկանական հանդէս (Հայոց թատրոնի 50-ամեայ յօրեկեանի առթիւ):
- Փետր. 4, երկուշ. 1) Ժորժ Դանդէն, կոմ. 4 գործ. Մօլլիեռի, թարգ. Թիֆլիսի բարբառով, Գար. Սունդուկեանի: 2) Օսկան Պետրովիչը դժոխքում, ֆարս վոդվիլ 1 գործ. Գ. Սունդուկեանի: 3) Օսկան Պետրովիչը դրախտում, ֆեերիա 1 գործ. Աղամ Սարգսեան Արեւշատեանի: (Տէր-Իսախանի բնակարան):
- Փետր. 11, երկուշ. 1) Սեւ թռչունը, դր. Ա. Ահարոնեանի: 2) Եւ այլն, կատակ. գ. Գ. Սունդուկեանի:
- Փետր. 18, երկուշ. Աւագակներ, ողբերգ. Շիլլերի: (Մասնակցութեամբ Սաֆրազեանի):
- Փետր. 21, հինգշ. Շուշանիկ, ողբերգ. 3 գործ. Կարինեանի, երեկոյեան՝ Մեծն Վարդան, ողբերգ. 5 գործ. Վ. Տիրացեանի:
- Մարտի 23, կիրակի. Աւագակներ, ողբերգ. Շիլլերի:

1907 թ.

- Նոյեմ. 10, շաբաթ Պէպո, կոմ. 3 գործ. Գ. Սունդուկեանի:
- Նոյեմ. 17, շաբաթ Բաղնիքի բոխչա, Գ. Սունդուկեանի:
- Նոյեմբ. 24, շաբաթ 1) Պատշաճ կարգեր: 2) Նոր քնակարան:
- Դեկտ. 1, շաբաթ 1) Դոկտոր Թաթոս: 2) Վերօշկի գաղտնիքը:
- Դեկտ. 4, երեքշ. Բաղնիքի աղբար, Պարոնեանի (փոխադ. Սարգսեանի):
- Դեկտ. 11, երեք. 2ին-Նապոնական պատերազմ:
- Դեկտ. 18, երեքշ. 1) Դոն-Պիեռո Կարուզո: 2) Բայդուշ:
- Դեկտ. 23, կիրակի, Ժայռ, դրամա 4 գործ. Վ. Փափազեանի: (Յօգուտ գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան):
- Դեկտ. 29 շաբաթ 1) Տոնածառ: 2) Արջ:

1908 թ.

- Յունվար 2, չորեքշ. 1) Նկարիչներ: 2) Դիվերտիսմենտ:
- Յունվար 8, երեքշ. Սպանուած աղանի, դրամա 4 գործ. Նար-Դոսի:
- Յունվար 15, երեքշ. Մեծապատիւ մուրացկաններ, Պարոնեանի:
- Յունվար 22, երեքշ. Արցունքի հովիտը, Ահարոնեանի:
- Յունվար 29, երեքշ. Ընտանեկան գաղտնիք:
- Փետր. 5, երեքշ. Ժորժ Դանդէն:
- Փետր. 12, երեքշ. Եւ այլն:
- Փետր. 19, երեքշ. Նշանուածներ:
- Փետր. 21, հինգշ. Պատուի համար:
- Մարտի 4, երեքշ. Նախ մեռան, յետոյ ամուսնացան, կոմ. 2 գործ.
- Մարտի 11, երեքշ. Նիւոյի նշնուիլը, կոմ. 3 գործ. Էրբման Շատրեանի:
- Մարտի 25, երեքշ. Փրից բարեկամը, կոմ. 3 գործ. Բաբերի:
- Ապրիլ 1, երեքշ. Յախտեկական սէր, դրամա 3 գործ. Պշիքիշեվսկու:
- Ապրիլ 15, երեքշ. Երջանկութեան համար, դրամա 3 գործ. Պշիքիշեվսկու:
- Ապրիլ 22, երեք. Դոն Գրիգորի, կոմ. 3 գործ. 2) Աղամ եւ Եւա, վոդ. 2 գործ.
- Ապրիլ 29, երեքշ. 1) Զարածի, կոմ. 3 գործ. 2) Բիսսոնի և Մարսի, թարգմ. Մայսի 6, երեքշ. Ապահարզանի սիրալիրիզներ, կոմ. ֆարս 3 գործ. Բիսսոնի և Մարսի, թարգմ. Ա. Թարխանեանի:
- Մայիսի 13, երեքշ. Սիրտը հանելուկ է, կոմ. 3 գործ. Լ. Իվանովի. թարգ. Գր. Աւետեանի:

Գ. Արմենական բաժնում.

1908 թ.

- Մարտի 9, կիրակի Տիգրանուհի, դրամա 5 գործ. Լ. Մանուէլեանի:
- Մարտի 13, հինգշ. Պարոն Կառավարիչ, կոմ. 3 գործ. հեղինակութեւն Բիսսոնի, թարգ. Վրոյրի, Յօգուտ հանգուցեալ դերասան Գ. Պետրոսեանի ընտանիքի. ներկայացումը չկայացաւ:

ՌԵԺԻՍԵՐ

Նախորդ տարիների նման, այս տարի ևս ռեժիսորի խնդիրը մնաց չէ լուծուած: Վարչութեան բոլոր ջանքերը գտնելու յարմար անձնաւորութիւն այս պաշտօնի մնացին ապարդիւն: Կատարելապէս պատրաստուած, վարձուած, մասնազէտ ռեժիսոր առ այժմ մենք չունինք, կողմնակի ձեռնհաս անձնաւորութիւններից, որոնք կարողա՞ն յայնն տանել այս պատասխանատու պաշտօնը: Վարչութիւնը կանգ առաւ պ. Քափանակեանի վրայ, որը մի տարի ծառայել է Դր. Ընկ. մէջ այս պաշտօնով և իբրեւ բարեխիղճ աշխատող և նուիրուած անձնաւորութիւն բնական գործին, վայելում էր յարգանք դերասանների և վարչութեան անդամների շրջաններում:

Սակայն պ. Ս. Քափանակեանը հրաժարուեց կատարելու ռեժիսորի պաշտօնը, պատճառաբանելով մասամբ այն բանով, որ խիստ զբաղուած է լով մասամբ այն բանով, որ խիստ զբաղուած է լով մասամբ: Միւս կողմից պ. Քափանակեանը առաջարկեց Վարչութեան գործունէութեան բոլորովին

մի նոր ծրագիր, որը սակայն վարչութեանս կատարեալ հաւանութեանը արժանանալով գտնուեց, որ այս տարի անհնարին է իրագործել ամբողջովին, մանաւանդ խմբի կազմի արմատական նորոգութեան և գործավարութեան եղանակին վերաբերեալ: Նմանօրինակ առաջարկութիւններ եղել էին նաև նախորդ տարիները: Աւելի հասկանալի կը լինի վարչութեան զգոյշ վերաբերմունքը դեպի արմատական փոփոխութիւնը, եթէ ի նկատի առնենք այն անհաստատ և տարտամ դրութիւնը սեզոնի սկզբում, երբ ընկերութիւնը ծանրաբեռնուած պարտքերով անվստահ էր՝ արդեօք կը կարողանայ ամբողջ սեզոնը անդադրում վերջացնել, ուրեմն թէ գոնաւոր էր համաձայնուել մի այնպիսի ծրագիր ընդունել, որի հետ կախուած էր գրեական մեծ զոհողութիւն և մի շարք այժմեան պայմաններում անյաղթելի արգելքներ:

Թատրոնական գործը մեր մէջ մինչև այժմ այնպիսի պայմաններումն է որ արմատական և յանկարծակի փոփոխութիւնները կարող են գործը տապալել և ցաւելով պէտք է նկատենք որ ստիպուած ենք փոփոխութիւնները մասնակի կերպով կատարել:



Յ. Զարիֆեան, «Ժամ-Բիւր»-ի դերում:

Դերասանական ընկերութեան խնդիրքներին զիջելով ռեժիսորութեան պաշտօնը յանձն առաւ պ. Մ. Զարար, հրաժարուելով բոլորովին այս կամ այն վարձատրութիւնից: Պ. Մ. Զարարը չէր կարող բոլորովին նուիրուել ռեժիսորական գործին, որովհետեւ իւր ժամանակի մեծագոյն մասը ստիպուած էր գործ դնել վարչական գործերին, ուստի իրան վերապահելով գլխաւոր հսկողութիւնը, ընտրեց օգնականներ խմբի միջից, որոնք հերթով օգնում էին նրան: Օգնականներ եղել են՝ ա. Մայսուրեան, պ. պ. Յարութիւնեան, Զարիֆեան, Վրոյր և այլն:

Մի քանի ինքնուրոյն պիեսներ զրուել են հեղինակների հսկողութեամբ և ռեժիսորութեամբ, օր. Գ. Սունդուկեանց, Աւ. Ահարոնեան, Ադ. Արեւեան, Սահառունի, Սարգսբեան, նմանապէս ռեժիսորութիւն են արել պ. պ. Արեւեան և Արմենեան:

Ռեժիսորի պաշտօնական օգնականի պարտականութիւնները կատարում էր պ. Վ. Տիրացեան: Կլասսայի մանրամասն հաշիւը կցուած է Տեղեկագրիս վերջում:

Վարչութեան ԲԱՐՏՆԱԳԱՐ ԱՆՈՒՄ՝ Կ. ՇԻՐԻՆԵԱՆ

ՄԱԿԱՐԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԻ, 27 ՀՈԿՏ. 1907 Թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նիստը բացուեց նախագահութեամբ պ. Ստ. Քափանականի. ներկայ էին՝ պ. պ. Յ. Սունդուկեան, Տ. Յովհաննիսեան, Հ. Առաքելեան. բացակայ էր Տ. Զաւէն, որ Բագու էր գնացել և ուղարկել իր հետեւալ բովանդակութեամբ կարծիքը՝



Նար-Գուս (Միքայիլ Յովհաննիսեան)

«Իմ կամքից անկախ պատճառով անկարող լինելով մասնակցել ձեր ժողովի նիստին, պարտք եմ համարում յայտնել, որ ես իմ քւէն կտայի միայն «Քայլեր» պիէսային, այն էլ կէս մրցանամ կի համար: Անհրաժեշտ եմ նկատում յիշել, որ չեմ կարգացել «Անտառի անցքը» պիէսան, որովհետեւ իմ ձեռքը չի հասել»։ Տ. Զաւէն:

Ապա նախագահը առաջարկեց ժիւրիի անդամներին յայտնել իրանց կարծիքները մինչև Հոկտեմբերի 1-ը ներկայացրած պիէսների մասին: Ներկայացրած էին հետեւալ պիէսները՝ 1) «Սուր և հուր» Տ. Գրիգորեանի, 2) «Անվնաս մարդիկ» ուսանողի, 3) «Քայլեր», 4) «Զարուհիի գրեկանքը», 5) «Մեր օրերը», 6) Գեղշուկ Իշղաթի պիէսան, 7) «Կոշմար», էտիւզ մի գործ. 8) «Անտառի անցքը»:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ «Սուր և հուր» և «Անվնաս մարդիկ» պիէսների մասին, յանձնաժողովը եկաւ հետեւալ եզրակացութեանը՝

«Սուր և հուր»։ Ժիւրիի կարծիքով անյարմար է և վտանգաւոր պիէսների մէջ քննութեան ենթարկել և արժարժել հայ-թրքական ընդհարումների խնդիրը: Պիէսան չի ներկայացնում մի ամբողջութիւն, այլ առանձին պատկերներ, որոնք գեղարուեստական արժէք չունեն, կան, արդարեւ, միայն մի քանի յաջող տեսարաններ: Յետոյ թուրք-հայկական ընդհարումները մինչև այժմ չեն լուսարանուած: Շատ մեծ համարձակութիւն է հեղինակի կողմից բացատրել այն՝ թաթարական դարերը ատելութեամբ կամ պանիսլամիզմով: Սըլալ է, գրամայի տեսակէտից, հիմնել պիէսայի հանգոյցները միանգամայն պրօբլեմատիկ իդէալների վրայ:

«Անվնաս մարդիկ» պիէսան թոյլ գրուածք է, և իդէայի կողմից անհետաքրքիր: Հեղինակի նպատակն էր գուրա բերել հայ ուսանողութիւնը իր թերի կողմերով, բայց այդ նրան չի յաջողուել: Գործող անձինք բնորոշ տիպ չեն ներկայացնում, շատ գունատ են և թոյլ գծագրուած: Զկայ մի որոշ հանգոյց: Պիէսի բովանդակութիւնը ըստ երեւոյթին, պտտուում է երկու իրողութիւնների շուրջը՝ 1 և 2 գործ. — ուսանողական փողերի վատ-

ներու հարցն է, 2 և 3 գործ. ուսանողական ընդհանուր շարժման արձագանքը հայ ուսանողութեան մէջ: Առաջինը՝ ոչ մի դրամատիկ և կենսական հետաքրքրութիւն չի ներկայացնում, երկրորդը՝ դուրս է բերած թերի և չի լուսարանած: Պիէսի ինտրիգան՝ ուսանող Ասլանեանի սէրը և մահը՝ շինծու է և անբնական: Ժիւրիի կարծիքով այդ պիէսներէն ոչ մէկը արժանի չէ մրցանակի:

Պ. Յ. Սունդուկեանցը մի գրաւոր զեկուցում ներկայացրեց հետեւեալ պիէսների մասին՝ «Քայլեր», «Մեր օրերը», «Ջարուհիի զրկանքը», «Գեղջուկ Իշղաթ», «Կոշմար» և «Անտառի անցքը»:

Զեկուցումի բովանդակութիւնը. ներկայացրած պիէսների հեղինակների մեծ մասը ցանկացել են պատկերացնել ներկայ ժամանակը, նրա կարիքները, ձգտումները և օրուայ տանջող հարցերը... Սակայն այդ նրանց միանգամայն չի յաջողուել: Դժուար է առհասարակ, մարմնացնել զրամայի մէջ ցանկացած գաղափարը կենդանի պատկերներով... Մեծ տաղանդ է պահանջում հեղինակից կենդանի պատկերներով դուրս բերել ժամանակակից հոսանքները և այրող հարցերը... Այս բանը ուժից վեր մի աշխատանք է ներկայացրած պիէսների հեղինակների համար. նրանք միանգամայն անկարող եղան իրագործելու իրանց մտադրութիւնը: Որքան էլ ներդրամիտ լինինք և շատ մեծ պահանջներ չանենք մեր հայ հեղինակներին, «Քայլեր», «Մեր օրերը», «Գեղջուկ Իշղաթ», «Ջարուհիի զրկանքը» պիէսները չեն դիմանում ամենաթեթեւ քննադատութեանը: Նրանք ոչ այլ ինչ են եթէ ոչ հաւաքածու ճոճուս, փրփուս ֆրագների, միկնոյն ժամանակ դուրկ լինելով մինչև անգամ բեմական արտաքին էֆֆէկտներին, գուրկ են նոյնպէս մի ամբողջացած իդէալին: Ընդհանուր է՝ կան առանձին մտքեր՝ այն էլ անհետաքրքիր և շարժուն: Գործողութիւնը՝ այդ ամենակարեւոր պայմանը քիչ թէ շատ տանելի դրամատիքական գրուածքի, միանգամայն բացակայում է: Հեղինակները գաղափար անգամ չունին ինտրիգայի, կոլլիզիայի և կռուի մասին: Նրանց հերոսները կենդանի արարածներ չեն. նրանք չեն ապրում, նրանց ներքին աշխարհը չի դարձնում աստիճանաբար մեր աչքերի առաջ. նրանց արարքները չեն բովանդակում բնատուրութիւնից, ամեն ինչ կատարւում է կախարդական գաւազանի շնորհիւ: Ընդհանուր է, նրանք շարժւում են, խօսում, սիրահարւում, դաւաճանում, քարոզում, ոգևորւում, բայց այդ բոլորը անբնական է, կեղծ և հակազեղարուեստական:

Ներկայացրած պիէսներից առանձին ուշադրութեան արժանի են միայն երկուսը՝ «Կոշմար» և «Անտառի անցքը» գրաման:

«Կոշմար».— Այս փոքրիկ էտիւդում զգացւած է տաղանդ. էտիւդը կարողացւում է հետաքրքրութեամբ: Բայց այս էտիւդը պիէս չէ իսկապէս, այլ մի փոքրիկ գեղեցիկ գրած էսքիզ է: Եթէ դա հեղինակի առաջին գրուածքն է, դա աւելի ևս ուշադրաւ մի բան է. ես իմ կողմից պոռնակում եմ յանձնաժողովին դիմել հեղինակին և խորհուրդ տալ նրան գրել մի աւելի ընդարձակ պիէս և առհասարակ շարունակել նոյն ուղղութեամբ, որովհետեւ նա անպայման տաղանդի տէր է:

«Անտառի անցքը» կարողացւում է մեծ հետաքրքրութեամբ: Առաջին գործողութիւնից սկսած՝ գրաման գրուում է մեր ուշադրութիւնը. հետաքրքրութիւնը քանի գնում՝ աճում է մինչև պիէսի վերջնալը: Ինտրիգան արծարծւում է բաւականի հմուտ կերպով, տիպերը կենդանի են, գործողութիւնը շատ է: Դրամայի գաղափարը, թէպէտև նոր չէ, սակայն ժամանակակից է և կենսունակ: Կան և շատ երկար մոնօլոգներ, բայց հմուտ դերասանի բերանում, նրանք ձանձրոյթ չեն պատճառի և կլսուեն հետաքրքրութեամբ: Պիէսան միանգամայն բեմական է»:

Լսելով պ. Յ. Սունդուկեանցի զեկուցումը, Ժիւրին առանձնապէս զբաղուեց այդ վերջին երկու պիէսներով. մնացած պիէսների մասին միանգամայն միանում է արձանագրուած կարծիքին: Պ. Քափանակեանը յայտնեց այն կարծիքը, որ «Անտառի անցքը» գրաման բովանդակութեան կողմից շատ մօտ է պ. Նար-Դոսի գրած վէպիկին և հաստատ կարելի է ասել, որ այդ վէպիկի փոխադրութիւնն է: Ժիւրիի անդամներից մի քանիսն երբ շեշտեցին մի քանի պակասութիւններ, որոնցից հեղինակը կարող է ազատ մնալ՝ 1 գործ. մէջ ծառայի շարժուն գերը. լաւ կլինէր, եթէ հեղինակը կամ դուրս ձգէր այն կամ կըճատէր. գեղարուեստական չեն և աւելորդ 3 գործ. մէջ, հերոսների խօսակցութեան ժամանակ, փողոցի կանանց անց ու դարձը. շատ երկար են և կարող են ձանձրոյթ պատճառել վերջին գործողութեան մոնօլոգները, լաւ կլինէր, եթէ կըճատուին:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ, յանձնաժողովը, աչքի առաջ ունենալով պ. Ս. Քափանակեանի յայտարարութիւնը, միաձայն հետեւեալ որոշումները կայացրեց.

1. Տալ կէս մրցանակ (75 ռ.) «Անտառի անցքը» գրամային, եթէ ծրարը բաց անհույս յետոյ

յայտնուի, որ փոխադրողը ինքը հեղինակն է (եթէ ուրիշը լինի՝ չտալ):

Ապա բացուեց ծրարը և կարդացուեց հետեւեալը.

«Անտառի անցքը» իսկական վերնագիրն է «Սպանուած աղաւնի», դրամա 4 արար. հեղինակ Նար-Դոս: Նիւթը վերցրած է հիդինակի համանուն վիպակից:

Որոշուեց՝ տալ կէս մրցանակ պ. Նար-Դոսին նրա «Սպանուած աղաւնի» (Անտառի անցքը) պիէսի համար:

2. Արձանագրել բոլոր անդամների հետեւեալ կարծիքը «Կոշմար» էտիւդի մասին.

«Կոշմար» էտիւդը ունի գրական արժանաւորութիւններ և հաւաստիք է տալիս, որ հեղինակը դրամատիք գրողի շնորհք ունի. գրուածքը ամբողջացած մի գործ չէ, դա շնորհալի մի էսքիզ է գրական նոր ուղղութեամբ:

Նախագահ՝ Ս. ՔԱՓԱՆԱԿԵԱՆ

Անդամներ՝

{	Յ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ
	Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
	Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Գ Ա Յ Ո Յ Ե Բ

I ՄՐՑՆԵԱՆ ՑՈՆՈՒՆ Մ. Ե. ՄԱԿԱՐԵԱՆԻ

§ 1. Մրցանակը հաստատուած է արուելու լաւագոյն դրամատիքական արտադրութեան և կոշուում է «Մրցանակ յանուն Մ. Ե. Մակարեանի»:

§ 2. Մրցանակաբաշխութեան համար ընդունւում են միմիայն հայերէն լեզուով ինքնուրոյն արտադրութիւնները: Թէ թարգմանութիւններ և թէ փոխադրութիւններ չեն թոյլատրուում:

§ 3. Մրցանակը յատկացնում է մի առանձին Ժիւրի 5 հոգուց բաղկացած, որոնց ընտրում է հայոց դրամատիքական ընկերութեան անդամների հոգհանուր ժողովը: Ժիւրիի կազմի մէջ կարող են ընդհանուր ընկերութեան անդամ չեղողները:

§ 4. Ժիւրիի որոշմամբ վարչութիւնը տալիս է հեղինակին 150 ռուբլի մրցանակ (Մ. Ե. Մակարեանի նուիրած 3000 ռուբլու 1/20):

§ 5. Մրցանակաբաշխութեան համար ընդունւում են նաև դեռ գրաբնիչին չներկայացրած արտադրութիւններ:

§ 6. Կարելի է ներկայացնել թէ տպագրած և թէ ձեռագիր պիւսներ:

§ 7. Բացի մրցանակաբաշխութեան ներկայացուած պիւսները Ժիւրիի հայեցողութեան ենթարկւում են նաև վերջին տարուայ ընթացքում հայոց բեմի վրայ ներկայացուած պիւսները, հաշուելով այդ ժամանակը նախորդ տարուայ յունիսի 1-ից մինչև ներկայ տարուայ յունիսի 1-ը:



Տիկ. Սարիկի Զմեկեան

մասին յայտարարել, բայց այդ յայտարարութիւնից անկախ, մրցանակաբաշխութեան պիւսներ ներկայացնելու վերջնական պայմանաժամը ներկայ կանոններով իւրաքանչիւր տարուայ յունիսի 1-ն է—իսկ մրցանակաբաշխութեան Ժիւրիի վերջ-

է նրանց վերին աստիճանի զբաղուած դրու-
թեան մէջ: Անձեռնմխելի գումարները ծախսուել
են ընդհանուր ժողովի որոշմամբ, պայման ընաւ
չի եղել, որ Վարչութեան անդամները կարող են
վերջնաբար ծախսած գումարները լրացնելուց
յետոյ միայն: Ռշտունին չէ հրաւիրուած, որով-
հետեւ նրան փոխարինողներ կան, բայց և նա
Վարչութիւնից նպաստ է ստացել մօտ 150 ր.:

Երեցեան ընդդիմախօսում է և ասում, որ
անձեռնմխելի գումարները ծախսելու իրաւունք
տուող ժողովը բաղկացած է եղել վարչութեան 6
անդամից և 8 ժողովականներից:

Սատիսեան մանրամասն խօսում է անձեռն-
մխելի գումարների մասին: Ակումբից մնացած
գումարը, ինքը պ. Սատիսեան ստացել է հան-
գուցեալ Իսայի Եզ. Փիթոյեանից միքանի ան-
ձանց ներկայութեամբ, որը և լիազօրութիւն է
տուել՝ ծախսել այդ փողերը. նրա մասնակցու-
թեամբ էլ այդ գումարները մտցրուած են ընթացիկ
ծախքերի մէջ իբրեւ գործադրելի գումար: Իսկ
ինչ վերաբերում է Սուրբուկեանի նուիրած գու-
մարին—նա յանձնուած է առանձին նամակով,
առանց որեւէ պայմանի, միայն ասուած է, որ այդ
գումարը լինելու է ֆօնդ. բայց որովհետեւ ֆօնդ
չէ եղել, Վարչութիւնը ստիպողաբար ծախսել է:
Մակարեանի նուիրած գումարն էլ բոլորովին
անձեռնմխելի գումար չէ. նա տրուած է լաւագոյն
գործածքների հեղինակներին: Բայց որովհետեւ այդ
գումարները գործադրութեան են հանուել, Վար-
չութիւնը հողացել է նրանց տեղը դնելու. նա դի-
մել է մի քանի հաստատութիւնների և անձնա-
ւորութիւնների, որոնցից յոյս ունի ստանալ մի
պատկառելի գումար: Վերջում պ. Սատիսեան
յայտնում է, որ վերջերս վախճանուած Ենիգօլ-
փեանից մնացել է մի խաղաղութեան տոմս, որ նա
ստացել է Ակումբից. այդ տոմսը այժմ հանգու-
ցեալի այրիի մօտ է. անհրաժեշտ է յանձնարա-
րել վերաստուգող մասնաժողովին՝ ձեռք ձգել այդ
տոմսը:

Վրոյր պնդում է իր ասածները, թէ գերա-
սաններին հրաւիրելը եղել է կամայականութեամբ:
«պ. Շիրինեան ակնարկեց, որ ժողովարանում,
դեր. խմբի կողմից դուրս մնացած գերասանների
օգտին տուած ներկայացման արգելաբից Ռշտու-
նին ոչինչ չէ ստացել, այստեղ ես տեսնում եմ
իմ պատիւս շօշափուած. իրողութիւնն այս է:
Հասցուցեալ Ռշտունին մեզ ասաց, որ մտադիր է
Վարչութիւնից 25 ր. նպաստ խնդրել, մենք խոր-
հուրդ տուինք բաւականա՛նալ այն արգելաբից, որ
կատարուի ներկայացումից: Սակայն Ռշտունին

չհամաձայնեց և չմասնակցեց ներկայացմանը»:

Երեցեան առարկում է պ. Սատիսեանին, որ
Ակումբի փողերը ստացուել են ոչ թէ միայն Փի-
թոյեանից, այլ և Մանթաշեանից և Թաւադեանից:
Պնդում է, որ Մակարեանի գումարը անձեռնմ-
խելի է:

Ժողովը ընդունեց Ջաբարի առաջարկը.—
Յանձնարարել Վերաստուգող Մասնաժողովին քըն-
նել անձեռնմխելի գումարների հարցը ըստ էու-
թեան և մանրամասն հաշիւ ներկայացնել հետեւեալ
անդամ:

Միաձայն հաստատուած է վարչութեան հա-
շիւը, պ. Շիրինեան միքանի խօսքերով ուրուա-
դում է Վարչութեան ապագայ գործունէութիւնը:

Նախագահը յայտնում է, որ Վարչութիւնը
իրբեւ նուէր ստացել է տ. Բէլէցկայայից 500 ր.
Մելիք-Ազարեանից՝ 100 ր. և Ս. Յարութիւնեանից՝
100 րուրի:

Ապա ժողովը անցաւ Վարչութեան 4 ան-
դամների և 3 փոխ-անդամների ընտրութեան:
Վարչութեան կողմից դուրս են գալիս իրանց ժա-
մանակը լրանալու պատճառով տ. Բէլէցկայայ, Հ.
Առաքելեան, Ռ. Յովհաննիսեան և Լ. Մանթաշեան
և փոխանդամներ պ. պ. Յ. Ղորղանեան և Բ. Մուրա-
դեան. պ. պ. Հ. Առաքելեան, Բ. Մուրա-
դեան, Շիրինեան, Երեցեան, Բարսեմեան, Լ.
Բարայեան, Համբարձումեան, Վրոյր և Սարեան:
Գաղտնի քէպարկութեամբ Վարչութեան ան-
դամներ ընտրուեցին պ. պ. Ռուբէն Յովհաննի-
սեան, Կ. Շիրինեան, Ջաբար և Համբարձումեան:
Իսկ փոխ անդամ միայն Գ. Սարեան. մնացած
երկուսի ընտրութիւնները յետաձգուեցին մայի-
սին:

Նախագահ ժողովի՝ Ա. ՔԱՆԱՐԱՐ

Քարտուղար՝ Ս. ԵՍԱՅԵԱՆ

II.

Երեքշաբթի, յունիսի 5-ին, քաղաքային տան
դահլիճում կայացաւ Հայոց Դրամատիքական Ըն-
կերութեան արտակարգ ընդհանուր ժողովը՝ քըն-
նելու հետեւեալ խնդիրները. ա) Վարչութեան գե-
կուցումն ապագայ սեզօնի գործունէութեան մա-
սին. բ) ընտրութիւններ Վարչութեան 2 փոխան-
դամի, վեր. մասնաժողովի 3 անդամի և 2 փոխ-

անդամի և տ. Մակարեանի անուամբ մրցանակա-
բաշխութեան մասնաժողովի անդամների, գ) վե-
րաստուգիչ մասնաժողովի եղրակացութիւնն—ան-
ձեռնմխելի գումարներին և գումարանի վե-
րաբերութեամբ և դ) ընթացիկ հարցեր:

Ժողովը նախագահ ընտրեց պ. Ա. Քալան-
թարին, իսկ քարտուղար՝ Ս. Եսայեանին:

Վարչութեան փոխ անդամ Գ. Սարեան կար-
դաց Վարչութեան առաջիկայ 1907—8 թ.թ. գոր-
ծունէութեան մասին Վարչութեան կազմած գե-
կուցումը: Ֆինանսական մասը կանոնաւորելու
կուցումը: Ֆինանսական մասը կանոնաւորելու
կուցումը: Վարչութիւնը երեք միջոցների է դի-
նալաւ Վարչութիւնը երեք միջոցների է դի-
մել, սակայն բոլորն էլ անաշուղ. 1) կազմակերպել
է դարձանային դրօսանք, որից սպասուած 2000
ր. փոխանակ, արդիւնք է մնացել ընդամենը 300
ր. չափ գումար. 2) անդամների թիւը ստւարացնե-
լու համար իրադրծել է ընդհանուր ժողովից
հաստատութիւն գտած պ. Շիրինեանի առաջար-
կը՝ անդամներին շահագրգռելու տեսակէտից իւ-
րաքանչիւր անդամի դիմել 6. տոմսակներ զնե-
րից, բայց այդ միջոցն էլ աշողութիւն չէ գտնու-
3) դիմել է դանազան հիմնարկութիւնների և ան-
հաւար խնդրել. բայց համարեա բոլորից
ստացել է բացասական պատասխան, բացի եղբ.
Միրզոյեանիցներից և Ընկ. առեւտրական տնից, որը
Միրզոյեանիցներից և Ընկ. առեւտրական տնից, որը
նուիրել է 300 ր.: Զրօսանքից դոյացած գումա-
րով և այս նպաստով Վարչութիւնը վճարել է իր
հին պարտքերը: Ներկայումս Վարչութիւնը նոր
սեզօնի շէմքում ուղք է դնում 2000 ր. պարտքով:
Պարզ և սոսկ պ. Աֆրիկեանի 1000 ր. նպաստով:
է, որ այդ պայմաններով պահել այնպիսի խումբ,
ինչպէս եղել է անցեալ տարիներում, անկարելի
է: Ուստի և Վարչութիւնը, չկամենալով բնաւ
թողնել առաջիկայ սեզօնը առանց ներկայացում-
ների, առաջարկում է՝

1) Առաջիկայ 1907—8 թ. սեզօնում պահել
գերասաններից և սիրողներից բաղկացած մի
խումբ, յատկացնելով գերասաններին, սցէնա-
րիստին և բէթիսօրին մօտաւորապէս 900 ր. ամ-
սական. 2) գերասաններից հրաւիրել կարեւորա-
գոյն և սիրողներով անփոխարինելի ամպլուա ու-
նեցող գերասանների թէ կանանց և թէ տղա-
մարդկանց գերերի համար և 3) տալ երկուշաբթի
օրերը մի ներկայացում ժողովարանում—ըն-
տնուած և մի ներկայացում ժամանակ: Բացի սրանից,
տանեկան երեկոյթների ժամանակ, որ բէթի-
Վարչութիւնը սկզբունքով ընդունելով, որ բէթի-
սօրը միաժամանակ գերասան չպէտք է լինի,
հրաւիրել է պ. Քալանեանին, որը, սակայն,
հրաժարուել է յարգելի և անառարկելի պատճա-

ռարանութիւններով: Այժմ բէթիսօրական պար-
տականութիւնը իր վրայ է վերցրել պ. Ջաբար,
որը դէմ է եղել Վարչութեան թէ նախահաշուին
և թէ առաջիկայ սեզօնի գործակալներին:

Վարչութեան կազմած նախահաշիւը հետեւեալն
է. մուտք—ամսական 4 ներկայացումի տոմսակ-
վարանում տրուելիք ներկայացումներից 400 ր.
մուտք ամսական 1800 ր. ծախք—գե-
կուցումներ խմբին ամսական 900 ր. թատրոնին



Տիկ. Գուրեան-Արմենեան

— 4 ներկ. համար՝ 800 ր: մանր ծախսեր՝ 200 ր.
մանր ծախսեր ժողովարանում 100 ր. ընդամենը
2000 ր., որով ամսական ունենալով 200 ր. դե-
ֆիցիտ, պէտք է ծածկուի պ. Աֆրիկեանի 1000
րուրով և անդամակցական վճարներով:

Ապա խօսեց պ. Ջաբար, որ երկար ծանրա-
նալով Ընկերութեան նախկին տարիների գոր-
ծունէութեան վրայ, առաջարկեց իր նախագիծը:
Պ. Ջաբար առաջ բերեց Ընկերութեան նախկին
5 տարիների մուտքի և ծախքի պատկերը. այս-
պէս 1902/3 թ. Ընկ. տուել է 34 ներկայացում,
որոնցից մուտք ստացուել է ընդամենը 15095 ր.
78 կ. իսկ ծախք Ընկ. 20011 ր. 74 կ.:

1903/4 թ. 36 ներ. մուտք 16965 ր. 01 կ. ծ. 24718 ր. 82 կ.
1904/5 « 25 « « 11358 ր. 80 կ. « 18504 ր. 01 կ.
1905/6 « 10 « « 1654 ր. 52 կ. « 11216 ր. 13 կ.
1906/7 « 31 « « 14410 ր. 32 կ. « 26494 ր. 14 կ.

Ուրեմն 5 տարուայ ընթացքում Ընկերու-
թիւնը ունեցել է 42459 ր. 46. դէֆիցիտ, Ան-

դամալճարներինց ստացուել 5549 ռ. անձեռնմխելի գումարը այդ ժամանակամիջոցում հասել է 7823 ռուբլու 62 կ. նուիրատուութիւններինց կազմուել է 23694 ռ. զանազան աղբիւրներից մուտք եղել է 5,317 ռ. 46 կ. ընդամենը 42,384 ռ. 63 կ., այս գումարինց դուրս գալով 931 ռ. 25 կ., որը ծախսուել է գերասան Պետրոսեանի թաղմանը և այլ նպատակներով, կազմում է 41,452 ռ. 72 կ., որով ծածկուել է ղէֆիցիտը, այն էլ ոչ լրիւ: Պ. Զաւարար հայ թատերական գործի հիւանդոտ դրութիւնը գտնում է հետեանք հասարակութեան անտարբերութեան ղէպի մայրենի բնմը, գերասանների անպատրաստականութեան, թատերական գործիչների վատ վարձատրութեան: Դերասանների ինքնակրթութեան նպատակով, Զաւարար առաջարկում է կազմակերպել դասախօսութիւններ՝ բեմական արուեստի մասին և վերջում, եթէ Ընկերութեան միջոցները թոյլատրեն, հիմնել և թատրոնական դպրոց, և այդպիսով աստիճանաբար գործը զարգացնել: Առհասարակ անհրաժեշտ է գտնում Ընկերութեան արմատական վերակազմութիւնը և որ ամբողջ թատրոնական գործը հիմնուած լինի նոր հիմունքների վրայ: Այսպէս նրա կարծիքով հարկաւոր է կազմել թատրոնական ֆօնդ, որի համար պէտք է յատկացնել ամեն տեսակի մուտքերից 25% (բացի յատուկ գումարներից) և ապա պէտք է ձեռնպահ մնալ ներկայացումների կազմակերպելուց մինչև այն ժամանակ, երբ հնարաւոր կլինի կազմել մի այնպիսի նախաճաշիւ, որի համաձայն ամենամեծ ղէֆիցիտը կարելի կլինի ծածկել Ընկերութեան միջոցներով, առանց որեւէ վնասի՝ Ընկերութեան ապագայ գոյութեան համար: Պ. Զաւարար առաջարկում է նաև փոփոխել Ընկերութեան կանոնադրութիւնը՝ Ընկերութեան գործունէութիւնը Թիֆլիսի նահանգինց դուրս տարածելու մտքով:

Զաւարարի գեղուցման առիթով, առաջինը խօսեց պ. Արծրունի, որը նկատեց, որ Ընկերութեան կանոնադրութիւնը փոփոխելու առաջարկի նման առաջարկութիւններ անում են սովորաբար նախօրօք, որեւէ մտքնում են զբաղմունքների օրակարգում: Ընկերութեան գործունէութիւնը լայնացնելու նկատմամբ, պ. Զաւարար անտես է առնում կանոնադրութեան 1-ին յօդուածը: Առհասարակ ղէֆիցիտը անխուսափելի է Ընկերութեան գործունէութեան հէնց առաջին տարում, երբ սկսուեցին կազմակերպել ներկայացումներ, չնայած որ 7 հազար կար ֆօնդում և 66,000 մուտք ստացուեց, զարձեալ ղէֆիցիտ ստացուեց: Ապա պ. Արծրունին շեշտեց, որ գլխաւոր սխալը թաքնուած

է նրանում, որ Ընկերութիւնը շարունակ միեւնոյն անձնաւորութիւններին է բեմ հանել. պէտք է դուրս գալ Թիֆլիսից, պէտք է թարմ, նոր ոյժեր որոնել: Մասնաւորում է, որ Աղամեան, Սիրանոյշ, Աստղիկ Թիֆլիսից չէին: Ներկայացումներ անհրաժեշտ է կազմակերպել և այլ հայաբնակ քաղաքներում:

Պ. Պատիսեան. «Վարչութեան առաջարկը մի միջոց է առաջիկայ սէզօնում թատրոն ունենալու համար: Զաւարարի առաջարկով պէտք է թատրոնական գործը դադարեցնել. այն ինչ Վարչութեան ծրագրով չի տուծել բեմերտուարը, սերողներն էլ չեն խանգարի: Բազուն օրինակ: Դէֆիցիտը անխուսափելի է: Պատը խումբը բաւարարութիւն կտայ, քանի որ թատրոն յաճախողը հասարակ ժողովուրդն է, ոչ թէ բուրժուաները: 1905 թ. Ընդհանուր յուզմունքների պատճառով, մուտք է գլել 1655 ռ. իսկ ծախք 11216 ռ. 13 կ.: Ընդհանրապէս մինչև հայկական կեանքը չփոխուի, ղէֆիցիտը չի վերանայ:

Պ. Զաւարարի թատրոնական դպրոց պահելու, գործիչներին լաւ վարձատրելու, դասախօսութիւնների և բրօշուրների առաջարկը սոսկ բարի ցանկութիւններ են— ինչ գումարով պէտք է այդ ամենը դուրս բերել: Ֆօնդ հաստատել առ այժմ չի կարելի, ուրիշ աւելի կարեւոր խնդիրներ են դրուած հայ հասարակութեան առաջ: Ինչ վերաբերում է բեմերտուարին, ես կողմնակից եմ, որ Վարչութիւնը ինքը կազմէ: Առաջարկում է ընդունել Վարչութեան առաջարկը:

Գոլուխանեան ղէմ է խառն խումբ պահելուն, եթէ յամենայն ղէպս դա անհրաժեշտ է, ցանկալի է համարում, որ 5—6 գերասանների փոխարէն լինին 10—12 հոգի:

Հ. Առաքելեանը մատնանշում է, թատրոնական գործի վերակազմելու խնդիրը ուսումնասիրելու համար պէտք է մի յատուկ մասնաժողով ընտրել. իսկ այսօր ժողովը զբաղուելու է միայն Վարչութեան նախագծով:

Տէր-Գրիգորեան համակրանքով վերաբերուելով հանգերձ Վարչութեան առաջարկութեան, մերժում է— ղէֆիցիտներ ունենալու պատճառով:

Տ. Յովհաննիսեան. «Իրօք կան երեք առաջարկներ, ա) Վարչութեան առաջարկը, բ) Զաւարարին և գ) առաջիկայ սէզօնում ոչինչ չանել: Վարչութեան առաջարկը ընդունելի չէ. չի կարելի թոյլ տալ խառն խումբ գերասաններին և սերողներին. գերասանները իրանք չեն համաձայնի բեմ դուրս գալ սերողների հետ— Պէտք է պահել դե-

րասանական օրինակելի խումբ. ուստի և պէտք է մերժել Վարչութեան առաջարկը:

Զաւարար ասում է, որ անտրիպրենսօրութիւնը պէտք է թողնել, գործը պէտք է յանձնել իրանց գերասաններին, գերասանական Ընկերութեան: Վարչութիւնը հսկելու է բեմերտուարի վրայ: Ես համաձայն եմ, որ գործը յանձնուի գերասաններին:

Ինչ վերաբերում է Արծրունու այն խօսքերին՝ թէ Դրամատիքական Ընկերութեան Վարչութիւնը սահմանափակուած է Թիֆլիսով միայն, չէ հրաւիրում Կ. Պօլսից և այլ տեղերից գերասաններ, սխալ է. Վարչութիւնը ղեմումներ արել է, բայց միշտ մերժում է ստացել: Ներկայումս Թիւրքայց միշտ պայմանների շնորհիւ այժմ այնքաւաւ տիրող պայմանների շնորհիւ պ. Յովհաննիսեան միանում է գերասաններին նպաստ տալու տեղ տաղանդներ չկան: Վերջում պ. Յովհաննիսեանի առաջարկութիւնը՝ մի յատուկ մասնաժողով ընտրելու ծրագրական փոփոխութիւնների հարցով զբաղուելու համար:

Զաւարար պատասխանում է ընդգրիմախօսներին: Նրա տեսակէտն է, որ Վարչութիւնը գործին նայէ վաճառականական մտքով և առհասարակ հարկաւոր է միշտ համեստ լինել. նախաճաշիւը կազմել առանց ղէֆիցիտի: Վերջում նա առաջարկում է իր բանաձեւը. «Ժամանակաւորապէս, մինչև գործերի կարգաւորումը անտրեպրենսօրական չի գործունէութիւնը թողնել. պայմանաւորուել որեւէ գերասանական խմբի հետ, տալ նպաստ և ստանալ ներկայացումների որոշ թիւ»:

Սարեան նկատում է, որ նպաստի համար էլ փող է հարկաւոր:

Շահապաղեան նոյնպէս ղէմ է խումբ պահելուն. գործը պէտք է թողնել իրանց գերասաններին, եթէ չաջողուի կանոնաւոր խումբ կազմել:

Երիցեան յայտնում է, որ ինքը խօսել է գերասաններինց միջանիսի հետ և եկել է այն եզրաւորութեան, որ եթէ Վարչութեան առաջարկն անցնի, այն ժամանակ կազմից դուրս մնացած գերասաններն էլ իրանց կողմից առանձին խումբ են կազմելու:

Տ. Զաւարար շեշտում է, որ գործի հիմքն է խախուտ: Ֆրանսիայում տասնեակ թատրոններ են գոյութիւն պահպանում առանց նպաստների: Հարկաւոր է նպաստել, որ գերասանները իրանք ընկերակցութիւն կազմեն, որից յետոյ գործը պէտք է յանձնել այդ ընկերակցութեանը:

Փ. Լեոնեան միանում է Զաւարարի առաջարկութեան, միաժամանակ առաջարկելով մէկ տա-

րով դադարեցնել բեմական գործունէութիւնը, ամբանալ և այնուհետև շարունակել:

Պ. Բալանթարն առաջարկութիւնները բանաձեւում է:

Ընդունում է մասնաժողով ընտրելու առաջարկութիւնը, Մասնաժողովի անդամներ ընտրուում են պ. պ. Հ. Առաքելեան, Տ. Յովհաննիսեան, Ս. Բախանակեան, Տ. Զաւարար և Սունդուկեան: Մասնաժողովը Վարչութեան հետ միասին պէտք է զբաղուէ Ընկերութեան գործունէութիւնը ընդլայնելու և կանոնադրութիւնը փոփոխելու խնդրով և, նախադիժ կազմելով, ներկայացնէ առաջիկայ ընդհանուր ժողովին:

Ընկերութեան առաջիկայ գործունէութեան վերաբերութեամբ քուէարկութեամբ ընդունուեց



Գաբրիել Սունդուկեան

Զաւարարի հետեւալ բանաձեւը. «մինչև միջոցներ գտնելը, դադարեցնել անտրեպրենսօրական գործունէութիւնը, գործը յանձնել գերասանական խմբին, իրաւունք ունենալով հսկել բեմերտուարի վրայ և նպաստ տալ գերասանական խմբին»:

Նաև ընդունուեց հետեւալ լրացուցիչ բանաձեւը. «Եթէ յիշեալ կօմիտեանցիան չաջողուի, թողնել Վարչութեանը շարունակելու գործը, մինչև 200 ռուբլի նպաստ տալու իրաւունքով»:

Ուշ լինելու պատճառով օրակարգի մնացած հարցերը յետաձգուեցին հետեւալ ժողովին:

Նախագահ ժողովի՝ Ա. ԲԱՆԱՆԹԱՐ
Քարտուղար՝ Ս. ՆՍՍՅԱՆ

III.

Յունիսի 16-ին, շաբաթ երեկոյեան, քաղաքային դումայի դահլիճում տեղի ունեցաւ Հայոց Դրամատիքական Ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովի շարունակութիւնը: Պ. Ա. Քալանթարի բացակայութեան պատճառով՝ ժողովը նախագահ ընտրեց պ. Տ. Յովհաննիսեանին:

ժողովի քարտուղար Ս. Եսայեան կարդաց նախորդ նիստի արձանագրութիւնը: Տարածայնութիւններ են առաջ գալիս պ. Զարարի բանաձեռ երկրորդ մասի ընդունուած թէ չընդուած լինելու շուրջ բարեռք տեսնուեց վերստին քննութեան ենթարկել այդ մասը. այն է՝ «եթէ գերաստնական ընկերակցութիւնը չկազմուի, այն դէպքում թողնել Վարչութեանը գործը շարունակելու, պահելով խումբ 2,000 ր. նպաստ տալու իրաւունքով»:

Բոլոր ճառախօսներն այն միտքն են յայտնում, որ չկազմակերպուելու դեպքում պէտք է թողնել Արտիստիքական թատրոնը և պէտք է ոյժ տալ ժողովրդական ներկայացումներին:

Քուէարկուեց և ընդունուեց միաձայն հետեւեալ բանաձեւը. «Եթէ դերասանական ընկերացութիւնը Հիւզմովի, այն դէպքում նպաստել ժողովրդական ներկայացումներին. նպաստի գումարը լինելու է maximum 2000 բուրլի»:

Այս կատարուեց մտքերի կարճ փոխանակումներով և թե՛ հերկայացումները որտեղ պէտք էր, տալ սիրողների հետ:

Մարեան առաջարկում է մի որոշում կայացրենել Հաւաքարի թատրոնի վերաբերութեամբ քանի որ մտադրութիւն կայ նրան «տրակտիր դարձնել...

Ոմանք առաջարկում են հերկայացումներ
տալ և՛ Հաւլաբարում, և՛ Արախտիքականում:

Պ. Պատիսեան բացատրում է, որ Հաւարա-
րի թաւրոնում անկարելի է ներկայացումն
տալ ցրտի պատճառով: Իսկ եթէ այդ և թէ ա-
ղէֆէկաները վերացնելու համար հարկ—անհրա-
ժեշտ կլինի վերանորոգութիւն կատարել, որ ա-
պակասն Վարչութեանը կնստի 400 բուբլի:

Պ. Տէր-Գրիգորեան առաջարկում է օր առ օր հետեանալ Արտիստիքական թատրոնից, որովհետեւ Ընկերութեան ղէֆիցիտի պատճառը այդ թատրոնն է:

Վճռում է հարցը թողնել Վարչութեան
վերապահելով նրան իրաւունք՝ չվարձել Արտ
տիքական թատրոննր:

Պ. Բարսամեան տալիս է Վերաստուգող մաս-

հաժողովի ղեկուցումը, հախ անձեռնմխելի գու-
մարների մասին, որոնք, ինչպես յայտնի է, թուով
երեք են. ա) ակումբի, բ) տ. Մակարեանի և գ)
Սուսդուղեանի: Վերջին երկուսը անպայման ան-
ձեռնմխելի են— համաձայն գրաւոր դժուամնա-
տի. իսկ ակումբի գումարի մասին խօսել է
արդէն պ. խատիսեան, որ և մտցրած է 1907 թ.
մարտի 25-ի արձանագրութեան մէջ և որից կա-
րելի է պարզել, որ ընդհանուր ժողովն է թոյլա-
տ և մարտի 25-ի արձանագրութեան մէջ և որից կա-

Բարսամեանի զեկուցումից երևաց, որ վերաստուգելի մասնաժողովը այդ գումարները վերաբերութեամբ որոշ եզրակացութեան չէ յանգեր, զանրապէս:

Մամնաժողովը ստուգել է նաև Ընկերութեան գրադարանը, ստուգելիս պակասել են 11 պիէս ինչ վերաբերում է Ընկերութեան մնացած գոյքին, գտնուած է լրիւ և յաւելեալ մի շարք նյութակազմած իրեղէններ:

Ըստ էության ժողովականների կողմից նկատողություններ չեն լինում: Մասնաճյուղում է միայն որ Ընկերությունը անհրաժեշտ է մի «անկիւն» ունենալ, ուր կարելի լինի պահել Ընկերության գրառանք, արձանագրությունները, թղթերը և այլն:

Վիճաբանութիւնների խնդիրը զարձաւ, ան
ձեռնմխելի գումարների հարցը:

Ամենից շատ բողոքում է պ. Գ. Երիցեան

որ չի կարելի այդպես ստանալ արտադրանքներ և
բաբերուել դեպի անձեռնմխելի գումարները, որոն-
ք մօտ 10,000 բուբուլ են հասնում: Գտնում է,
այդ գումարներից պէտք է կազմուէր Ընկերո-
ւթեան ֆոնդը:

Վարչութիւնը պատասխանեց, որ ինքը ա
գէն հոգացել է լրացնել ծախսուած գումարներ

Ժողովը որոշեց անձեռնմխելի գումարն
խնդիրը թողնել սեպտեմբեր ամսում կայանա-
րնդհանուր ժողովին:

Նաև յանձնարարուեց վարչութեանը՝ կան
նաւորել իր գործավարութիւնը:

Տիկ. Մակարեանի մրցանակաբաշխութեան մասնաժողովի անդամներ ընտրուեցին այն անհատները, որոնք ընտրուել էին թատրոնական գործունէութեան մարմիններէ մասնաժողովի անդամներ ընտրուելու համար:

Մնացած ընտրութիւնները ժողովականն հեռանալու պատճառով յետաձգուեցին սեպտեմբերին:

Վերաստուգող մասնաժողովի անդամներ հ
տատուեցին պ. պ. Բարսամեան և Կուսիկեան

Նախագահ ժողովի՝ Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Քարտուղար՝ Ս. ԵՍՍՅԱՆ

IV.

Թիֆլիս, 1907. թ. Սեպտեմբեր 30-ին, Ար-
տիստիքական Ընկերության դահլիճում կայացաւ
Ընկերության ընդհանուր ժողովը:

Նախագահ ընտրուեց պ. Ալ. Քալանթար, իսկ քարտուղար՝ Ս. Նասյան։ Զբաղմունքը օրակարգով հետևեալն էր. 1) Ընկերութեան նոր անդամների ընտրութիւնը. 2) Վարչութեան ղեկուցումը ամառուայ գործունէութեան մասին. 3) Վարչութեան մի անդամի, երկու փոխ-անդամի և վերաստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը. 4) Զեկուցում թատրոնի 50-ամեայ յօբերեանի մասին. 5) Կանոնադրութեան փոփոխութեան նախագիծը. 6) Ընթացիկ հարցեր։

Նախկին ընդհանուր ժողովրդական տնտեսական
թիւնը կարգալուց և հաստատելուց յետոյ, ժողո
վը լսեց նոր անդամներին ցուցալը, որը և հաս
տատեց: Ապա Վարչութեան անդամ պ. Շիրինեան
կարգաց Դրամատիկական Ընկերութեան Վարչու
թեան գործունէութիւնը, որ շուրջիակաւում է այս
պէս. — Վարչութիւնը նախ և առաջ հոգացել
Ընկերութեան պարտքերը վճարել և այդ նպա
տակով զիմել է զանազան տնտեսական հաստատ
ութիւնների, ստացել է, «Արամազդ» ընկ. 500
և Նիզը. Միրզոյեաններից 300 ռ. և Թիֆլիսի Նախ
արդինաբերական Ընկ. 100 ռ.: Այս գումարները
վճարուել է պարտքերի մի մասը: Ներկայում
Ընկերութիւնը պարտք ունի 1500 ռուբլի:

Վարչութիւնը մշակել է և ընկերութեան հիման վրայ է դերասանական ընկերութեան պէտք է յանձնուէր ամբողջ թատրոնական գործը Սակայն դերասաններին չէ աջողուում այդ կանոններով խումբ կազմել որից ստիպուած, Վարչութիւնը իր վրայ վերցնելով ընկերութիւն կազմելու նախաձեռնութիւնը, յանձնում է պ. պ. Զարարին և Շիրինեանին մշակել նոր կանոնները հրաւիրել դերասաններին: Այս վերջին կանոններով արդէն կազմուած է դերասաններ ընկերութիւն, բաղկացած 19 հոգուց:

Ապա վարչութիւնը համարեց Նա գիմնական միջոցները շատացնել: Նա գիմնական միջոցները շատացնելու համար 150 ռ. փոխառեց: Նա գիմնական միջոցները շատացնելու համար 150 ռ. փոխառեց: Նա գիմնական միջոցները շատացնելու համար 150 ռ. փոխառեց:

Հիւր անգամ օգտուում է Ընկերութեան ներկայա-
ցումներէրից տարեկան 6 ըուբլու չափ: Վարչու-
թիւնը և դերասանական ընկերակցութիւնը ըն-
թիսօրութեան համար դիմել են պ. Քափանակեա-
նիին, բայց սա յարգելի պատճառներով մերժել է:
Պ. Զաքար համաձայնել է այդ պաշտօնը կատա-
րել առանց վարձատրութեան:

Վարչութիւնը իրան վերապահած է ներկայացումներին հրաւիրելու է պ. Արեւեանին իր քառասրօլիոր որոշ վճարով:

Որովհետև ներկայ սեղանին լրանում է դե-
րասան Աբելեանի 25-ամիայ յօրելեանը, Վարչու-
թիւնը որոշել է նախաձեռնութիւնը վերցնել իր
վրայ, այդ յօրելեանը կատարել Թիֆլիսում ղեկո-
ւելու և այդ առիթով հրաւիրել մի յատուկ ժո-
ղով՝ մասնաժողով ընտրելու գործը վայելուչ կեր-
պով իրագործելու համար: Վարչութիւնը բանակ-
ցութեան մէջ է մտել Վրաց Ազնուական Բանկի
հետ՝ Վարչամեանի թաւորներ կապալով վերցնելու
համար: Բանկի վարչութիւնը խոստացել է նորո-
ւութիւններ կատարել թաւորում:

Այնուհետև Զարար զեկուցեց հայկական
Թատրոնի 50-ամեայ գոյութեան մասին: Ռուսա-
հայ Թատրոնի առաջին ներկայացումը տրուել է
Մոսկուայում 1853 թ. յունվարի 28-ին: Նոյն
տարին Ներսիսեան դպրոցում տրուել են միքանի
ներկայացումներ, 1883 թ. հին Արքունական Թատ-
րոնում կատարուեց հայ Թատրոնի 30-ամեակը,
1908 թ. յունվ. 28-ին լրանում է հայ Թատրոնի
գոյութեան 50-ամեակը: 50 հրկար ձիգ տարիներ-

րում կովկասահայը անկարող եղավ անհաղթել
թատրոնի շէնք կառուցանել: Եւ այդպիսի փառա-
ւոր յօբելեանի յաւերժացման համար Վարչու-
թիւնը ինքնին տեղին և ժամանակին է գտնում
մի Ֆօնդ կազմել և կառուցանել սեփական թատ-
րոն 60—80 հազար ռուբլի ծախսելով: Թատրոնի
գոյութիւնը Դրամատիքական Հսկիւթիւթեան Վար-
չութեան ազատ կկացուցանէ շէնքի վարձը վճա-
րելուց, որ 5 տարուայ ընթացքում միայն գոյա-
ցել է 42,000 ռուբլի: Վարչութիւնը առաջարկու-
է մի մասնաժողով ընտրել, որ թատրոնի մասին
տեղեկութիւններ ժողովէ, գետինը գտնէ և ուսում
հասիրէ զանազան տեխնիքական կողմերը, իս
ղեկտեմքերին ընդհանուր ժողով գումարել, ուր
գեկուցանել մասնաժողովի գործունէութեան հե-
տեանքները:

Սկսում է մտքերի առատ փոխանակությունը։

Դարչու թեան առաջարկու թեան:
 Խ. Խաչատրեան կամենում է իմանալ՝ ի

թատրոնը թիւ տիպի է լինելու. Արծրունին իր թատրոնի վրայ ծախսեց 30,000 ռ. իսկ Վրաց Ազնուակ. թատրոնի միայն վերանորոգութիւնը նստեց 120,000 ռ., ժողովրդական թատրոն ունենալու համար հարկաւոր կլինի առնուազն 400,000 ռուբլի: Ցանկալի էր, որ Վարչութիւնը, նախ քան իր այդ առաջարկութիւնը ընդհանուր ժողովին անելը, իր առաջարկը տպուած ուղարկէր անդամներին, որպէսզի հնարաւոր լինէր նախօրօք խնդրէ հետ բազմակողմանի կերպով ծանօթանալ:

Վրոյր յայտնում է, որ «Յուշաշար» շարաթաթերթի խմբագրութիւնը ուսասնայ թատրոնի 50-ամնայ գոյութեան առթիւ մի ժողովածու է հրատարակելու պատկերազարդ: Պատմական մասը յանձն է առել խմբագրել պ. Լէօն:

Ոմանք յոռետես են Վարչութեան առաջարկած գումարը ժողովելու վերաբերութեամբ հայկական այս ծանր երկունքին:

Ս. Յակոբեան կարծում է, որ յօբելանսը կարելի է յաւերժացնել և ուրիշ գործերով. զորօրինակ՝ բնակարանային ճոխացնելով, հայկական թատրոնի պատմութիւնը գրելով, գերաստններին — կատարելագործուելու համար — արտասահման ուղարկելով, նոր թարմ ոյժեր հրաւիրելով և այլն:

Նախագահը առաջարկում է խնդիրը երկու մասի բաժանել 1) յօբելանսը կատարել և 2) ինչ բան կարելի է գործադրել:

Սատիսֆակցիան. «Ես կկամենայի խօսել միայն թատրոնի մասին. յօբելանսի մշակումը մասնաժողովի գործն է: Ես կարծում եմ, որ այնքան էլ դժուար չէ ձեռք բերել մի գումար, որով սեփական թատրոնի շէնք կառուցանուի: Օրինակ՝ վերջինքը Զուբալով ժողովրդական տունը, որի վրայ Զուբալովը ծախսել է 200,000 ռ.: Իսկապէս ինքը Զուբալովը չէր, որ պայտաւ այդ տունը շինելու միտքը, այլ մի խումբ մարդիկ, որոնք միքանի տարի առաջ ձեռնարկել էին ժողովարարութեան և ժողովել 16,000 ռ. Զուբալովը պատահմամբ տեղեկացաւ այդ մասին և յանձն առաւ շինել այդ շինութիւնը: Թիֆլիսը այժմ ունի մի գեղեցիկ ժողովրդական թատրոն. իսկ թատրոնի վարչութիւնը ունի իր ձեռքի տակ 16,000 ռ. Վարչութիւնը մտադիր է հանգանակութեամբ այդ գումարը հասցնել 40—50 հազար ռուբլու, որով կառուցանայ Նախալովիում նոյնպիսի մի ժողովրդական տուն կառուցանել: Այդ տան համար Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նուիրել է 500 սաժէն գատարկ հողաբաժին: Ահա այդ օրինակ օրինակներն աչքի առաջ ունենալով, պէտք չէ բնաւ լաւատեսութիւնից խուսափել և թատրոն

շինելու մտքից յետ կասել: Կարծում եմ, որ թէ քաղ. վարչութիւնը, թէ այլ հիմնարկութիւններ օգնութեան կհասնին՝ այդպիսի օգտակար հիմնարկութիւնը գլուխ բերելու: Հարկաւոր է նախ հաւատ, ապա աշխատանք»:

Հ. Առաքելեան առաջարկում է ամենեւին չը նախաորոշել ինչ ակտով յաւերժացնել այդ յօբելանսը. այլ ընտրել մի մասնաժողով, որ Վարչութեան հետ որոշէ երբ տօնել և ինչով յաւերժացնել:

Նախագահը քուէարկութեան է դնում հետեւալ բանաձեւը, որ և ընդունւում է սկզբունքով միաձայն:

«Սկզբունքով ընդունւում է միաձայն թատրոնի սեփական շէնք կառուցանելու գաղափարը»: Զուգընթաց ընդունւում են նաև հետեւալ բանաձեւերը. «Ընդունւում է տօնել հայոց թատրոնի գոյութեան 50-ամեակը և այդ տօնման հետ յաւերժացնել ձեռնարկել թատրոն շինելու մտքի իրաւորման»:
«Յանձնել Վարչութեանը՝ հրաւիրել մասնագէտ անձանց խորհրդակցելու այդ մասին և նախքան ընդհանուր ժողովը — տպագրել զեկուցագրերը մանրամասն և ուղարկել անդամներին»:

Ապա Զաքար յայտնեց, որ Ընկերութեան նախագահուհի և անդամ Իշխ. Մարիամ Թումանեան հրաժարուել է Ընկերութիւնից, և որ Վարչութիւնը ցաւակցութիւն է յայտնել իշխանուհուն հեռանալու համար:

Սաչատրեան առաջարկում է Իշխ. Թումանեանին ընտրել Ընկերութեան պատուաւոր անդամ:

Հակիրճ ընդդիմախօսութիւններից յետ, որոշւում է ժողովականների մեծամասնութեան կողմից շնորհակալութիւն յայտնել Իշխանուհուն 8-ամնայ անխնայ պաշտօնավարութեան համար՝ իբրև անդամ և նախագահ Դր. Ընկ.:

Կարդացուեց նաև գերաստնԱղայեանի խընդիրը, որը վերաբերում էր նրան սրօրից հասանելիք չստացած 300 ռ. մասին իր 25-ամեակի առթիւ տրուած բենեֆիսային ներկայացումից: Մնացած 300 ռ. ժողովելու համար ընտրուած էին պ. պ. Հ. Առաքելեան, Ա. Մելիք-Այվազեան և Լ. Սարգսեան, որոնց յանձնարարուեց մի կերպով գտնել և յանձնել Աղայեանին այս գումարը. պ. Հ. Առաքելեան ժողովում է միայն 175 ռ. և ուղարկում պ. Սատիսֆակցիան, թողնելով մնացած 125 ռ. ժողովելը Մելիք-Այվազեանին և Սարգսեանին. սակայն սրանք մինչև օրս չեն հոգացել կարգադրելու իրանց միսին:

Թեք և զէմ կարծիքներից յետոյ, Լ. Բաբայեան խոստանում 3 օրուայ մէջ գտնել 125 ռ.

և յանձնել Վարչութեան՝ որ սա իր կողմից տայ խնդրատուին:

Այնուհետև կատարուեցին ընտրութիւնները: Գլուխարկութեամբ Վարչութեան անդամ ընտրուեց Լ. Բաբայեան, իսկ փոխ-անդամ Մ. Աթաբեկեան. վերաստ. յանձնաժողովի անդամ ընտրուեց Ս.

Շահվերդեան, փոխ-անդամ Յ. Մելիք-Բախտամեան: Ժողովը փակուեց ժամը 4-ի մօտերը:

Նախագահ ընդհ. ժողովի՝ Ա. ԳԱՍՆԹԱՐ


Գարտուար՝ Ս. ԵՍԱՅԵԱՆ

Ս Ե Փ Ա Կ Ա Ն Թ Ա Տ Ր Ո Ն

Nur Beharrung führt zum Ziel
Schiller.

Ներկայ թուրքիկ ուրուագծով մենք բոլորովին նպատակ չունինք տալու խնդրի կատարեալ պատկերացումը: Մենք միայն կամենում ենք Հայ Դրամատիքական Ընկերութեան հաշուառութեան կցել փոքրիկ տեղեկութիւն և սրանով Թիֆլիզում հայ թատրոնի սեփական շինութիւն ունենալու հայ թատրոնի սեփական շինութիւն յայտնելու մասին մեր խօսքն առած լինել: Այս խնդրի մասնաւոր և բազմակողմանի ուսումնասիրութիւնը վարչութիւնը կներկայացնէ իր առանձին զեկուցումով և այն ժամանակ այս նոր տեղեկագիրն էլ իր բոլոր նիւթերով կտպագրուի «Տեղեկագիր» յետագայ գրքերից մէկում:

Մեր շօշափած խնդիրը ունի իր պատմութիւնը: Դրամատիքական Ընկերութեան ներկայ Վարչութիւնը յաւակնութիւն չունի առելու, որ իրան է պատկանում նախաձեռնողի դերը այդ խնդրում: Այստեղ մենք հարցի պատմական կողմին չենք մօտենայ և կրեւրենք մեր տեղեկութիւնները այնտեղից, երբ սեփական թատրոն ունենալու խնդիրը նորից յարուցուեց և այս անգամ ոչ միայն լոկ խօսքեր շուայելու նպատակով, ինչպէս այդ տեղի ունէր առաջ, այլ միմիայն խնդրի պէս այդ տեղի ունէր առաջ, այլ միմիայն խնդրի կատարեալ իրականացման ցանկութիւնից գլուխու: Յաւանակուից մոմենտն էր թատրոնի 50-ամեակը, որ, ինչպէս յայտնի է, լրացաւ 1908 թ. յունուարին: Անցեալ 1907 թ. յուլիսին, երբ Վարչութեան մէջ մեր կողմից հարց բարձրացրինք հայ թատրոնի առաջիկայ 50 ամեակի յօբելանսի հայ թատրոնի առաջիկայ մի ապացոյց առաջ առնելու և իբրև յաւերժացման մի ապացոյց առաջ բերինք սեփական թատրոնի շէնք ունենալու խնդիրը, Վարչութիւնը սիրով վերաբերուեց մեր




Münchener Schauspielhaus

(Գլխաւոր մուտք)

գլուխ գալ, եթէ եռանդուն կերպով աշխատենք այդ գործի համար: Որ սեփական թատրոն ունենալու կարեւորութիւնը վաղուց հասունացած մի անհրաժեշտութիւն է և անյետաձգելի մի պահանջ, այդ մասին լաւ ապացոյց կարող է լինել հայ թատրոնի կէսդարեան պատմութիւնը կամ ճիշտ

բիւրաւոր հազարներ, կամ Արքունական թատրոնը, որ կառուցուել է 18 տարի և բոլոր այդ ժամանակամիջոցում շէնքի կառուցման տեխնիքական մասի հսկողները ստացել են տարեկան 4000-ական ռուբլի:

Զիտունելով սեփական թատրոն կառուցանել-



Münchener Schauspielhaus

(Բեմ)

լու միտքը և նկատելով ջերմ համակրութիւնը հայ հասարակութեան բոլոր խաւերի կողմից, Վարչութիւնը Հ. Դ. Ընկերութեան յօրեկանական հանդիսաւոր Ընդհ. ժողովին, որ տեղի ունեցաւ ներկայ տարուայ յունուարի 27-ին, նորից յաւելցեց այս խնդիրը և առաջարկեց նոյն իսկ իրան օգնելու համար ընտրել մի օժանդակ մասնաժողով: Ընտրուեցին տ.ա. Մամուլեան և Սպենդիարեան. պ. պ. Կաֆեան և գերասան Սաֆրազեան: Բացի այդ Վարչութեան տրուեց իրաւունք մասնաժողովը լրացնել և ուրիշ անդամներով: Հրաւիրուեցան Բ. Մ. Դուրեանեան, Պ. Մ. Ալիխանեան, Ս. Ս. Յարութիւնեան, Արշ. Ն. Միլով, Ա. Ա. Մելիք-Ազարեան, ճարտ. Եարալեան, Խ. Տ. Աֆրիկեան, Դ. Խարազեան, Խ. Ա. Վերմիշեան, Պ. Ս. Գամբարեան, Պ. Յ. Խոնուհեց և ուրիշներ, որոնք չլրացան խոստանալ իրանց պատրաստական աջակցութիւնը:

Առաջին լուրջ խնդիրը, որ տրուեց մասնաժողովի խորհրդածութեան, դա թատրոնի կառուցման նիւթականի հարցն էր:

Որտեղից սպասել այդ գումարները:

Դա կարգինալ և գլխաւոր կէտն է:

Հ. Դ. Ընկերութիւնը, ինչպէս յայտնի է, իր սեփական միջոցները չունի: Մինչև անգամ պէտք է դեռ վարձանալ ինչպէս նա կարողանում է թէ պահել իր գոյութիւնը և թէ գործել, — սա-

կայն այդ մասին ընդհանուր ժողովին մանրամասն հաշիւ կտրուի իր ժամանակին:

Սակայն եթէ մենք չունինք միջոցներ թատրոնի կառուցման համար, բայց անյուս չենք. նոյն իսկ խոր համոզում էնք, որ հայ հասարակութիւնը յանձին բոլոր խաւերի և դասակարգերի՝ հարուստ միլիոնատէրերից սկսած, մինչև արհեստաւոր գործակատարը արձագանք կտայ մեր հրաւերին և չի դանալ յոյց տալու մեզ կարևոր աջակցութիւնը: Մեր յոյսերը հիմնուած են հաստատուող փաստերի վրայ:

Սեփական թատրոն ունենալու միտքը փայփայում են հայ ազգաբնակչութեան բոլոր խաւերը: Մեզ փնտմ է հաւատով և յամառ եռանդով կաշկել գործին: Պէտք է բանալ ստորագրութիւն: Ժողովարարութիւն անել, և հաւատացած ենք, որ մի քանի տարուայ մէջ կարևոր գումարները արդէն հաւաքուած կլինին:

Սրան ապացոյց թող լինի այն հանգամանքը, որ այժմ մենք չենք դիմած ոչ մի ժողովարարութեան, մինչդեռ գումարներն այդ նպատակով արդէն գալիս են, և շատ շատերը, նոյն իսկ բանկային հիմնարկութիւնները խոստացել են իրանց աջակցութիւնը:

Որպէսզի գործը չչեղածուի, վարչութիւնն արդէն հոգացել է այդ ուղղութեամբ: Նա դիմել է պ. Փոլարքային և խնդրել, որ թոյլ տրուի կովկասեան հայերի մէջ ժողովարարութիւն անել հայ թատրոնի շէնքի կառուցման համար: Բերում ենք և այդ խնդրագրի բովանդակութիւնը:

Его Сіятельству Господину Намѣстнику
ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
на Кавказѣ.

28-го сего января истекаетъ 50-лѣтіе существованія армянскаго театра въ предѣлахъ Россіи.

Если огромно культурно-просвѣтителное значеніе театра, тѣмъ больше значеніе туземнаго театра на Кавказѣ. И за 50 лѣтъ своей жизни армянскій театръ, не смотря на всѣ тяжелыя условія его существованія, всегда служилъ высокою цѣлю поднятія культурнаго уровня широкихъ народныхъ массъ туземнаго населенія, проводя въ эти массы благородныя идеи наиболѣе видныхъ представителей русскою и классическою европейскою литературы.

Но съ сожалѣніемъ слѣдуетъ отмѣтить тотъ печальный фактъ, что за минувшія 50 лѣтъ армянскому театру пришлось вынести тяжелую борьбу за свое существованіе, главнымъ образомъ благодаря неблагопріятнымъ условіямъ матеріальнаго свойства.

Естественно по этому, что при обсужденіи вопроса о томъ, какъ и чѣмъ ознаменовать предстоящее 50-лѣтіе армянскаго театра, Общее Собраніе членовъ Армянскаго Драматическаго Общества въ Тифлисѣ единогласно постановило: построить для армянскаго театра въ Тифлисѣ, какъ въ центрѣ умственной и культурной жизни края, собственное помѣщеніе и тѣмъ обезпечить существованіе армянскаго театра. Заботы объ изысканіи средствъ на эту постройку Общее Собраніе возложило на Правленіе Общества, которое, увѣренное въ томъ, что идея о постройкѣ театра встрѣтитъ горячее сочувствіе во всѣхъ слояхъ армянскаго населенія нашего края, рѣшило обратиться къ армянскому обществу съ призывомъ о поддержкѣ.

Съ этой цѣлью Правленіе Армянскаго Драматическаго Общества имѣетъ честь покорнѣе просить Ваше Сіятельство разрѣшить означенному Обществу открыть подписку среди армянъ, живущихъ на Кавказѣ, для сбора пожертвованій на образованіе фонда на постройку собственнаго театра въ Тифлисѣ.

Всѣ пожертвованія съ этой цѣлью, по мѣрѣ ихъ поступленія, будутъ сдаваемы на храненіе въ одно изъ мѣстныхъ банковскихъ учрежденій, по образованіи же капитала достаточнаго для того, чтобы приступить къ постройкѣ, созвано будетъ чрезвычайное Общее Собраніе членовъ Армянскаго Драматическаго Общества, которое и распорядится означеннымъ капиталомъ согласно его цѣли и устава Общества.

Предсѣдатель Правленія Мих. Джабаръ.
Члены Правленія: Гавр. Цуриновъ, Ал. Хатисовъ, Мих. Амбарцумянъ, Кар. Ширинянъ, Л. Бабалянъ, М. Атабековъ, Р. Иоаннісіани.

Այդ խնդիրը տրուած էր ներկայ տարուայ յունուարին և միայն յունիսին ստացուած է թոյլտուութիւնը: Թոյլտուութիւնը տուած է հետեւալ պայմաններով. ընդհանուր կովկասեան հայերի մէջ ժողովարարութիւն անել կարելի է. գումարները պիտի պահուին Արքունական բանկում, ժողովարարութիւն անող անձանց մասին պիտի ծանուցանել նահանգապետին. նրան ևս պէտք է ներկայացնել ժողովարարութեան հաշիւաւորութիւնը: Յիշեալ թոյլտուութիւնը առաջին քայլն է այդ գործի ապարիզում:

Պէտք է գնալ առաջ:



Münchener Schauspielhaus

(Բովեր)

Վերջացնելով իմ դիտողութիւնները, կարող ենք հաղորդել, որ Ընկերութեան գանձարան՝ իբրև ֆոնդ թատրոնի շինութեան համար մուտք է եղել մօտ 800 ռուբլի (տես հաշուկշիւ): Թէ այդ գումարը և թէ նոյն նպատակով եղած նուէրները պիտի մնան անձեռնմխելի և չգործադրուեն ուրիշ նպատակներով:

Ցանկանալով շուտով տեսնել հայ թատրոնի կառուցումը Թիֆլիզում, նորից կասենք, որ նպատակին հասնելու համար ամենից առաջ հարկաւոր է եռանդ և ջանք...

Nur Beahrung führt zum Ziel.

Մ. ԶԱՐԱՐ

Մ Ո Ւ Ր Ա Ց Ա Ն

(7 30 օգոստոսի 1908 թ.)

Շարուն էին Տեղեկագրի վերջին երեսները, երբ լսեցինք «Ռուզան» պիեսի հեղինակ Մուրա-
ցանի մահուան լուրը:

Յանձին Մուրացանի հայ զբոսաշրջական հե-
ղինակների փոքրիկ ընտանիքը կորցնում է իր
արժանաւոր անդամներից մէկին: Մուրացանը
պատմական-գրամայի հեղինակ աւելի ուժեղն էր,
քան «Շուշանիկ»-ի, «Արշակ Բ»-ի հեղինակները:

Մի նորութիւն, որ մտցրեց Մուրացանը իր
պիեսի մէջ՝ դա նրա հերոսուհի Ռուզանի տիպը
էր: Մեր պատմական թատերագրողները գիտու-
թեամբ խուսափում էին կանանց գերերից: Հայ
միտքը չէր հաշուում կին մարդու ներկայութեան
և մասնակցութեան հետ մեր իրականութեան մէջ:
Մեր պատմագիրներն էլ չեն նկատել կանանց գերը
հայկական կեանքում, եթէ չհաշուենք Եղիշէի թը-
ուցիկ նկատումները մեր «փափկասուններ» մա-
սին: Մինչդեռ Մուրացանը իր Ռուզանին օժտել էր
այնպիսի առաւելութիւններով, որ չէր կարող իր
ժամանակին չոգևորել սակաւագահանջ և ազգային
հովերով անուած հայ միտք ու ճաշակը: Ռուզանը
և՛ զոհուում է հայրենիքի համար և՛ չի խնայում իր
անձնական երջանկութիւնը ոտքի տակ տալ: Նա
գնում է և կամք է տալիս ամուսնանալու թուրք
խանի, իր հայրենիքի թշնամու հետ, և որպէսզի
ազգային-կրօնական զգացմունքը չվիրաւորուի,
Ռուզանը թոյն է առնում կայնպէս գնում թուրք
խանի մօտ:

Ճիշտ է, Ռուզանի վերաբերմամբ մեր պատ-
մական ակտերն այլ բան են ասում, նրանք չեն
տալիս այն հերոսական ընդգծումները, ինչ որ
տալիս է Մուրացանը, բայց գեղարուեստագէտը,
ինչպէս, ազատ է իր շարիխների մէջ:

Մուրացանի ժամանակակից հայերը չէին
կարող չոգևորել Ռուզանով: Մեր ազգային պատ-
մական կեանքը շատ մօտ անցեալում ոչնչով չէր
ոգևորւում, եթէ ոչ թունդ ազգային շովինիզմով:
Ահա թէ ինչպէս «Ասլան-Բալասի»-ները, «Ռուզան»-
ները մեծ անուն են ստեղծել իրանց հեղինակնե-
րի համար:

Ժամանակակից առողջ միտքը չի կարող հաշ-
տուել, ինչպէս, այնպիսի պիեսների հետ, որոնք
ազգերի փոխադարձ յարաբերութիւնը չափում են
սրանց տականքների փոխադարձ ընդհարումներով:

Բայց այն ժամանակներում չէին կարող, ինչպէս,
Բուրա խանի արշաւանքները բացատրել այլ կերպ,
եթէ ոչ թուրք ամբողջ ազգի գաղանութեամբ:

Մեզ պատահել է լսել, որ իբր թէ Մուրա-
ցանին չեն ճանաչում նրա համար, որ նա չի հրա-
տարակել իր հեղինակութիւնները:

Դա սխալ ենթադրութիւն է:

Արովհանցն էլ իր «Վէրք Հայաստանին» չէր
հրատարակել մօտ 17 տարի, բայց նրա անունը
չմարեց իր ժամանակակիցների մէջ: Մուրացանի
չճանաչելը՝ նրա ուղղութիւնն է: Նա չէր ըմբռնում
իր ժամանակի առաջագէտ հովերը և նոյն իսկ
իր ժամանակի գոյութեան համար խիստ փա-
սրանց հայ ազգի գոյութեան համար խիստ փա-
սակար էր համարում: Բայց չնայելով այդ հան-
գամանքին, Մուրացանը չմնաց աննկատելի: Ապա-
ցոյց նրա Ռուզանը, որ ներկայացրել են գրեթէ
ամեն տեղ, ուր հայ կայ և ոգևորուել են այդ
պիեսով: Եւ Մուրացանի արժանաւոր ծառայու-
թիւնը հայ բեմին կայանում է նրանում, որ նա
կարողացաւ իր ժամանակի յայտնի խաւերի տրա-
մագրութիւնները արտայայտել բեմական գրուած-
քի մէջ: Մի քանի սերունդներ ոգևորուել են Ռու-
զանով, այլ ևս չենք ասում նրա մի շարք վէպե-
րով, որ լոյս էին տեսնում «Նոր-Դար»-ում և «Ար-
ձագանք»-ում:

Մեզ չափազանց ծանր է յիշատակել այստեղ
Մուրացանի արտակարգ չարքաշ կեանքը: Նա իր
54 տարուայ կեանքում ստիպուած է եղել կողմ-
նակի պարագմունքներից չհեռանալ, իսկ վերջին
ամիսներում բոլորովին մոռացուած հալուել է
Միքայէլեան հիւանդանոցի հոգեկան բաժանմուն-
քում: Ամբողջ կեանքում զրկուած լինելով ընտա-
նեկան երջանկութիւնից, սիրուց, նա իր հիւան-
դութեան ժամանակ էլ թողուած էր իր մերձա-
ւորների խնամքից: Ինչպէս, մենք միտք չունինք
Մուրացանի ամբողջ պատկերը ներկայացնելու,
զրա համար պիտի խօսէինք նրա բազմահատոր
վէպերի մասին: Մեր նպատակն էր շեշտել Մու-
րացանին իբրև զբոսաշրջական և նրա արժանաւոր
տեղը ցոյց տալ:

Չմոռանանք ասել, որ Մուրացանի ժողովածուի
Բ հատորը այժմ տպւում է. սրա մէջ լոյս է տես-
նելու և նրա միակ պիեսը՝ Ռուզանը: Այսքանը
կասենք, որ Ռուզանն այժմ պատմական նշանա-

կութիւն ունի մեզ համար, և միշտ նա կմնայ
իբրև մի նկատելի կոթող անցեալ դարի 80-կան
թուականների հայկական տրամագրութիւնների,
տրամագրութիւնների, որից զերծ չէր և մեր այն
ժամանակուայ իսկ համարուած առաջագէտ բա-
նակը, որից կատարելապէս չի թօթափել և այժ-
մեան հայութեան աչքի ընկնող մասը:

Ջարմանալի է այն ուղադրութիւնը, սէրը,
որպիսին արտայայտել է Մուրացանը դէպի այդ
բնորոշ տրամագրութիւնները: Այդ է պատճառը,
որ երբ յայտնի դարձաւ Մուրացանի տառապելը
հիւանդանոցում, նրա մենակ մնալը, չգտնուեցաւ
գրեթէ մէկը, որ չվշտանար խոր սրտից նրա դառն

վիճակով: Նրան յիշեցին իբրև ազնիւ, շիտակ
հայ գրողի, որ մինչև մահը չզաւաճանեց իրան
համար ոչ մի երջանկութիւն և բարեկեցութիւն
չստեղծող գրչին:

Հ. Գ. Ընկերութիւնը յարգեց Մուրացանի յի-
շատակը իր կողմից պատկ դնելով նրա որբացեալ
դագաղի վրայ, իսկ վարչութեան կողմից պ. Լևոն
Բարայեան մի դամբանականով զրուատեց հան-
գուցեալի ծառայութիւնները հայ գրական և թա-
տերական ասպարիզում:

Յ. ՍՈՒՎԵԱՆ



Ստացուած է ներկայացումներէց

Ա. ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

1. «Դօկտօր Շտօկման»	715	51		
2. «Նշանուածներ»	687	33		
3. «Եւգինէ»	416	35		
4. Թատրոնի 50-ամեայ յօրելեանի առթիւ	1630	73		
5. «Սև թռչուն»	515	80	3965	72

Բ. ԹԻՖԼԻՉԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

16 ներկայացումներէց 150-ական ըուրլի 2400 —

Գ. ՊԱՏԱՀԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՍԵՁՈՆԻ ՎԵՐՁԸ

Արքունական թատրոնում «Տիգրանուհի»	140	19		
Արտիստական թատրոնում «Աւագակներ»	199	72		
Ժողովարանում 9 ներկայացումներէց 150-ական ըուրլի	1350	—	1689	91

ԳՈՒՄԱՐ ՌՈՒՐԼԻ 8055 63

Ժախք ներկայացումների՝

Ա. ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Թատրոնի վարձ 5 ներկ. համար 200-ական ռ. 1000 —				
Վեշարկայի թատրոնի վարչութեան ռ. 377 10	1377	10		
Պետակ. տուրք, տոմսակ. վրայ գրողմանիչերի (перс. сборъ)	213	29		
Դերաս. ընկերակ. 15 ներկայացման սուպսիդիա 15 ռ.	2250	—		
« « 5 « վարձ 200 ռ.	1000	—		
Կողմնակի դերասաններին վարձ	180	—		
Հեղինակներին ու թարգմանիչներին հօնօրար	130	—		
Յայտարարութեանց ու աֆիշաների	151	95		
Հագուստի վարձ	35	65		
Տպարանական, լուսաւորութեան, արտագրութեան և այլն	158	52		
Բէկվիդիա	4	48		
Պարգև թատրոնի ծառայողներին և բանւորներին	95	—		
Զեղչ ընկերութեան անդամներին 484—04				
որից վճարել է դերաս. ընկերակցութիւնը 60—49	433	56	6019	55

Բ. ԹԻՖԼԻՉԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Վրաց Դրամ. Ընկերութեան մի ներկայացման վարձ.	100	—		
Պարիկմախերի	80	—		
Հագուստներ, բէկվիդիա, արտագր. մուղիկա և այլն	136	52		
Հեղինակներին և թարգմանիչներին հօնօրար	53	—	369	52

Գ. ՊԱՏԱՀԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՍԵՁՈՆԻ ՎԵՐՁԸ

Թատրոնի վարձ.	350	—		
Դերասաններին ուձիկ	1165	—		
Պարիկմախեր, յայտարարութեանց, հօնօրար, հագուստի և այլն	54	99	1569	99
Գումար	Ռուբլի	7959	06	
Ներկայացումներէց արդիւնք	«	96	57	
ԳՈՒՄԱՐ	Ռուբլի	8055	63	

Ստացուած է՝			
Ա. ՆՈՒԷՐՆԵՐ			
Պ. Աֆրիկեանից Տ.	1000	—	
Պ. Աւան Իւզբաշեանից Դ. Բ.	1000	—	
«Արամազդ» ընկերութիւնից Բագու	500	—	
«Եղբարք Միլզոյեան» ընկերութիւնից	300	—	
Տիկ. Բէլեցկուց Մ. Խ.	200	—	
Պ. Յարութիւնեանից Ս.	100	—	
Թիֆլիզի Նաւթ-արդիւնաբերական Ընկերութիւնից	100	—	3200
Բ. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ			
Ընկերութեանս 177 անդամներից 5-ական ուրբի			885
Գ. ԶԲՕՍԱՆՔՆԵՐԻՅ			
5 Մայիսի 1907 ամի	865	35	
27 Ապրիլի 1908 ամի	1314	50	2179 85
Դ. ԱՐԴԻՒՆՔ			
Թատրոնական ներկայացումներից (ըստ հաշուի № 1)			96 57
ԳՈՒՄԱՐ			
	Ռուբլի	6361	42

Ծախսուած է.			
Ա. ԶԲՕՍԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒՆ			
5 Մայիսի 1907 ամի	560	05	
27 Ապրիլի 1908 «	806	55	1366 60
Բ. ՄՐՅԱՆԱԿ ՏԻԿ. ՄԱԿԱՐԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ			
Նարդոսին «Սպանուած Աղանի» պրեսայի համար կէս պրեմիա, համաձայն ժիւրիի որոշման			75 —
Գ. ԸՆԹԱՅԻԿ ԾԱԽՔԵՐ			
Գրասենեակի վարձ ու պահապանի ոռճիկ	239	—	
Տպարանական ծախք և գրասենեակի պիտոյքների	107	70	
Նուէրներ ու ուղերձներ	139	—	
Ծախք յօգուտ Պետրոսեանի ընտանիքի չկայացած ներկ.	73	65	
Ընկերութեան գրասենեակում բեմ կառուցանելու ծախք	73	87	
Սգի պսակների, յայտարարութեանց և հեռագիրների (Պոս- շեան, Ս. Զմշկեան և Քնարիկ)	57	25	
Փոստ-հեռագրային, պարգևներ և այլ մանր ծախքեր	70	55	
Խմբագրութիւններին զանազան յայտարարութիւնների	32	30	
Հանգուցեալ դերասան Աղեղիսեանի թաղման ծախք	40	—	
Թատրոնական ժուրնալների	20	—	
Կահ-կարասիք գրասենեակի համար (սեղան, պահարան, աթոռներ և այլն	55	—	908 32
Գումար			
	Ռուբլի	2349	92
Ընկերութեանս արդիւնքը 1907/8 տեղոյին	«	4011	50
ԳՈՒՄԱՐ			
	Ռուբլի	6361	42

ՄՆԱՅՈՐԴ ՆԱԽՈՐԴ ՍԵՉՈՆԻՑ			
Ապառիկներ մնացած բալի տոմսակներից	375	—	
Հաւաքարի թատրոնի վարչութեան աւանս վճարած . .	160	—	
Դերասաններին աւանս վճարած	452	50	
« փոխարինարար	70	—	1057 50
ՄՈՒՏՔ 1907/8 ՍԵՉՈՆԻ			
1) Ներկայացումներից՝			
Արտիստիքական թատրոնում	3965	72	
Թիֆլիզի ժողովարանում	2400	—	
Պատահական	1689	91	8055 63
2) Նուէրներ՝			
Զանազան անձերից	3200	—	
3) Անդամավճար՝			
Ընկերութեանս 177 անդամներից 5-ական ը . .	885	—	
4) Զբօսանքներից՝			
5 Մայիսի 1907 ամի	865	35	
27 ապրիլի 1808 ամի	1314	50	2179 85
5) Սեփական թատրոնի կառուցման ֆօնդ՝			
Զանազան հիմնարկութիւններից և անձերից			
նուէրներ կանխիկ դրամով	454	57	
6) Հանգուցեալ Պետրոսեանի ընտանիքի օգտին՝			
«Մշակ» լրագրի միջոցով նուէրներ	119	45	14894 50
ԳՈՒՄԱՐ			
	Ռուբլի	15952	—

Նախորդ սեզոնից մնացած սլարտքը վճարուած է.			
ա) Դերասաններին, հեղինակներին, խմբագրութիւններին, տպարաններին և Արտիստիքական Ընկ.	2054	52	
բ) Հանգուցեալ Գ. Պետրոսեանի ընտանիքին	231	—	
գ) Ընկերութեանս զանձապահին	193	64	2479 16
ԾԱԽՔ 1907/8 ՍԵՉՈՆԻ			
Ներկայացմանց ծախսերը (ըստ № 1 հաշուի)	7959	06	
Զբօսանքներ կազմակերպելուն	1366	60	
Մրցանակ տրիկին Մակարեանի անուն	75	—	
Ընթացիկ ծախքեր (ըստ № 2 հաշուի)	908	32	
վճարած Գ. Պետրոսեանի ընտանիքին	119	45	10428 43
ՄՆԱՅՈՐԴ ԱՌ ՅԵՏԱԳԱՅ ՍԵՉՈՆԸ			
Ապառիկներ՝			
1906 6/7 թւի բալի տոմսակներից	333	—	
Հաւաքարի թատրոնի աւանսը	160	—	
Դերասաններին աւանս	452	50	
« փոխարինարար	70	—	1015 50
Կանխիկ՝			
Ընթացիկ հաշուով «Ա. Պրիդոնով և Ընկ.»			
Բանկային գրասենեակում № 995 տետրով	1954	57	
Գանձապահի մօտ	74	34	2028 91 3044 41
ԳՈՒՄԱՐ			
	Ռուբլի	15952	—

Ա Վ Տ Ի Վ

ԴՐԱՄԱՐԿՂ

Գանձապահի մօտ ու բանկային գրասենեակում ընթացիկ հաշվով 2028 91

ՏՈԿՈՍԱԲԵՐ ԹՂԹԵՐ

Բանկային գրասենեակին պահելու յանձնած, սեփական թատրոնի ֆոնդին նուէր ստացած.

- 1) Տիկ. Եկ. Զամուկեանից I-4⁰/₀ Պետական բենտա № 3161/₆, (կտրոնները 1 մարտ 1908) 100 ռ. արժողութեամբը, կուրս 73¹/₂ 73 50
- 2) «Ակումբից» Ենիկոպլուեանի միջոցով I խաղատոմսակ II ներքին փոխտուրթեան № 17775/₄₄ (կտրոն. 1 սեպտ. 1907) կուրսի գնով 250 — 323 50

ԱՊԱՌԻԿՆԵՐ

Զանազան անձանց վրայ 190⁶/₇ սեզոնի բալի տոմսակների արժեքը 333 —
Հաւարարի թատրոնին աւանս վճարած 190⁶/₇ սեզոնին 160 —
Դերասաններին աւանս վճարած 190⁵/₆ սեզոնին 452 50
« փոխարինարար 190⁶/₇ սեզոնին 70 — 1015 50

ԴԵՖԻՑԻՏ

Նախորդ տարիներից 9338 72
Դուրս գալով 190⁷/₈ սեզոնի արդիւնքը 4011 50 5327 22
ԳՈՒՄԱՐ Ռուբլի 8695 13

Վարչութեան նախագահ
Անդամ-գանձապահ

Պ Ա Ս Ս Ի Վ

ԱՆՁԵՌՆԻՄԵՆԼԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Ստացուած՝
Ակումբից 3248 10
Պ. Սունդուկեանից Գ. Ն. 1418 96
Տիկին Մակարեանից 3000 — 7667 06

ՅԱՏՈՒԿ ԳՈՒՄԱՐՆԵՐ

I ֆօնդ սեփական թատրոնի կառուցման թիֆլիզում
Ստացուած նուէրներ.

- ա) ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ.
Ըսկերակցութեան թատերասերների խմբ. 100 —
Ալեքսանդրապօլի « » 294 28
Կարսի «Հայ բեմի աշխատակիցներից» . 21 29
Պ. Աբելեանից Ալեքսանդր 20 —
Պ. Աբեանից Կարապետ 10 —
Պ. Մատինեանից Նիկ. 9 — 454 57

Բ) ՏՈԿՈՍԱԲԵՐ ԹՂԹԵՐՈՎ

I-4⁰/₀ Պետական բենտա № 3161/₆, (առ 1-ն մարտ 1908 կտր.) նոմին արժեք 100 ռ. = 73 50
I—II փոխառ. խաղատոմս № 17775/₄₄ (առ 1 սեպտ. 1907 կտրոն) 250 — 323 50

II Պ. Մելիք-Այվազեանից ստացած

Ընտիր զրամատիքական գրուածներին պրեմիա տալու 250 — 1028 07
ԳՈՒՄԱՐ Ռուբլի 8695 13

Մ. ԶԱԲԱՐ

Մ. ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ

Յ Ա Ն Կ

1858—1908 (գեկուցում), Լ. Բաղայան	5
Հ. Դ. Ը. ընդհանուր ժողովը (28, I. 1908)	14
Յոթելեանական հանդիսաւոր ներկայացում	17
Յարգանք Գարրիէլ Սունդուկեանցին	26
Յովհաննէս Աբելեան	27
Հայ թատրոնի անցեալը, Գ. Վանցեան	32
Տխուր էջեր	34
Պ. Պօռեան	35
Գ. Պետրոսեան	37
Սաթ. Չմշկեան	38
Օր. Քնարիկ	40
Մեր թատրոնի շուրջը, Մ. Ջալալ	48
1907—1908	55
Մրձանակաբաշխութեան Յանձնաժողովի արձանագրութիւն	57
Հ. Դ. Ը. մրցանակները (կանոններ)	59
Արձանագրութիւններ Հ. Դ. Ը. ընդհ. ժողովներին	67
Սեփական թատրոն, Մ. Ջալալ	72
Մուրացան	74
Հ. Դ. Ը. հաշիւներ	82
Դերասան. ընկերութեան հաշիւ (սեզոնի 1907/8)	
Յայտարարութիւններ	



Бр. ЧИЛИНГАРОВЫ
 Жоловухскій просп. подъ гост. Оріактъ.
 ПОСТОЯННО БОЛЬШОЙ ВЫБОРЪ:
 брилліантовыхъ, золотыхъ и серебряныхъ вещей.
 СТОЛОВОЕ СЕРЕБРО.
Часы лучшихъ фабрикъ.
 Всевозможныя изящныя заграничныя и
 русскія издѣлія.

Заказы и починка брилліантовыхъ, золотыхъ вещей и часовъ. Граверныя работы.

ЦѢНЫ УМѢРЕННЫЯ

ԶԻՆԻՆԳԱՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Գօլօվինսկի պրօպէկտ, Օրիակտ հիւրանոցի տակ.

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՐՈՒՍՏ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱՂԱՄԱՆԴԵԱՅ, ՈՍԿԵԱՅ ԵՒ ԱՐԾԱԹԷ ԶԱՐԴԵՐ.

ՃԱՇԻ ԵՒ ԹԷՅԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՆԵՐ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ ՅԱՅՏՆԻ ՖԱԲՐԻԿԱՆԵՐԻՑ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԵՒ ՌՈՒՍԼԱՆԻ ԲԱԶՄԱՏԵԱՆԿ ՇՔԵՂ ԻՐԵՐ

Ընդունւում են պատուէրներ և նորոգութիւններ բրդեղանոէ (աղամանդեայ), ոսկեայ զարդերի և ժամացոյցների: Փորագրութիւն զանազան տեսակի:

ԳՆԵՐԸ ՄԱՏՁԵԼԻ ԵՆ

КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО

Торговли Аптекарскими Товарами
въ тифлисѣ

отдѣленія въ гг. БАКУ и БАТУМѢ.

Розничные магазины: 1) на Эриванской площади и 2) на Михайловскомъ проспектѣ; СКЛАДЪ: Евангуловская ул. соб. д.

Большой выборъ всевозможныхъ принадлежностей для туалета и парфюмеріи; театральныя гримировки, румяна, бѣлила, карандаши для бровей и пр. Краски для волосъ и приборы для ногтей.

КОСМЕТИКА ЛУЧШИХЪ ЗАГРАНИЧНЫХЪ И РУССКИХЪ ФИРМЪ

Конфеты, лепешки и пр. противъ охриплости.

РОССІЙСКОЕ

Транспортное и Страховое Общество 1844 г.

Срочная Товаро-Пассажирск. Крымско-Кавказская линія

СТРАХОВАНІЕ

грузовъ, морское и сухопутное.

СТРАХОВАНІЕ отъ огня имуществъ движимыхъ и
недвижимыхъ.

ПРІЕМЪ ГРУЗОВЪ ДЛЯ ОТПРАВКИ ВО ВСѢ ГОРОДА

Тифлисская контора помѣщается на Дворцовой улицѣ, въ домѣ
Сараджева.



ՀՀ Ազգային գրադարան
NL0306531

6915

H 5-66a